ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎՐԵԺ ԿԻՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՇԻՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Արարատ Վարդանյան

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ – 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն
……3
Գլուխառաջին
Բարեգործական ընկերությունների և բարերարների գործունեությունը Շուշի քաղաքի շենացման գործում……16
Գլուխերկրորդ
Շուշիի Բարեգործական ընկերությունների և բարերարների կրթամշակութային գործունեությունը ……58
2.1. Շուշեցի բարերարների գործունեությունը կրթական ոլորտում……58
2.2.Բարեգործական ընկերությունների և բարերարների մշակութային գործունեությունը ……96
Եզրակացություն
……112
Հավելված……115
Օգտագործված սկզբնաղբյուրների, գրականության և մամուլի ցանկ …… 124

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Բարեգործություն» երևույթը ծնունդ է առել դեռևս հնագույն շրջանում և տարբեր ժամանակներում դրսևորվել է տարբեր եղանակներով՝ կոչվելով մեկենասություն, գթասրտություն, հովանավորություն, աջակցություն և, ի վերջո, բարեգործություն: Բարեգործության ձևերից են կարիքավորներին և կարոտյալներին նյութական կամ դրամական միջոցներ հատկացնելը, անհատների նվիրատվությունները, տարբեր նախագծերի ու ծրագրերի ֆինանսավորումը, կրթական, առողջապահական զանազան դրամաշնորհների սահմանումը և այլն:

Հայ իրականության մեջ բարեգործությունը նույնպես վաղ ավանդույթներ ունի: Այդ առումով անվարան կարելի է փաստել, որ բարեգործությունն ի սկզբանե եղել է հայ մարդու էության անբաժան մասը: Հոգևոր-կրթական և բարեգործական ընդգրկուն գործունեությամբ աչքի են ընկել հայոց թագավորները, թագուհիները, իշխանները, հոգևոր առաջնորդները: «Բարեգործությունը, - գրում է Լեոն, - ինչպես գիտենք քրիստոնեությունից չի ծնվել: Նա գալիս է անհիշելի ժամանակներից»[1]:

Պետականության անկումից հետո՝ արդեն նոր ժամանակներում, հատկապես հայ վաճառականության ձևավորումից և կայացումից հետո, բարերարությունը դարձավ հայ մեծահարուստների գործունեության դրսևորման գրեթե պարտադիր պայմաններից մեկը, նրանց ուղեկիցը: Վաճառական-գործարար խավը ձգտում էր հասարակության մեջ զբաղեցնել կամ լրացնել այն տեղն ու դիրքը, որ դատարկվել էր պետականության բացակայության արդյունքում, իսկ դրա համար նախ և առաջ անհրաժեշտ էր աչքի ընկնել հենց բարերարությամբ: Միաժամանակ, եկամտի մի մասն օգտագործելով բարեգործության նպատակով՝ նրանք այդպիսով հասարակության չունևոր և զրկյալ խավերի առջև յուրահատուկ արդարացում էին ակնկալում իրենց ֆինանսա-առևտրական գործունեության

[1] Լեո, Երկերի ժողովածու, հ. Ա, Եր., 1966, էջ 451:

նկատմամբ: Այդ առումով բարերարությունը հայազգի մեծահարուստների գործունեության անկյունաքարն էր:

Բարեգործական կազմակերպությունները և անհատ բարերարները, սոցիալական ապահովության ոչ պետական համակարգի նշանակալից մասը լինելով, բնակչության սոցիալական ապահովության և օգնության հիմնական գործառույթներ էին կատարում՝ անգամ այդ ոլորտում պետական մարմինների բացթողումները լրացնելով: Մյուս կողմից, նրանք իրավամբ հնարավորինս արտահայտում էին հանրության զգալի մասի շահերը, պահանջմունքները և արժեքները:

Իրենց հերթին ցարական իշխանությունները՝ տեղական, նահանգային, երկրամասային, ընդհանուր առմամբ լոյալ էին վերաբերվում բարեգործական կազմակերպություններին և բարերարներին՝ նաև հաշվի առնելով, որ նրանք էապես թեթևացնում են իրենց գործը և որոշակի հանրային ծախսերից ազատում: Այդ առումով Շուշիի հայության ղեկավարությունը՝ օգտվելով ռուսական պետության մեջ սկսված որոշ ազատականացումից, ձեռնամուխ եղավ ժողովրդի կյանքի ուսումնակրթական ոլորտի բարելավմանը: Միաժամանակ, Շուշիում բարեգործության՝ թե՛ կազմակերպչական և թե՛ անհատական, թերի կողմերից էին ֆինանսական անկայունությունը և համակարգված չգործելը, ինչն ազդում էր նրանց գործունեության որակի ու արդյունքների վրա:

Արցախի հոգևոր կյանքում կարևոր դերակատարում է ունեցել Շուշին՝ որպես ուսումնակրթական և մշակութային կենտրոն: Դպրոցների դերը Շուշիի հասարակական կյանքում անժխտելի է, և այդ տեսակետից առաջնության պատիվը պատկանում է Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցին: Թեմականի տեսուչները XIX դարի երկրորդ կեսին մեծ մասամբ Եվրոպայի և Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացած գործիչներ էին, որոնք Շուշի էին բերում նոր, առաջադիմական գաղափարներ և հասարակական կյանքի առաջընթացին ծառայեցնում: Շուշիի հայությունն Արևելյան Հայաստանում առաջինը լուրջ ուշադրություն դարձրեց աղջիկների կրթության գործին: Շուշիի բոլոր ուսումնական հաստատությունները

բացվում և պահվում էին հոգևորականների ու առանձին մեծահարուստների բարեգործությունների շնորհիվ:

Եկեղեցաշինությունը հայ իրականության մեջ իրականացվել է հիմնականում նվիրատվությամբ: Այս գործին միշտ էլ ակտիվորեն մասնակցել են հասարակության բոլոր խավերը՝ շինականից մինչև թագավոր և կաթողիկոս: Արդեն XIX դարից սկսած՝ որպես այդպիսիք սկսում են հանդես գալ բարերարները, և նրանց շարքում՝ առավել ակտիվ դերակատարություն ունեցան հենց շուշեցիները, որոնց եկեղեցաշեն գործունեության արդյունք են մասնավորապես Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ, Ագուլեցոց և Մեղրեցոց եկեղեցիները:

Բարեգործական առավել կենտրոնացված գործունեություն են ծավալել հայկական բարեգործական կազմակերպությունները, որոնք նպատակ են ունեցել լուծելու հայության առջև ծառացած կարևորագույն խնդիրները, համախմբելու աշխարհասփյուռ հայության ուժերը, ճիշտ օգտագործելու հայ բարեգործ մեծահարուստների ֆինանսական ու նյութական ներդրումները, դրանք կենտրոնացնելու և նպատակաուղղելու հօգուտ հայապահպանության, գաղութներում հիմնելու դպրոցներ, գրադարաններ, կառուցելու եկեղեցիներ, հրատարակելու պարբերականներ ու գրքեր, բացելու հիվանդանոցներ, աղքատախնամ տներ և այլն:

Շուշեցիները ևս չէին կարող անմասն մնալ նման բնույթի կազմակերպչական աշխատանքներից: Նման կառույցներից առավել ակտիվ գործունեություն է ծավալել Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի տեղական մասնաճյուղը, ինչը պայմանավորված էր քաղաքի հասարակական և սոցիալ-տնտեսական պահանջներով ու կարիքներով: Մասնաճյուղը հետապնդել է ոչ միայն բարեգործական, այլև կրթամշակութային նպատակներ, ինչը դրսևորվում էր թե՛ աղքատախնամ գործունեությամբ և թե՛ կրթության գործին օժանդակելու մեջ:

Անշուշտ, պետք է միանշանակ փաստել, որ Արցախում գրահրատարակչության և պարբերական մամուլի զարգացումը պայմանավորված էր Շուշիի՝ արդյունաբերական,

արհեստագործական և առևտրական կենտրոն դառնալով: Բնականաբար, տնտեսական ենթակառուցվածքների զարգացումը պետք է հանգեցներ նշյալ ոլորտների զարթոնքին, ինչն էապես պայմանավորված էր նաև շուշեցի բարերարների գործունեությամբ: Այդ ամենի ցայտուն վկայությունն արդեն 1827 թ. Շուշիում տպարանի բացումն էր, որն Արևելյան Հայաստանում Էջմիածնից հետո երկրորդն էր:

Շուշիում գրահրատարակչության գործի զարգացումը պայմանավորված էր Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանի հայրենանվեր բարերարությամբ: Հետազոտվող ժամանակաշրջանում Շուշիում հրատարակվել են կրթական, գրական, կրոնական, ծիսական, քերականական, ուսուցողական, թարգմանական, բնագիտական, ճանաչողական ուղղվածության գրքեր, դասագրքեր, համաշխարհային գրականության դասականների ստեղծագործություններ:

Նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է նորահայտ արխիվային փաստաթղթերի, տպագիր սկզբնաղբյուրների, պարբերական մամուլի և պատմագիտական գրականության հիմքի վրա ուսումնասիրել և լուսաբանել բարեգործական կազմակերպությունների և բարերարների ազգանվեր գործունեությունը Շուշիում սոցիալ-տնտեսական, կրթամշակութային բնագավառներում XIX դարի երկրորդ կեսին-XX դարի առաջին երկու տասնամյակներում: Տվյալ չհետազոտված հիմնահարցն էլ դարձել է մեր հետազոտության առարկան, որի ուսումնասիրությունն ունի արդիական նշանակություն:

Ուսումնասիրությամբ փորձել ենք լուսաբանել հետևյալ խնդիրները:

1.Ցույց տալ Շուշիից դուրս բնակվող, բայց ծնունդով շուշեցի բարերարների կատարած գործունեությունը:

2.Ներկայացնել բարերարների գործունեությունը որպես արդի ժամանակաշրջանում հայության կյանքում բարեգործության վերազարթոնքի համար օրինակելի ուղենիշ լինելու տեսանկյունից:

3.Հանգամանորեն լուսաբանել տվյալ ժամանակահատվածում բարեգործական ընկերությունների և բարերարների ազգանվեր

գործունեությունը, որոնք մեծապես նպաստել են Շուշի քաղաքի սոցիալ-տնտեսական, մշակութային ոլորտների զարգացմանը:

4. Ընդգծել, որ Շուշի քաղաքի մշակույթի բնագավառում ձեռք բերված նկատվող հաջողությունները առաջին հերթին արդյունք էին դպրոցական կյանքի կազմակերպման:

5. Ցույց տալ շուշեցի եկեղեցական, գործարար և մտավորական անվանի գործիչների ունեցած անգնահատելի վաստակն ինչպես բարեգործության, այնպես էլ քաղաքի ու Արցախի ընդհանուր բարգավաճման ասպարեզում:

6. Շուշիի օրինակով բացահայտել և գնահատել հայ ժողովրդի կյանքում բարեգործության ունեցած էական նշանակությունը և դերակատարությունը:

Ժամանակագրական շրջանակները: Ժամանակագրական առումով հետազոտությունն ընդգրկում է շուրջ 70 տարվա պատմություն՝ XIX դարի երկրորդ կեսից մինչև XX դարի երկրորդ տասնամյակի ավարտն ընկած ժամանակաշրջանը, ավելի հստակ՝ 1850-1920 թվականները:

Մեթոդաբանական հիմքը: Թեմայի ուսումնասիրման համար հիմք է ընդունվել հետազոտության և պատմահամեմատական ուսումնասիրման մեթոդաբանությունը: Ուսումնասիրության փաստական հիմքը կազմում են վավերագրերը՝ համեմատության ու համադրության սկզբունքի կիրառմամբ:

Գիտական նշանակությունը և արդիականությունը: Խորհրդային ամբողջատիրության պայմաններում արգելք էր դրված հայ ժողովրդի պատմության շատ հիմնահարցերի լուսաբանման վրա, իսկ մի մասն էլ լուսաբանվել է մակերեսորեն:

ԽՍՀՄ փլուզումը, խորհրդային ամբողջատիրության խորտակումը, XX դարի վերջին քառորդում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները՝ հայոց երկու անկախ պետականությունների վերածնունդը, նոր խնդիրներ առաջադրեցին հայ պատմաբաններին:

Չնայած Արցախի և նրա կենտրոն Շուշիի պատմության մասին գրվել են արժեքավոր մենագրություններ և աշխատություններ, բազմաթիվ հոդվածներ, սակայն հետազոտողների տեսադաշտից դուրս են մնացել շատ հիմնախնդիրներ, մասնավորապես բարեգործական

ընկերությունների և բարերարների սոցիալ-տնտեսական, կրթամշակութային ազգանվեր գործունեությունը Շուշիում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի առաջին քսանամյակին:

Ատենախոսության մեջ լուսաբանվում է հայ պատմագիտության ցայսօր ուսումնասիրության կարոտ, արդիական և գիտաքաղաքական կարևորություն ունեցող այնպիսի թեմա, ինչպիսին բարերարների գործունեությունն է Շուշիում: Այն առավել կարևորվում է ներկա ժամանակաշրջանում, քանի որ այսօր ադրբեջանական պատմագրության մեջ գոյություն ունի այն կարծիքը, թե Արցախում հայերը հայտնվել են XIX դարի քսանական թվականների վերջերին: Ուստի աշխատանքի արդիականությունը այս տեսակետից նույնպես կարևորում ենք՝ ցույց տալով, որ հայերը Արցախի բնիկ տերերն են և մինչ այդ արդեն ունեին զարգացած մշակույթ:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ բարեգործության երևույթը խոր հետք և ավանդույթներ ունի թե՛ հայության կյանքում ընդհանրապես և թե՛ Շուշիի պարագայում մասնավորապես, և այս ամենը՝ ներկայումս վերածնունդ ապրող նորօրյա բարեգործության պայմաններում:

Բարեգործության ուսումնասիրությունը և նրա օբյեկտիվ գնահատումն առավել հատուկ այժմեականություն է ստանում և կարևորվում ոչ միայն պատմական հիշողության վերականգնման, ազգային հպարտության ըստ արժանվույն գնահատման, այլև անցյալի հսկայական փորձի վերարժևորման միջոցով այն ներկա իրականության պայմաններում կիրառելիության տեսանկյունից: Մանավանդ, երբ հաշվի ենք առնում մասնավորապես ԼՂՀ-ում բարեգործության նկատմամբ հարաճուն հետաքրքրությունը, ծավալումը և հասարակության մեջ բարերարների հեղինակության ու ազդեցության կարևորումը: Այժմ վաղուց հասունացել է հասարակության սոցիալական ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Բարեգործությունը հասարակության բարոյական և հոգևոր մաքրման ու կատարելագործման պարտադիր պայման համարելով՝ անհրաժեշտ է ձևավորել բարեգործության հասարակական-պետական

համակարգ, ինչի համար պարտավոր ենք իմանալ առաջին հերթին անցյալի բարերարների հայրենանվեր գործունեությունը:

Գիտական նորույթը և գործնական նշանակությունը: Հայ պատմագիտության համար հասարակության կյանքում նշանակալից դեր խաղացած և իրենց գործունեությամբ պատմական իրադարձությունների ընթացքի վրա որոշակի ազդեցություն ունեցած երևույթների և անհատների գործունեության ուսումնասիրումը կարևոր նշանակություն ունի: Արժևորում ենք անվանի շուշեցի բարերարների՝ Թավադյանի, Ղուկասյանների, Անդրեաս Խանդանիրյանցի, Մահտեսի Անդրեաս Գյանջումյանցի, Թամիրյանց Թադեոսի և այլոց գործունեության լուսաբանումը: Բարեգործական կազմակերպությունների՝ որպես հասարակության կարևորագույն կառույցի, և բարերարների՝ որպես հասարակության ունևոր և հարեհաս խավի, ձևավորման և զարգացման պատմության ուսումնասիրումը մեծ նշանակություն ունի. այն հնարավորություն է տալիս պարզելու հասարակության այդ գործուն մասի վերաբերմունքը, ովքեր իրենց պարտքն էին համարում զբաղվել բարեգործությամբ:

Իրավամբ հենց այդպիսին է բարեգործական կազմակերպությունների և բարերարների պարագան Շուշիում: Նրանց գործունեության փոխկապակցված ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում Արցախի պատմության քննարկվող ժամանակաշրջանը ներկայացնելու ամբողջության մեջ և տալու ճշմարիտ պատկերը:

Ատենախոսությունը գիտատեսականից զատ ունի նաև ճանաչողական և գործնական նշանակություն: Նորաստեղծ ՀՀ և ԼՂՀ պետական ու հասարակական մարմինների և կառույցների համար ժամանակի շուշեցի բարերարների հայրենանվեր գործունեությունը կարող է օրինակ ծառայել պետականության ամրապնդման, Արցախյան պատերազմի ընթացքում ավերված հայկական բնակավայրերի և առաջին հերթին Արցախի պատմամշակութային մայրաքաղաք Շուշիի վերականգնման ուղղությամբ կատարվող աշխատանքներում: Այս պարագան վերաբերում է նաև բարեգործության՝ որպես հատուկ սոցիալական գործունեություն

և հասարակությունն ու պետությունն հարաբերակցության պատմական կողմերի ընկալմանն ու արդի պայմաններում կիրառմանը:

Գիտական նորույթի առումով կարևորում ենք հատկապես ֆ. 7 (Երևանի թեմի հայոց եկեղեցական-ծխական դպրոցների տեսուչ), ֆ. 27 (Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն), ֆ. 28 (Կովկասի Հայոց բարեգործական ընկերություն), ֆ. 48 (Երևանի Հայոց թեմական վարչություն), ֆ. 319 (Դադյան Խաչիկ), ֆ. 332 (Աղանյան Գյուտ) և այլ ֆոնդերից քաղված նյութերի օգտագործումը:

Ատենախոսության եզրակացությունները կարող են օգտակար լինել պատմագիտական աշխատությունների, ձեռնարկների, հայոց պատմություն և քաղաքագիտություն առարկաների դասավանդման ժամանակ: Դրանք միաժամանակ կարող են օգտագործվել երիտասարդ սերնդի պետական մտածողության և ազգային ոգու զարգացման գործում:

Սկզբնաղբյուրների տեսությունն: Օգտագործված սկզբնաղբյուրները կարելի է բաժանել չորս խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են արխիվային սկզբնաղբյուրները.

թեմայի վերաբերյալ հարուստ և արժեքավոր նյութեր են պահպանվել Հայաստանի ազգային արխիվի տարբեր ֆոնդերում (7, 27, 28, 48, 56, 57, 200, 227, 239, 307, 319, 322, 545, 1262), հատկապես՝ Էջմիածնի Սուրբ Լուսավորչական Սինոդի, Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվանի, Կովկասի հայոց բարեգործական ընկերության, Բաքվի հայոց մարդասիրական ընկերության, «Մշակ» թերթի խմբագրության, Խաչիկ Դադյանի ֆոնդերի արժեքավոր վավերագրերում: Որոշակի նյութեր են գտնվել նաև ՀՀ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվի Համբարձում Առաքելյանի (թ. 796, 797, 1272) ու Բագրատ Նավասարդյանի (թ. 355, II բաժին) ֆոնդերից:

Երկրորդ խմբի մեջ մտնում են տպագիր սկզբնաղբյուրները. բարեգործական կազմակերպությունների կանոնադրություններ[2], ուսումնական հաստատությունների կազմակերպչական-կանոնադրական[3] և ֆինանսական[4] փաստաթղթերը, Շուշիի

[2] Տե՛ս Կանոնադրութիւն Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, Թիֆլիս, 1881, 1895, 1908:

[3] Տե՛ս Կանոնադրութիւն Շուշուայ հոգեւոր դպրոցի, Շուշի, 1894: Կանոններ Շուշուայ հայոց թեմական դպրանոցի հոգաբարձական ընտրութեան համար, Շուշի, 1899: Կարգ Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրանոցի 75-ամեայ յոբելեանական

գրադարանի գրացուցակները[5], արխիվային փաստաթղթերի ժողովածուները[6], Մ. Թաղիադյանի[7] և Ս. Մանդինյանի[8] երկերը:

Երրորդ խմբի մեջ մտնում են Շուշիում գրատպության ու պարբերական մամուլի պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցող՝ Գարեգին Զարբհանալյանի[9], Արսեն Ղազիկյանի[10], Գարեգին Լևոնյանի[11], Հովհաննես Պետրոսյանի[12], Հայկ Դավթյանի[13] աշխատությունները, հայ պարբերական մամուլի մատենագիտությունները[14]:

Չորրորդ խմբի մեջ մտնում է ուսումնասիրվող ժամանակաշրջանի պարբերական մամուլը՝ թերթեր[15] և ամսագրեր[16]՝ «Ապառաժ», «Արձագանք», «Արցախ», «Հորիզոն», «Ղարաբաղ», «Մեղու Հայաստանի», «Մշակ», «Նեցուկ», «Նոր կյանք», «Փայլակ», «Ազգագրական հանդես», «Արարատ», «Գործ», «Լումա», «Կռունկ», «Կռունկ Հայոց աշխարհի», «Հասկ», «Տարազ»: Թեմայի

տօնակատարութեան, Շուշի, 1913: Կարգադրութիւն Ղարաբաղու Սուրբ տիրամայր Մարիամու օրիորդաց ուսումնարանի, Շուշի, 1864: Ղարաբաղի Հայոց հոգեւոր թեմական դպրանոցի 75-ամեակը, Շուշի, 1913: Ղարաբաղու տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացուիլը, Շուշի, 1864: Յիշատակարան Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրանոցի, Շուշի, 1901:

[4] Տե՛ս Համառօտ հաշիւ մտից և ծախուց թեմական դպրանոցի հայոց Շուշուայ վասն 1890-1891 և 1892 ամաց, Շուշի, 1893: Համառօտ հաշիւ մտից եւ ծախուց Շուշու «Ս. Մարիամեան» հայոց օրիորդաց եկեղեցական-ծխական երկդասեան ուսումնարանի վասն 1894-95 դպրոցական ամի, Շուշի, 1895: Հաշիւ Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրանոցի հոգաբարձութեան 1889-1890 ուստարուայ համար, Շուշի, 1890: Հաշուեցուցակ Ղարաբաղու Հայոց ազգային դպրոցաց վասն 1875, 1880 ամաց, Շուշի, 1881:

[5] Տե՛ս Գրացուցակ Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Շուշու գրադարանի, Շուշի, 1891, 1894: Գրացուցակ Շուշուայ հասարակաց ժողովարանի գրադարանի, Շուշի, 1910:

[6] Տե՛ս Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.): Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Թ, Եր., 2001:

[7] Տե՛ս Թաղիադեան Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. Ա, Կալկաթա, 1847:

[8] Տե՛ս Մանդինեան Ս., Դպրոցական սահմանադրութիւն, Թիֆլիս, 1875: Համառօտ մանկավարժութիւն, Թիֆլիս, 1878: Հայելի դաստիարակութեան տղայոց, Թիֆլիս, 1859: Մանկավարժական տարակուսանքներ մեր մէջ, Թիֆլիս, 1875:

[9] Տե՛ս Զարբհանալեան Գ., Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, 1883:

[10] Տե՛ս Ղազիկեան Ա., Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, հ. Ա, պրակ Ա-Բ, Վենետիկ, 1909, 1911, հ. Բ, պրակ Գ, Վենետիկ, 1912:

[11] Տե՛ս Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը, Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934): Մատենագիտություն: Եր., 1934: Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958:

[12] Տե՛ս Պետրոսյան Հ., Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, հ. 1-3, Եր., 1954-1957:

[13] Տե՛ս Դավթյան Հ., Հայ գիրքը 1801-1850 թվականներին, Եր, 1967:

[14] Տե՛ս Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), Եր., 1970:

[15] Տե՛ս «Ապառաժ», «Արձագանք», «Արցախ», «Հորիզոն», «Ղարաբաղ», «Մեղու Հայաստանի», «Մշակ», «Նեցուկ», «Նոր կյանք», «Փայլակ»:

[16] Տե՛ս «Ազգագրական հանդես», «Արարատ», «Գործ», «Լումա», «Կռունկ», «Կռունկ Հայոց աշխարհի», «Հասկ», «Տարազ»:

ուսումնասիրության համար կարևոր աղբյուրներ են նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», «Էջմիածին», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» հանդեսները:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսության թեման մինչ այժմ ամբողջությամբ առանձին պատմագիտական ուսումնասիրության առարկա չի դարձել: Թեմայի համար օգտակար են եղել Շուշիի պատմության վերաբերյալ ընդհանուր բնույթի աշխատությունները, որոնցում արտացոլված են հետազոտության թեմային առնչվող որոշ հարցեր[17]:

Հետազոտության համար իրենց տեսամեթոդական հարցադրումներով օգտակար են եղել վերջին տարիներին Ռուսաստանում հրատարակված ուսումնասիրությունները[18] և ատենախոսությունները[19]:

Շուշիում դպրոցաշինության և ուսումնակրթական համակարգի զարգացման և մշակութային կյանքի զարթոնքի համալիր պատկերացման տեսանկյունից արժեքավոր են Մ. Սանթրոսյանի[20], Վ. Երկանյանի[21], Ս. Խուդոյանի[22], Գ. Հարությունյանի[23], Ս. Ավագյանի[24],

---

[17] Տե՛ս Աբրահամյան Հ., Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-33), Էջմիածին, 2009: Բակուր, Շուշի բերդաքաղաքը, Եր., 2000: Հարությունյան Հր., Շուշի, Եր., 2002: Հարությունյան Հր., Ղարիբյան Ի., Շուշի, Եր., 2008: Մկրտչյան Ծ., Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային հուշարձանները, Եր., 1985: Մկրտչյան Ծ., Դավթյան Ծ., Շուշի, Եր., 2008: Շուշիի ֆենոմենը, «Աշխատանքային տետրեր», Եր., 2013, հմ. 1-2: Պետրոսով Ս., Շուշի, Եր., 2003: Սարգսյան Սլ., Շուշի, Եր., 2007: Սևյան Վլ., Շուշի, Եր., 1991: Տեր-Գասպարյան Ռ., Շուշի, Եր., 1993: Мкртчян Ш., Давтян Ш, Шуши,- Е., 1997.

[18] Տե՛ս Власов П., Благотворительность и милосердие в России.- М., 2001. Соколов А., Благотворительность в России механизм взаимодействия общества и государства.- СПБ, 2006.

[19] Տե՛ս օրինակ Вантеева Н., Общественное призрение на Ставрополье и Кубани.- Ставрополь, 2000. Горбунова Е., Благотворительность в России и ее роль в общественно- культурной жизни на рубеже XIX-XX вв.- М., 1996. Дьячков С., Благотворительные общественные организации российской провинции во второй половине XIX - начале XX веков.- Ставрополь, 2005. Оспищева Л., История благотворительных организаций Кубани.- Майкоп, 2000. Павлова И., Становление и развитие общественной благотворительности в Ставропольской губернии.- Пятигорск, 2004. Пашенцев Д., Благотворительная деятельность Русской Православной Церкви во второй половине XIX - начале XX века.- М., 1995. Покотилова Т., Благотворительность в социальной истории дореволюционной России.- М., 1998. Рылова Н., Благотворительность на Дону во второй половине XIX начале XX вв.- Ростов-на-Дону, 2004. Ульянова Г., Благотворительность в Российской империи.- М., 2006. Хлякин О., Благотворительность как общественное явление.- Красноярск, 2004.

[20] Տե՛ս Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Եր., 1964:

[21] Տե՛ս Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905 թթ.), Եր., 1970: Հայկական մշակույթը 1800-1917թթ., Եր., 1982:

[22] Տե՛ս Խուդոյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., 1987:

[23] Տե՛ս Հարությունյան Գ., Արևելահայ դպրոցն ու մանկավարժական միտքը 19-րդ դարի 50-60-ական թվականներին, Եր., 1979: Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում, Ստ., 2001: Արցախի թեմի լուսավորիչները, Ստ., 2002:

Ա. Ավանեսյանի և Գ. Հարությունյանի[25], Մ. Գ. Հարությունյանի[26], Վ. Բալայանի[27], Հ. Աբրահամյանի[28] աշխատությունները:

Ա. Ավանեսյանը և Գ. Հարությունյանը ուսումնասիրել են Արցախի կրթական համակարգի ամբողջական պատմությունը, արխիվային հարուստ նյութերի, սկզբնաղբյուրների և ժամանակակիցների հուշերի վերլուծությամբ հետազոտել դրա ձևավորման և զարգացման ուղղությունները:

Մ. Գ. Հարությունյանը լուսաբանել է Արցախում մշակույթի զարգացման փուլերն ու առանձնահատկությունները, ցույց տվել այդ գործում սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոնների, հասարակական կազմակերպությունների դերն ու նշանակությունը, արցախցի գործիչների լուսավորչական և կրթական գործունեությունը:

Մեծածավալ աշխատանք է կատարել Վ. Բալայանը ամբողջությամբ ներկայացնելով Արցախի պատմությունը, այդ թվում նաև անդրադառնալով Շուշիի կյանքի բոլոր ոլորտներին: Վերջերս լույս տեսած նրա «Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում» աշխատանքը առավել մանրակրկիտ տեղեկություններ է հաղորդում Շուշիի պատմության վերաբերյալ ներառելով Ք.ա. առաջին հազարամյակից մինչև մեր օրերը: Սակայն աշխատանքի մեջ քիչ են մեզ հետաքրքրող թեմայի վերաբերյալ տեղեկությունները:

Պատմաբան Հ. Աբրահամյանը, որը արխիվային ու տվյալ շրջանի պարբերական մամուլի նյութերի հիման վրա մի շարք աշխատություններով և հոդվածներով փորձել է վեր հանել Արցախի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքը: Հ.

---

[24] Տե՛ս Ավագյան Ս., Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Եր., 1982: Արցախը հայ մշակույթի կարևորագույն օջախ, Եր., 1991: Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Եր., 1989:

[25] Տե՛ս Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. Ա, Ստ., 2014: Տե՛ս նաև Ավանեսյան Ա., Արցախի գիտակրթական համակարգ. կայացման ընթացք, զարգացման միտումներ, Ստ., 2011:

[26] Տե՛ս Հարությունյան Մ. Գ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստ., 2010:

[27] Տե՛ս Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստ., 2012: Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Եր. 2017:

[28] Տե՛ս Աբրահամյան Հ., Արցախը 18-19-րդ դարերում, Եր., 2015: Նույնի Շուշիի համայնապատկերը, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու», Ստ., 2013:

Աբրահամյանի աշխատանքները շատկարևոր են Արցախի և Շուշիի XVIII-XX դարերի պատմության ուսումնասիրման համար:

Մեր աշխատանքի համար կարևոր նշանակություն են ունեցել բարեգործական կազմակերպությունների[29] և շուշեցի մանկավարժների[30] գործունեության, Շուշիի դպրոցական կյանքի պատմության[31] վերաբերյալ աշխատությունները:

Շուշիում հրատարակված պարբերական մամուլի պատմության ուսումնասիրության տեսանկյունից կարևոր նշանակություն են ունեցել Ա. Կարինյանի[32], Մ. Մխիթարյանի[33], Ս. Ավագյանի[34], Մ. Ա. Հարությունյանի[35] աշխատությունները:

Ս. Ավագյանը ուսումնասիրել է Շուշիում հրատարակչական գործի սկզբնավորումը, տպագիր օրգանների ստեղծումը, նրանց խաղացած դերը, հրատարակիչների և առանձին հրապարակախոսների աչքի ընկնող գործունեությունը: Տարաբնույթ փաստերի, արխիվային վավերագրերի ու պարբերական մամուլի միջոցով նա ներկայացրել է Արցախի մամուլի ամբողջական պատմությունը: Ս.

---

[29]Տե՛ս Գալստեան Ա., Պատմական համառօտ տեսութիւն Բագուայ Հայոց մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունէութեան, Բագու, 1891: Լէօ, Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911: Բեհբուդյան Ս., Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը, ԲՀԱ, 1967, հմ. 1, էջ 228-232: Հակոբյան Ռ., Կովկասի Հայոց բարեգործական ընկերության հիմնադրումը, «Ակունք», Եր., 2013, հմ. 3, էջ 31-41: Միրզոյան Է., Բաքվի Հայ Բարեգործական ընկերության պատմությունից, «Էջ միածին», 2013, հմ. Բ, էջ 77-84

[30] Տե՛ս Էդիլեան Գ., Սեդրակ Մանդինեան, Թիֆլիս, 1916: Դանիելյան Ա., Սեդրակ Մանդինյան, Եր., 1964: Հարությունյան Ն., Առաքել Բահաթրյան, Եր., 1992: Ծավարշյան Ս., Բահաթրյանը մանկավարժ, Եր., 1956:

[31] Տե՛ս Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914: Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Շուշիի ռեալականը, Եր., 2001: Արցախի դպրոցները հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Եր., 2005, Շուշիի ռեալական ուսումնարանի հիմնադրման 120-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Ստ., 2001: Арутюнян Г., Просвещения и школа в Шуши как фактор национально-культурного возрождения Восточной Армении:- Շուշիի ֆենոմենը: «Աշխատանքային տետրեր», 2013, հմ. 1-2, էջ 103-119:

[32] Տե՛ս Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1-2, Եր., 1956, 1960:

[33] Տե՛ս Մխիթարյան Մ., 19-րդ դարի 2-րդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Եր., 1976:

[34] Տե՛ս Ավագյան Ս., Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից, Եր., 1969: Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Եր., 1989:

[35]Տե՛ս Հարությունյան Մ. Ա., Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009 թթ.), Ստ., 2010: Էջեր Արցախի պարբերական մամուլի պատմագրությունից, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու», Ստ., 2010, հմ. 1, էջ 23-33: Арутюнян М., Издательское дело и периодика в Шуши как фактор развития армянской общественно-политической и научной мысли.– Շուշիի ֆենոմենը: «Աշխատանքային տետրեր», 2013, հմ. 1-2, էջ 65-80:

Ավագյանը նշել է ուսումնասիրողների առջև առկա երկու դժվարություն. «Առաջին՝ չի պահպանվել Շուշու հարուստ արխիվը, և երկրորդ՝ գործ ենք ունեցել մինչխորհրդային շրջանի արխիվային փաստաթղթերի հետ, որոնցից շատերը կա՛մ չեն պահպանվել, կա՛մ էլ գտնվում են մեզ անհայտ առանձին անձանց մոտ»[36]: Նա միաժամանակ առաջին անգամ կազմել է նաև «Ղարաբաղում լույս տեսած պարբերական մամուլի մատենագիտությունը (1874-1920)»[37]:

Մեր Հարությունյանն իր աշխատության մեջ[38] ներկայացրել է Արցախի պարբերական մամուլի ամբողջական ու ամփոփ պատմությունը սկզբնավորումից մինչև մեր օրերը՝ կազմելով նաև 1874-2009 թթ. Արցախում հրատարակված պարբերական մամուլի մատենագիտությունը:

Այսպիսով՝ Շուշիում բարեգործությանը մասնակցում էին սոցիալական տարբեր խավեր՝ հասարակության մեջ ազդեցիկ դիրք զբաղեցնող ազնվականներ, հոգևորականներ, վաճառականներ, սակայն գաղափարական նախաձեռնությունը հիմնականում պատկանում էր մտավորականությանը: Հատկանշական պետք է համարել բարեգործության բնագավառում շուշեցի հայուհիների ակտիվ դերակատարությունը:

Ավելի քան 100 տարվա հեռավորությունից Շուշիում բարերարների գործունեության գիտական ուսումնասիրության հրատապ անհրաժեշտություն է զգացվում՝ համապատասխան հետևություններ անելու, նոր քաղաքական, սոցիալական, բարեսիրական ծրագրեր մշակելու համար հիմքեր նախապատրաստելու ու նաև՝ սխալներից խուսափելու առումով: Կարծում ենք, որ մեր ատենախոսությունն իր համեստ ներդրումը կունենա և օգտակար կլինի ինչպես հայության, այնպես էլ՝ Շուշիի մերօրյա վերածնունդին:

---

[36] Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), էջ 15:
[37] Նույն տեղում, էջ 278-280:
[38] Տե՛ս Հարությունյան Մ. Ա., Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009 թթ.), Ստ., 2010:

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

XVIII դարի վերջն ու XIX դարի սկիզբը՝ շուրջ մեկ քառասնամյակ, փոթորկոտ վայրիվերումների մի շրջան էր, երբ վերջնականապես պետք էր լուծվեր Անդրկովկասում Ռուսաց կայսրության հաստատման հարցը: Սկսվում է արցախահայության ազատագրական պայքարի և Ռուսաստանին միացման եզրափակիչ փուլը:

Ռուս-պարսկական օրեցօր խորացող հակասությունները շուտով վերաճեցին 1804-1813 թթ. պատերազմի: Սկսված ռուս-պարսկական պատերազմում հայերը ցուցաբերեցին անօրինակ նվիրվածություն և խիզախություն:

Նապոլեոն Բոնապարտի դեմ հայրենական պատերազմում (1812թ.) հաղթած ռուսական զորքը վերստին ուղղվեց դեպի հարավ, և հայ ժողովրդի ջանադիր մասնակցությամբ ռուսական զենքի հաղթանակներն ամբողջականացվեցին 1813 թ. հոկտեմբերի 12-ին՝ Գյուլիստանի հաշտության պայմանագրով: Այն ստորագրում են Վրաստանում և Կովկասում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ռտիշչևը և Պարսկաստանի արքունիքի գաղտնի խորհրդական Միրզա Աբդուլ Հասան խանը[39]: Ըստ այդ պայմանագրի՝ ռուս-պարսկական սահման է ճանաչվում Արաքս գետը: Պարսկաստանը ճանաչում է Դաղստանի ու Արևելյան Վրաստանի, ինչպես և Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խանությունների միացումը Ռուսաստանին: Ըստ պայմանագրի երկրորդ կետի՝ այս տարածքների հետ միասին Պարսկաստանը հրաժարվում էր նաև Արևելյան Հայաստանի՝ Ղարաբաղի, Լոռու, Փամբակի, Շամշադինի, Զանգեզուրի և Շորագյալի գավառներից: Պարսկաստանը զրկվում է Կասպից ծովում նավատորմ ունենալու իրավունքից:

Անկախ նրանից, թե ցարական իշխանություններն այդ նվաճումներով Անդրկովկասում ինչ նպատակներ էին հետապնդում,

[39] Աբրահամյան Հ., Արցախը 18-19-րդ դարերում, Եր., 2015, էջ 152:

այն համապատասխանում էր Ղարաբաղի հայության ազատագրական ձգտումներին:

Արցախ-Ղարաբաղը և մյուս հայկական շրջանները Ռուսաստանին միացնելով՝ լուծվում էր դրանց բնակչությանը ֆիզիկական բնաջնջումից փրկելու հարցը: Մինչդեռ դա անհնար էր պատկերացնել պարսկական, առավել ևս թուրքական տիրապետության պայմաններում:

Արցախի տնտեսական կյանքի զարգացման վրա դրական ազդեցություն ունեցավ Ռուսաստանին միացումը: Ղարաբաղի մելիքները վերջնականապես հնարավորություն էին ստացել իրենց ենթակաների հետ վերադառնալու հայրենիք: 1820-ական թվականներին Անդրկովկասում գեներալ Երմոլովի իշխանության շրջանում գեներալ Մադաթովը բավականին աշխատանք է կատարել մանավանդ տնտեսության զարգացման ուղղությամբ: Նա զբաղվել է ճանապարհների բարեկարգմամբ: Նրա հանձնարարությամբ 1823-1825թթ. վերանորոգվում է Ասկերան-Շուշի ճանապարհը: Նրա աջակցությամբ կառուցվել է նաև Ելիզավետպոլ-Ասկերան ճանապարհը[40]: Կենտրոնական բոլոր ճանապարհների վրա կառուցվել են պահակակետեր և փոստային կայաններ: Նա Շուշիի հայերին համոզել է կամուրջներ կառուցել Թարթառ և Խաչեն գետերի վրա:

Պատահական չէ, որ մտավորականության և առևտրական մեծահարուստ ընտանիքների մի մասը հանգրվանեց հայոց աշխարհի ապահով այս անկյունում՝ Շուշիում: Նույնիսկ հայոց կաթողիկոս Եփրեմը, Երևանի սարդարի հետապնդումներից խույս տալով, ապաստանել էր Ղարաբաղում[41]:

Ցարական կառավարությունը իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք շատ թե քիչ աշխուժացրին տնտեսական կյանքը: Արցախում Ռուսաստանի տիրապետության մեկ դարը Շուշիի ծաղկման ու բարգավաճման շրջան էր: Այն պայմանավորված էր նաև արևելահայկական այլևայլ գավառների բնակչության՝ այնտեղ կատարված ներհոսքով[42]:

---

[40] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 207:
[41] Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստ., 2012, էջ 31:
[42] Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, Եր., 1994, էջ 184:

1822թ. վերացվում է իր գոյության կարճատև շրջանում Ղարաբաղի առաջընթացը խոչընդոտած և բոլոր առումներով հետադիմական խանությունը, ինչին հետևում է Շուշի բերդաքաղաքի կրթամշակութային բուռն վերելքը՝ այն դարձնելով Արևելյան Հայաստանի, ինչու չէ, նաև Կովկասյան տարածաշրջանի մշակութային խոշոր կենտրոններից մեկը: 1823թ. Շուշին դառնում է գավառի կենտրոն[43]: Այն իր աշխարհագրական դիրքով և բնական պայմաններով յուրահատուկ տեղ է գրավում Անդրկովկասում[44]: Նա նաև առևտրի խոշոր կենտրոն էր: 1830-ական թվականների սկզբից՝ Արցախի թեմի աթոռանիստ դարձած Շուշին ոչ միայն գավառի վարչական, այլև տնտեսական ու մշակութային կենտրոնն էր, որն աչքի էր ընկնում իր կառույցներով, եկեղեցիներով, տպարանով, ուսումնական հաստատություններով, արդյունաբերական ձեռնարկություններով, արհեստանոցներով[45]:

Շուշիի զարգացման կարևոր խնդիրներից մեկն էլ քաղաքի ինքնավարության հարցն էր, որը պահանջում էր ժողովուրդը: Դրանով կլուծվեին արմատական նշանակության կարևոր հարցեր կրթության, առողջապահության, քաղաքաշինության և բազմաթիվ այլ ոլորտներում: Ժողովրդի պահանջները հաշվի առնելով՝ ցարական իշխանություններն ի վերջո 1892թ. հուլիսի 11-ին ընդունում են քաղաքի ինքնավարության վերաբերյալ կանոնադրություն: Սակայն Շուշիի ինքնավարության իրավունքի իրականացումն անընդհատ ձգձգվում էր, ինչը տեղի ունեցավ միայն 1896թ.: Սա կարևոր հաղթանակ էր քաղաքի բնակչության համար, որովհետև շուտով քաղաքագլուխ նշանակված Կ. Դանիելյանցը սկսում է զբաղվել փողոցները սալահատակելու, խմելու ջրի բաշխման և այլ հարցերով: Շուշեցիները նույնպես կանգնած էին քաղաքային իշխանությունների կողքին և ամեն կերպ փորձում էին օգտակար լինել իրենց հայրենի քաղաքի շենացմանը: Նրանք իրենց միջոցներից կտակում կամ հատկացնում էին Շուշիի քաղաքային վարչությանը: Օրինակ 1884 թ. Սարգիս

[43]Բաղդասարյան Ն., Վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը Ղարաբաղում 1813-1867 թթ., Եր., 2015, էջ 94:
[44]Հարությունյան Մ. Ա., Արցախի պարբերական մամուլի պատմությունից, (1874-2009թ.թ.), Ստ., 2010, էջ 23:
[45] Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 283:

արքեպիսկոպոս Հասան-Զալալյանցը իր կտակած գումարի մի մասը հատկացրել է Շուշիի քաղաքային վարչությանը[46]: Իսկ Էջմիածնի հայոց լուսավորչական սինոդի անդամ Բաբկեն վարդապետի և Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն եպիսկոպոսի՝ Վեհափառին 1913 թ. հունիսի 17-ին ներկայացրած զեկուցագրի համաձայն՝ հանգուցյալ Թավադյանը, կտակատարներ Բոգդան Գասպարյանցի և Համբարձում Առաքելյանի վկայությամբ, Շուշի քաղաքին տարբեր բարեգործական նպատակների համար կտակել է 100.000 ռուբլի գումար[47]:

XVIII դարից մինչև 1920 թվականը Շուշիի բնակչությունը կազմում էին հիմնականում հայերը և շիա դավանության մահմեդականները: 1886 թ. աշխարհագրի (մարդահամար) համաձայն՝ Շուշին բաղկացած էր 5.779 ծխից, որից 478-ը՝ խաներ, մելիքներ, աղալարներ և բեկեր: Հոգևորականները 116-ն էին, 5.185-ը՝ հարկատու ծխերը: Հայ լուսավորչական դավանության էին պատկանում 15.160 հոգի, հոգևորականներ՝ 450 հոգի: Մահմեդականներ՝ 11.595, որից հոգևորական՝ 146 հոգի: Քաղաքի արևելյան կողմում ապրում էր թուրք բնակչությունը, իսկ արևմտյան կողմում՝ հայերը: Շուշիի թուրքերը մեծ մասամբ գաղթել են Թավրիզից, Շուլթից, Շիրվանից, Քերչալու (Գեչրլու), Սաաթլու, Մամայի, Մերտնլու գյուղերից:

1897թ. ռուսաստանյան մարդահամարի տվյալներով բնակչության թվով Ելիզավետպոլի գավառից (162.788) հետո Շուշիի գավառը (138.771) զբաղեցնում էր երկրորդ տեղը, ընդ որում՝ հայերը մեծամասնություն էին կազմում՝ 53,2% կամ 79.953: Բուն Շուշի քաղաքը բնակչության քանակով զիջում էր միայն Թիֆլիսին, Բաքվին և Ելիզավետպոլին: Շուշիի 25.881 բնակչից հայ էին 55,7%-ը կամ 14.420 հոգի[48]:

Քաղաքի արևմտյան կողմը՝ հայաբնակ հատվածը, բաղկացած էր 18 թաղից: Շուշիի հայերը մեծ մասամբ գաղթել են Հին Նախիջևանից, համանուն գավառի Ագուլիս և Մեղրու շրջաններից, Ղազանչի գյուղից, Վարանդայից, Դիզակից, Խաչենից և այլ վայրերից[49]: Գալով

[46] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1553, թ. 43: Մանրամասն նաև տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1898, հմ. 2-3, էջ 382: 1901, հմ. 7, էջ 265: 1902, հմ. 4, էջ 243: 1903, հմ. 4, էջ 248: 1904, հմ. 3, էջ 209:
[47] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1003, թ. 44:
[48] Первая всеобщая перепись населения Российской империи 1897, вып. 1.- СпБ, 1905.
[49] ֆ. 319, ց.1, գ.1, թ. 52 շրջ.:

Շուշի՝ նրանք կազմում են իրենց թաղերը և եկեղեցիներ կառուցում: Հիշյալ քաղաքի եկեղեցիների անուններով բնորոշվում է նրա բնակիչների՝ զանազան վայրերից գաղթած լինելը: Ագուլիսցիներն ու ղազանչեցիները կազմել են Շուշիի նախնական բնակչությունը: Կառուցել էին սրբատաշ կրաքարով եկեղեցիներ՝ Կուսանաց անապատի միանավ, թաղածածկ, եռահարկ զանգակատնով Սբ. Աստվածածին, Ագուլեցոց Սբ. Աստվածածին, Մեղրեցոց Սբ. Աստվածածին եռանավ բազիլիկները, Արցախի թեմի առաջնորդանիստ Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ Մայր տաճարը:

Հետագայում Արցախի զանազան շրջաններից էլ են հայեր գալիս և հաստատվում Շուշիում: Նրանք բնակվում են առանձին թաղամասում, որը կոչվել է «Ներքին թաղ»: Նրանք նույնպես կառուցել են եկեղեցի ու կոչել «Աստվածածնա եկեղեցի»: Այն նաև ունեցել է ուխտատեղի, որը կոչվել է «Քամու խաչ»: Ներքին թաղի բնակիչները, 1840 թ. հարևան թուրքերից նեղվելով, թողնում են իրենց թաղամասը, եկեղեցին, սրբավայրը, գերեզմանատունը և տեղափոխվում են քաղաքի հյուսիսային կողմի բարձունքի վրա բնակություն հաստատելու, կառուցում են նոր եկեղեցի, որը կոչում են «Թազաժամ», իսկ թաղամասը՝ «Վերին թաղ»:

Համաձայն պատմական տվյալների՝ Ագուլեցոց եկեղեցիներ 447 ծուխ, Ղազանչեցոցը՝ 367, իսկ Մեղրեցոց եկեղեցին՝ 102[50]: Համաձայն Արցախի Հայոց թեմի առաջնորդ Աշոտեպիսկոպոսի՝ 1909 թ. օգոստոսի 15-ին կազմած տեղեկագրի՝ Շուշի քաղաքում ապրում էր 15000 մարդ[51]: «Кавказский календарь »-ի 1914 թ. տվյալների համաձայն՝ Շուշին ունեցել է 42 568 շունչ[52], որից՝ 22416 հայեր, 18865 թուրքեր, 1188 ռուսներ և այլք՝ 99 շունչ[53]:

Քաղաքի առաջնահերթ խնդիրներից էր խմելու ջրով ապահովումը, ինչը կթեթևացներ բնակչության հոգսերը: Այդ գործին ձեռնամուխ եղան շուշեցի մեծահարուստները, որպեսզի քաղաքն ունենա կանոնավոր մատակարարվող խմելու ջուր: Մինչ այդ՝ քաղաքին խմելու ջուր էին մատակարարում ջրկիրները, որոնք

[50] Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. Ա, Եր., 2011, էջ 290:
[51] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1851, թ. 2:
[52] Кавказский календарь, 1915 г., Тифлис, с. 212.
[53] Кавказский календарь, 1915 г., сс. 230-231.

կոչվում էին նաև «սուչիներ»: Նրանք ջուր էին բերում քաղաքից դուրս գտնվող սառնորակ, քաղցրահամ աղբյուրներից[54]: Դեռ 1852թ. շուշեցի Անդրեաս Խանդամիրյանցը իր կտակած գումարից 5000 ռուբլի հատկացրել էր քաղաք բերվող ջրի ծախսերի համար[55]: Իսկ 1870թ. շուշեցի Մահտեսի Անդրեաս Գյանջումյանցը իշխանությունից թույլտվություն է ստանում 50 000 ռուբլի ներդրումով աղբյուրների ջրերը խողովակաշարով հասցնել քաղաք: Բայց այդ ծրագիրն անկատար է մնում[56]: 1871 թ. օգոստոսի 18-ին շուշեցիներ Հայրապետ Փիրիյանցի և Աղաջան Դանիելյանցի ջանքերով ու միջոցներով Յաստի-Բուջատեղամասով ջուր հասցվեց Ծուշի[57]: Իսկ 1873թ. քաղաքից 7 վերստ հեռավորությունից ջուրը խողովակաշարով հասցվեց Ծուշի, որը իրականացվեց Խուրշիդ Բանու Նաթավանի, նույն Հայրապետ Փիրիյանցի և Աղաջան Դանիելյանցի միջոցներով[58]: Այս քայլերը որոշակիորեն թեթևացրին բնակչության հոգսերը, սակայն չէին ապահովում Ծուշիի բոլոր բնակիչներին: Դեռևս խմելու ջրի հարցը մնում էր օրախնդիր, մանավանդ, որ օրեցօր աճում էր Ծուշիի բնակչության թիվը:

Այնուհետև Ծուշիի բնակիչ, հասարակությանը հայտնի ու հարգված Թամիրյանց Թադևոսը, որը մեծ հարստության տեր էր, քաղաքից դուրս կառուցել է տալիս մի գործարան, որտեղ պատրաստում էին կավե խողովակներ («թունգա») ու այդ թունգաներով քաղաքից մոտ 15-17 կմ հեռավորության վրա գտնվող առողջարար ու սառնորակ ջուրը բերում քաղաք:

Նա 100 հզ. ռուբլի ոսկի է ներդնում և 1893-1901 թթ. ջրատար կառուցում, որով Բերդաձորի հյուսիսային սահման Սարի Բաբա լեռան փեշերից խմելու ջուր է հասցնում քաղաք: Ջրատարը կառուցելուց հետո քաղաքում կառուցվում են բազմաթիվ աղբյուրներ: Մեծ բարերարի հիշատակին տեղադրվել էր հուշաքար հետևյալ մակագրությամբ. «1893-1901թթ.: Ի յիշատակ յաւէրժական

[54] Կիսիբեկյան Ա., նշվ. աշխ., էջ 287:
[55] Ֆ. 56, ց. 17, գ. 46, թ. 36:
[56] Բալայան Վ., Ծուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Եր., 2017, էջ 328-329:
[57] Տե՛ս Բակուր, Ծուշի բերդաքաղաքը, Եր., 2000, էջ 215:
[58] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 329:

բարութեանց կառուցեալ այս ջրամբար եւ ջրուղին ի Թադէոսէ Բապայեան Թամիրեանց անմահ նուէր Շուշւոյ համայն քաղաքին»[59]: Հատկանշական է, որ այս ջրատարը ժամանակի չափանիշներով բարձրորակ կառույց էր:

Քաղաքն իր շրջակայքի հետ հաղորդակցվում էր երեք ճանապարհով. առաջին խճուղու միջոցով Շուշին կապվում էր Եվլախ կայարանի հետ, որը կոչվում էր Շուշի-Եվլախ խճուղի[60]: 1912թ. որոշվեց դեպի Գանձակ լեռնային ապահով ճանապարհ կառուցել, որի համար հայությունը հանգանակեց 90 000 ռուբլի գումար[61]: 1900-ական թվականներից սկսած՝ քաղաքի բնակչությունը աշխատել է Շուշին Եվլախ կայարանի հետ կապել երկաթգծով: 1907-1908 թթ. շուշեցի հայտնի մեծահարուստ Միրզա Սարուխանյանը սկսում է կառուցել այդ երկաթգիծը, ինչի համար 1910 թ. տեղի ժողովուրդը շնորհակալություն և գոհունակություն է հայտնում բարերարին[62]: Սակայն վերջինիս հաջողվում է միայն հողային աշխատանքները վերջացնել և կառուցել կամուրջները: Քաղաքական անբարենպաստ պայմանները թույլ չեն տալիս ավարտել կառուցումը և քաղաքը երկաթուղագծով կապել կայարանի հետ: Բացի երկու բաժնետիրական տրանսպորտային ընկերությունից՝ Եվլախից Շուշի տեղափոխումը կատարվում էր Ներսես Մարգարի Մելիք-Փաշայանի տրանսպորտային հիմնարկի միջոցով, որը գտնվում էր Եվլախ կայարանում, սակայն նշյալ փոխադրական միջոցներն անբավարար ու անկանոն էին[63]: Երկրորդ ճանապարհը, քաղաքի ներքին դարպասից աստիճանաբար ցածրանալով, հասնում էր պատմական Վարանդայի շրջանը: Երրորդ ճանապարհն էլ սկիզբ էր առնում քաղաքի վերին դարպասից և հասնում մինչև Գորիս: Այն կոչվում էր Շուշի-Գորիս խճուղի, որի շինարարությանը 2.000 ռուբլի է նվիրաբերում շուշեցի բարեգործ Միքայել Արամյանցը[64]:

---

[59] Հարությունյան Հր., Շուշի: Նորահայտնյութեր քաղաքի պատմության մասին, Եր., 2002, էջ 59:
[60] Մանրամասն տե՛ս Շուշի-Գանձակ ճանապարհի համառոտ հաշիւ: Յուլիսի 7-ից 1906 թ. մինչեւ մայիսի 20-ը 1910 թ. Շուշի, 25-ին մայիսի 1910, Շուշի, «Մելքում Բաբաջանյան», 1910, էջ 61:
[61] Բալայան Վ., Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 327:
[62] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 634, թ. 12:
[63] Կիսիբեկյան Ա., Հուշեր, էջ 288-289:
[64] Անթանեսյան Վ., Միքայել Արամյանց, Եր., 2011, էջ 46:

XIX դարի վերջին հայության կյանքում առկա հասարակական և սոցիալ-տնտեսական կարիքներն ու պահանջները ծնունդ տվեցին Կովկասում բարեգործական ընկերություն հիմնելու գաղափարին, որը նպատակ ուներ նյութապես օժանդակելու և լուսավորություն տարածելու հայերի մեջ: Թիֆլիսում բացված՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղը մեծ ներդրում է ունեցել քաղաքի հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացմանը, երիտասարդների համախմբմանը, կրթության զարգացմանը: Այդ իսկ պատճառով նպատակահարմար ենք գտնում ավելի մանրամասն անդրադառնալ ընկերության գործունեությանը:

1881 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում բժշկապետ Բագրատ Նավասարդյանի ջանքերով Արծրունու թատերական դահլիճում գումարվում է Կովկասի հայոց բարեգործական ընկերության[65] ընդհանուր ժողովի առաջին նիստը, որի ժամանակ Բ. Նավասարդյանը հայտնում է, որ «Բարեգործական ընկերութեան կանոնադրութիւնը արժանացաւ Կովկասեան փոխարքայի պաշտոնակատար, Գէնէրալ Ադիւտանտ Իշխան Մէլիքովի հաստատման, 6-ին Յուլիսի 1881ամի»[66]:

Այն նպատակ ուներ «նպաստել լուսավորության տարածելուն հայոց մեջ՝ ռուսաց պետության սահմաններում և նյութապես օգնել նրանց: Եվ ռուսաց պետության սահմաններից դուրս գտնվող հայերին բացի նյութապես օժանդակություն անելուց՝ լուսավորությունն ևս տարածել նոցամեջ»[67]:

Այս հայրենանվեր գործում Բ. Նավասարդյանին աջակցել և աշխատակցել է հայ ժողովրդի նվիրյալ մեկ այլ զավակ՝ դրամատուրգ և հասարակական գործիչ Գաբրիել Սունդուկյանը, ով խմբագրել է ընկերության առաջին կանոնադրությունը[68], այն թարգմանել վրացերեն և հրատարակել[69]: Ի դեպ, մեծ դրամատուրգն ամեն կերպ փորձել է օգտակար լինել ընկերության Շուշիի մասնաճյուղին, որտեղից որպես նվեր ստացել է փառավոր մի

---

[65] Մանրամասն տե՛ս Լէօ, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911: Հակոբյան Ռ., Կովկասի հայոց բարեգործական ընկերության հիմնադրումը, «Ակունք», Եր., 2013, հմ. 3, էջ 31-41:
[66] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 2, թ. 2:
[67] Բեհբուդյան Ս., Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Բանբեր Հայաստանի արխիվների, 1967, հմ. 1, էջ 228:
[68] ֆ. 28, ց. 1, գ. 100, թ. 5:
[69] Նույն տեղում, գ. 101, թ. 93:

ապակյա բաժակ. «Ստացա Ծուշվա տեղական վարչության կողմից ինձ ուղարկած ընծան և կամենալով մի թեթև փոխարինություն անել, ես վստահանում եմ ուղարկել Ձեզ իմ երկերից հարյուր օրինակ՝ նորանից գոյացած արդյունքը հատկացնել հօգուտ ԿՀԲ Ընկերության Ծուշվամասնաճյուղին»[70]:

Մինչ այդ բարեգործական ընկերություն հիմնելու փորձեր եղել են Կոստանդնուպոլսում: 1860 թ. մի խումբ արևմտահայ գրական-հասարակական գործիչներ այնտեղ նախաձեռնել են «Բարեգործական ընկերություն հայոց»-ի կազմակերպումը, որի նպատակը պետք է լիներ հայ ազգի որբ ու չքավոր զավակներին օգնության ձեռք մեկնելը: Սակայն պահանջվող միջոցների բացակայության պատճառով այդ ծրագիրը չի իրագործվել: Այնուհետև «Հյուսիսափայլ»-ի աշխատակից, բժիշկ Դավիթ Ռոստոմյանցի նախաձեռնությամբ 1864 թ. Բաքվում հիմնվում է «Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը»[71], որը «Հյուսիսափայլ»-ի խմբագիր Ստ. Նազարյանի մտահղացումն էր. նա այդ թեմայով հոդվածներ էր զետեղել պարբերականի համարներում: Այդ ընկերությունն ուներ միայն տեղական նշանակություն և սահմանափակ նպատակներ էր հետապնդում[72]:

Կովկասում բարեգործական ընկերություն հիմնելու գաղափարը թելադրված էր հասարակական և սոցիալ-տնտեսական պահանջներով ու կարիքներով: Վերջիններս պայմանավորված էին նաև թուրքական յաթաղանից Կովկասում փրկված արևմտահայ գաղթականների առկայությամբ, աշխատավոր դասի թշվառ ու անապահով վիճակով, հասարակության ոչ զարգացած լինելու իրողությամբ: Ընկերությունը հետապնդում էր ոչ միայն բարեգործական նպատակ, այլ նաև լուսավորական, մշակութային:

Կովկասի Հայոց բարեգործական ընկերության կանոնադրությունը քննության է առնվում 1881 թ. հունվարի 4-ին: Կովկասի փոխարքա իշխան Միխայիլը համաձայնում է հաստատել

[70] Սունդուկյան Գ., ԵԼԺ, հ.3, Եր., 1952, էջ 454:
[71] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 1, թ. 2 շրջ., գ. 35, թ. 183:
[72] Մանրամասն տե՛ս Գալստեան Ա., Պատմական համառօտ տեսութիւն Բագուայ Հայոց մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունէութեան, Բագու, 1891: Միրզոյան Է., Բաքվի Հայ Բարեգործական ընկերության պատմությունից, «Էջմիածին», 2013, հմ. Բ, էջ 77-84:

ընկերության կանոնադրությունը՝ պայմանով, որ այն գործի միայն Կովկասի սահմաններում: Այդ իսկ պատճառով որոշվում է ընկերության գործունեությունը ամփոփել միայն Կովկասի սահմաններում, ուստի ընկերությունը կոչվում է «Հայոց բարեգործական ընկերություն Կովկասում»[73]:

1881 թ. հուլիսի 6-ին փոխարքայի պաշտոնակատար գեներալ-ադյուտանտ իշխան Մելիքովը հաստատում է ընկերության կանոնադրությունը: Կանոնադրությամբ որոշվում են ընկերության անդամակցության երեք կարգավիճակներ՝ պատվավոր, մշտական և գործադիր: Ընկերությունը ընտրում է խորհուրդ: Ըստ կանոնադրության՝ «Ընկերությունն իր գործունեությունը ընդլայնելու համար վայելում է ամեն կառավարչական հաստատությունների և անձանց օրինավոր աջակցությունը»[74]:

Հատկանշական է ընկերության նորակազմ խորհուրդի կանոնադրության 10-րդ կետը, ըստ որի՝ ընկերությունը գավառներում ստեղծելու էր իր մասնաճյուղերը[75]: Առաջին տարում տեղական վարչություններ բացելու թույլտվություն են ստանում Շուշին, Երևանը, Մեծ Ղարաքիլիսան, Ախալցխան, Քարվանսարան, Վաղարշապատը, Դերբենդը, Կարսը, Վլադիկավկազը, Ջալալօղլին, Քութայիսը: Այնուհետև, տեղական վարչություններ բացելու թույլտվություն են ստանում նաև այլ գավառներ[76]:

Բարեգործական ընկերությունն իր հովանու ներքո է վերցնում սովորող չքավոր աշակերտների, գրադարաններ, ընթերցարաններ, ճաշարաններ, բժշկական օգնություն է ցուցաբերում համաճարակների ժամանակ (1892 թ. ամռանը 400 ռուբլի հատկացվում է Շուշիի տեղական վարչությանը՝ գավառում տարածված խոլերայի համաճարակի դեմ միջոցներ ձեռնարկելու նպատակով[77]):

1899 թ. Ռուսաստանի ներքին գործերի մինիստրությունը կարգադրում է փոխել կանոնադրությունը: Նոր կանոնադրությունը հաստատվում է հուլիսի 6-ին[78], որով ընկերությունը զրկվում է

[73] Ֆ. 28, ց. 1, գ. 101, թ. 83-84:
[74] Նույն տեղում, թ. 92:
[75] Նույն տեղում, թ. 81-82:
[76] ՀԱԱ, Ֆ. 28, ց. 1, գ. 28, թ. 1-51: Տե՛ս նաև ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, թ. 355, II բաժին:
[77] Ֆ. 319, ց. 1, գ. 176, թ. 8-9, թ. 10-14 շրջ.:
[78] Ֆ. 1262, ց. 2, գ. 347, թ. 3, գ. 287, թ. 91-99:

բաժանմունքներ ունենալու իրավունքից (բաժանմունքները կարող էին շարունակել իրենց գործունեությունը միայն որպես ինքնուրույն տեղական հայկական բարեգործական ընկերություններ, յուրաքանչյուրի համար պետք է հաստատվեր առանձին կանոնադրություն՝ համապատասխանեցված ընկերության նորահաստատ կանոնադրությանը), և նրա բոլոր 19 բաժանմունքները փակվում են[79]:

Ընկերությունը վերակազմավորվում է «Թիֆլիսի Հայոց բարեգործական ընկերության», սահմանափակվում է նրա գործունեությունը, նրան իրավունք է վերապահվում նյութական օգնություն ցույց տալու միայն այն չքավորներին, ովքեր բնակվում էին Թիֆլիսում և պատկանում հայ լուսավորչական դավանանքին: Ավելին՝ արգելում էր. ա) հայերենի գործածությունը գործավարության և ընդհանուր ժողովների մեջ, բ) դպրոցների, գրադարանների, ընթերցարանների և առհասարակ կրթական-դաստիարակչական հիմնարկությունների պահպանումը, գ) սովորողներին թոշակներ և նպաստներ տալը[80]:

Այս սահմանափակումների հետևանքով ընկերության բազմաթիվ կրթական հաստատություններ դադարում են գոյություն ունենալուց[81]:

Ցարական կառավարության քաղաքականությունն ավելի խիստ ձևեր է ընդունում: 1903 թ. հունիսի 12-ին հրապարակվում է Նիկոլայ 2-րդի՝ հայկական եկեղեցական ունեցվածքը կառավարության տնօրինությանը հանձնելու մասին օրենքը: Այս շրջանում բարեգործական ընկերության վարչությունը աղքատախնամ գործունեությամբ էր զբաղվում և փորձում վերականգնել ընկերության կանոնադրությունը: 1907 թ. վարչությունը խնդրագիր է ներկայացնում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին՝ ընդգծելով, որ «Ամբողջ Կովկասի հայ բնակչությունը փափագում է վերականգնված տեսնել Հայոց բարեգործական ընկերությունը իր նախկին կանոնադրությամբ»[82]:

---

[79] Մի քանի բաժանմունքների փակման մասին մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1262, ց. 2, գ. 287, գ. 347:
[80] Մանրամասն տե՛ս գ. 287, թ.91-99, ֆ. 28, ց. 1, գ. 102, թ. 8:
[81] ֆ. 28, ց. 1, գ. 102, թ. 8:
[82] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 101, թ. 52 շրջ.:

1908 թ. հունվարի 31-ին ընդհանուր ժողովում հաստատվում է նոր մշակված կանոնադրությունը[83]: Վերաստեղծված՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունն իր բազմաթիվ ճյուղերով կրկին սկսում է գործել Կովկասի հայաբնակ վայրերում: Ընկերությունը ծավալում է ընդարձակ դպրոցաշինական գործունեություն, հիմնում գրադարան-ընթերցարան, գրական ֆոնդ, ձեռնամուխ լինում հրատարակչական գործի:

1908 թ. խորհուրդը դիմումներ է ուղարկում Կովկասի և Անդրկովկասի հայաբնակ վայրեր՝ ընկերության ճյուղեր բացելու առաջարկությամբ: Մինչև տարվա վերջը երկրամասի հայաբնակ քաղաքներում և գյուղերում կազմակերպվում են ընկերության 40 մասնաճյուղեր, հետագայում այդ թիվը հասնում է 78-ի[84]:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիները հայ ժողովրդի կյանքում ամենաողբերգականն էին: Պատերազմական դրությունից օգտվելով՝ երիտթուրքերը իրագործեցին ցեղասպանության քաղաքականությունը՝ Արևմտյան Հայաստանը վերածելով սպանդանոցի: Արևմտահայ գաղթականները, թողնելով հայրենի երկիրը, բռնեցին գաղթի ճամփան: Հայ ժողովրդի այս ողբալի դրությունը բարեգործական ընկերության համար նոր խնդիրներ առաջադրեց: Ընկերությանը կից կազմակերպվեց գաղթականներին օգնող Հայկական կենտրոնական կոմիտե, որի մեջ ընդգրկվում են նաև հասարակական-մշակութային այլ հաստատությունների ներկայացուցիչներ, կոմիտեն կազմակերպում է բժշկասանիտարական օգնություն, բացում սննդատու կայաններ, հիվանդանոցներ, դպրոցներ, մանկատներ, հանգանակում միջոցներ ռազմաճակատի համար[85]:

1915 թ. Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը և Հայկական կենտրոնական կոմիտեն միաձուլելու որոշում է կայացվում, որպեսզի գավառներում ավելի կազմակերպված կերպով ծավալվի բազմաճյուղ գործունեությունը: Ստեղծվում են մեկ

---

[83] Նույն տեղում, թ. 3-28: Տե՛ս նաև Կանոնադրութիւն հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, Թիֆլիս,1908: Նախորդները տե՛ս Կանոնադրութիւն հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, Թիֆլիս, 1881: Կանոնադրութիւն հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, Թիֆլիս, 1895:
[84] ֆ. 28, գ. 1, գ. 92:
[85] ՀԱԱ, ֆ. 28, գ. 1, գ.106, թ. 17-32:

ընդհանուր խորհուրդ, դրամարկղ և այլն[86]: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1921 թ. մարտի 2-ին, պետության որոշմամբ ընկերության ամբողջ գույքը համարվում է Հայաստանի սեփականություն[87]:

Ընկերության բացած առաջին մասնաճյուղերից մեկը գտնվում էր Շուշիում, որը իրականացվել էր 1881 թ. դեկտեմբերի 22-ին Ղարաբաղի հոգևոր դպրոցի տեսուչ Համբարձում Առաքելյանի ջանքերով[88]: Նա բարեգործական ընկերության անդամ լինել ցանկացող 26 հոգու հետ միասին հրավիրում է ընդհանուր ժողով և ձեռնարկում տեղական վարչության ընտրություն: Ընդհանուր ժողովի նախագահ է ընտրվում Անդրեաս արքեպիսկոպոսը, ատենադպիր՝ Համբարձում Առաքելյանը: Ժամանակավորապես ընտրվում են վարչության 5 անդամ և 5 փոխանդամ: Ժողովի արձանագրությունն ուղարկվում է Թիֆլիսի Հայոց բարեգործական ընկերության խորհրդին՝ ի վավերացում ընտրության և ի հաստատում Շուշիի մասնաճյուղի[89]:

Հայոց բարեգործական ընկերության՝ Թիֆլիսի խորհրդի նախագահի 1882 թ. մարտի 4-ի հրահանգով Շուշիի մասնաճյուղը հայտարարում է իր գործունեության մեկնարկը, ստանձնում է գործերի ղեկավարությունը: Նախագահ է ընտրվում Հովհաննես Քալանթարյանը, օգնական՝ Ղազարոս Աղայանը, գործավար՝ Համբարձում Առաքելյանը, գանձապահ՝ Դավիթ Ադամյանը[90]: Համաձայն վարչության դիմումի՝ Թիֆլիսի խորհուրդը վերջինիս ղեկավարության շրջանի մեջ է դնում ամբողջ Ղարաբաղի թեմը և Զանգեզուրի գավառը[91]: Ինչպես հայտնի է, բարեգործական ընկերության դրամական միջոցները գոյանում էին գործադիր անդամների անդամավճարներից, նվիրադրամներից, ընկերության օգտին կազմակերպված միջոցառումների ժամանակ հանգանակված գումարներից:

---

[86] Նույն տեղում, գ. 391, թ. 58:
[87] Նույն տեղում, գ. 265, թ. 1:
[88] ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թ. 1272:
[89] ֆ. 28, ց. 1, գ. 1004, թ. 1 շրջ.:
[90] Նույն տեղում, թ. 8 շրջ.:
[91] Նույն տեղում, թ. 16 շրջ.:

1882թ. Պետրոս Ադամյանը և տեղացի դերասանները ներկայացում են տալիս ու ստացված գումարը՝ 221 ռուբլի 65 կոպեկ, տրվում է ՀԲԸ Շուշիի մասնաճյուղին[92]:

Շուշիի մասնաճյուղին հատկացված առաջին դրամագլուխը եղել է շուշեցի Մարկոս Դոլուխանյանցի և նրա մոր՝ Թագուհի Դոլուխանյանցի կողմից հանգուցյալ Եսայի Դոլուխանյանցի հիշատակին նվիրաբերված 500 ռուբլին, որը պետք է պահվեր տեղական վարչության վերահսկողության ներքո, և վարչությունը իրավունք ուներ ծախսել միայն նրատոկոսները (25 ռուբլի)[93]: 1882 թ. ընկերության դրամական միջոցները համալրեցին Մարկոս Դոլուխանյանի նվիրաբերած գումարը (500 ռուբլի), այդ գումարի տոկոսը (25 ռուբլի), Դավիթ Խանդամիրյանի և պրոկուրորի (դատախազ) օգնական Լազինսկու նվիրաբերած գումարները (5-ական ռուբլի), 86 գործադիր անդամների անդամավճարները (5-ական ռուբլի՝ 430 ռուբլի) և ընկերության օգտին տրված ներկայացումից գոյացած գումարը (183 ռուբլի 65 կոպեկ): Մուտքային գումարը կազմում էր 1148 ռուբլի 65 կոպեկ, որից նույն տարվա ընթացքում ծախսվել էր 220 ռուբլի 2 կոպեկ՝ Հադրութի դպրոցին օժանդակելու, նախկին հասարակաց գրատան գրքերը և կահույքը ձեռք բերելու և ընկերության ընթացիկ կարիքների համար[94]:

Ընկերության առաքելությունը ոչ միայն աղքատախնամությունն էր, այլև կրթության գործին օժանդակելը: Ընկերությունը գումարներ էր հատկացնում չքավորների կրթության համար, տուն և վարժապետ վարձելու, անհրաժեշտ դասագրքեր ձեռք բերելու, դպրոցներում ծնողազուրկ երեխաների կրթության համար[95]:

1882 թ. օգոստոսին տեղական վարչությունը դիմեց Թիֆլիսի խորհրդին՝ Շուշիում ընկերության անունով գրատուն-ընթերցարան բացելու խնդրանքով[96]: Գրատուն-ընթերցարանը բացվեց 1888 թ. Ելիզավետպոլի նահանգապետի վկայագրով[97]՝ շուրջ

[92] «Մշակ», հմ. 156, Թիֆլիս, 1882, էջ 2:
[93] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ.1004, թ. 15 շրջ.:
[94] Նույն տեղում, թ. 36 շրջ.:
[95] Նույն տեղում, թ. 45 շրջ.:
[96] Նույն տեղում, թ. 18 շրջ.:
[97] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 269, թ. 10:

վեց տարի խնդրագրեր և միջնորդագրեր ներկայացնելուց հետո[98]: Քաղաքի երիտասարդ ուժերի ջանքերով կազմակերպվում են ներկայացումներ և մանկական երեկոներ, իսկ գոյացած ողջ արդյունքը ծախսվում է գրադարանի համար անհրաժեշտ կահույք և գրքեր ձեռք բերելու վրա[99]:

Շուշիի տեղական վարչության 1885 թ. նոյեմբերի 17-ի ընդհանուր ժողովի ժամանակ վարչության նախագահ է ընտրվում Ն. Աթաբեկյանը[100], ում 1887 թ. մարտի 3-ի ընդհանուր ժողովին կայացած ընտրությամբ փոխարինում է Հ. Առաքելյանը[101]:

1884-1887 թթ. տեղական վարչությունը վարում է շատ անկանոն գործունեություն. անփույթ է եղել գործավարության մեջ՝ կապված մուտք ու ելքի հաշիվների, անօրինական պաշտոնավարությունների, գումարների պահպանման կարգի հետ: Այս անկանոն գործավարությունը վարչության անդամների թվի կտրուկ նվազման պատճառ է հանդիսանում. վարչությունն առաջին տարիներին ուներ 80-85 անդամ, իսկ 1886 թ. անդամների թիվը 14 էր[102]: Բնականաբար, այս բարձիթողի վիճակը տեղի հասարակության շրջանում դժգոհություն է առաջացնում, ինչն ակնհայտ է դառնում նաև այն փաստից, որ 1887 թ. մարտի 3-ին վարչության փոփոխություններից հետո անդամների թիվն արդեն հասնում է 60-ի[103] (որոշ տվյալներով՝ 47-ի[104]):

Կովկասի հայոց բարեգործական ընկերության՝ Շուշիի մասնաճյուղի բացման օրից՝ 1881 թվականից մինչև 1887 թ. մարտը, զանազան անձանց կողմից նվիրատվություններ են կատարվում՝ հօգուտ տեղական վարչության, որոնց ընդհանուր գումարը կազմում է 1.100 ռուբլի: Դեռ 1880-ից Շուշի քաղաքում ավանդույթ է դառնում, ի հիշատակ մերձավոր հանգուցյալների, նվիրել քաղաքի բոլոր դպրոցներին որոշ գումար՝ տարբեր պայմաններով: Շուշիի մասնաճյուղի բացումից հետո որոշ քաղաքացիներ, ցանկանալով, որ իրենց նվիրած գումարների և առաջարկած պայմանների ճշգրիտ

[98] Նույն տեղում, թ. 1 շրջ., 2, 3 շրջ., 4- 6, 7 շրջ., 8 շրջ., 9:
[99] Նույն տեղում, թ. 115 շրջ.
[100] Նույն տեղում, գ.1004, թ. 63-64:
[101] Նույն տեղում, թ. 65 շրջ.:
[102] Նույն տեղում, թ. 69:
[103] Նույն տեղում:
[104] Նույն տեղում, թ. 102, թ. 103 շրջ.:

գործադրության վրա հասարակական կանոնավոր և մշտական վերահսկողություն լինի, իրենց նվիրելիք գումարները հատկացնում էին տեղական վարչությանը՝ այն պայմանով, որ դրանք մնան տեղական վարչության իրավասության ներքո, և դրանց տոկոսը միայն վարչությունը գործադրի քաղաքի հայոց բոլոր դպրոցների չքավոր աշակերտների ուսման վարձը վճարելու համար: Տեղական վարչության փակվելու դեպքում, ըստ նվիրատուների պայմանի, այդ գումարը պետք է հանձնվեր Շուշիի թեմական հոգևոր դպրոցին[105], իսկ նվիրատուներից Բեգլար Դոլուխանյանի և Ավետիս Կարաբեկյանի նվիրաբերած գումարները՝ Մարիամյան օրիորդաց դպրոցին[106]:

Վերոհիշյալ 1.100 ռուբլի գումարին, 1887 թ. մարտի 3-ին գումարված տեղական ընդհանուր ժողովի վճռով, ավելացվում է նաև 1886 թ. նախահաշվից չծախսված 100 ռուբլին, և որոշվում ամբողջ 1.200 ռուբլին համարել անձեռնմխելի գումար ու միայն տոկոսները ծախսել [107]:

Սակայն, ի հեճուկս նվիրատուների, բարեգործական ընկերության Թիֆլիսի խորհուրդը պահանջ է ներկայացնում՝ այդ գումարը կենտրոն ուղարկելու (պահանջը չկատարելու դեպքում խորհուրդը մինչև անգամ սպառնում էր փակել ընկերության մասնաճյուղը)՝ ասելով, որ ընկերության կանոնադրությանը հակառակ է նվերներ ընդունելը, որպիսին է 1.100 ռ. գումարը[108]: Խորհուրդը հայտնում է, որ գումարը պետք է պահի ինքը՝ որպես տեղական մասնաճյուղի սեփականություն, և տոկոսն ամեն տարի ուղարկի վարչություն՝ վերջինիս կողմից՝ ըստ նվիրատուների պահանջների ծախսվելու համար[109]:

1881-1896 թթ. ընթացքում Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի տեղական վարչության նվիրատուների շարքերը համալրել են հետևյալ անձինք. Բեգլարբեկ Դոլուխանյանց՝ 300 ռուբլի՝ ի հիշատակ հանգուցյալ կնոջ՝ Սոֆիա

[105] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ.1004, թ. 83 շրջ.:
[106] Նույն տեղում, գ.1005, թ. 13 շրջ.:
[107] Նույն տեղում, գ.1004, թ. 131 շրջ. - 132:
[108] Նույն տեղում, թ. 132 շրջ.:
[109] Նույն տեղում, գ. 1005, թ. 1:

Դոլուխանյանցի[110], Խանում և Հովհաննես Ադամյաններ (մայր և որդի)՝ ի հիշատակ հանգուցյալ Դավիթ Ադամյանի՝ 300 ռուբլի արժողությամբ 47 հատոր գիրք՝ հօգուտ ընկերության Ծուշիի գրադարան-ընթերցարանի[111], Աննա Ղուկասյան՝ ի հիշատակ հանգուցյալ ամուսնու՝ Թևոս Ղուկասյանի, 200 ռուբլի՝ հօգուտ ընկերության Ծուշիի գրադարան-ընթերցարանի՝ գրքեր գնելու համար[112], Սարգիս Ադամյան՝ ի հիշատակ հանգուցյալ եղբոր՝ Միրզա Ադամյանցի, 100 ռուբլի՝ հօգուտ ընկերության գրադարան-ընթերցարանի՝ գրքեր գնելու համար[113], Հովհաննես Դավթյան Ադամյանց՝ ի հիշատակ հանգուցյալ մոր՝ Խանում Ադամյանցի, 600 ռուբլի՝ հօգուտ ընկերության գրադարան-ընթերցարանի՝ գրքեր գնելու համար[114], Բաբա, Իսաջանբեկ և Անդրեաս-բեկ Թյունիբեկյանցներ՝ ի հիշատակ հանգուցյալ մոր՝ Ամարնան Թյունիբեկյանցի, պետական բանկի 5% տոմս՝ 100 ռուբլի արժողությամբ[115], Եկատերինա Մարտիրոսյան-Կազաչկովա՝ ի հիշատակ հանգուցյալ եղբոր՝ Մկրտիչ Հակոբյան Մարտիրոսյանցի, 300 ռուբլի[116], Խանդամիրյանց՝ 1000 ռուբլի[117]: Ծուշիի մի խումբ երիտասարդներ Ջրօրհնեքի տոնին ժողովել են և ընկերության գրադարանին նվիրել 1891 թ.՝ 247 ռուբլի[118], 1893 թ.՝ 154 ռուբլի[119]: Նվիրատվություններ են կատարել նաև Ավետիս Կարաբեկյանը[120], Հովհաննես Խունյանցը, Սարգիս Խանդամիրյանցը, Մովսես Շահնազարյանցը, Սարգիս Կրասիլնիկյանցը, Իսահակ Թաթոսյանցը[121] և այլք:

Այս գումարների մի մասը, ըստ նվիրատուների ցանկության, հատկացվել է գրադարան-ընթերցարանին՝ գրքեր ձեռք բերելու նպատակով, մի մասն էլ պահվել որպես անձեռնմխելի գումար, որի միայն տոկոսները պետք է օգտագործվեին ներքոնշյալ նպատակների

---

[110] Նույն տեղում, թ. 1 շրջ., 2 շրջ., 30 շրջ.:
[111] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 269, թ. 19 շրջ., թ. 20, թ. 22:
[112] Նույն տեղում, թ. 23 շրջ., 24 շրջ., 25 շրջ., 27 շրջ.:
[113] Նույն տեղում, թ. 32, 33, 36, 37 շրջ.:
[114] Նույն տեղում, թ. 34 շրջ., 38 շրջ.:
[115] Նույն տեղում, գ.1005, թ. 26 շրջ., թ. 27:
[116] Նույն տեղում, թ. 68 շրջ., 70 շրջ., 71-72, 76 շրջ.:
[117] Նույն տեղում, թ. 83-84:
[118] Նույն տեղում, գ. 269, թ. 26 շրջ.:
[119] Նույն տեղում, գ.1005, թ. 32 շրջ.:
[120] Նույն տեղում, թ. 13 շրջ.:
[121] ֆ. 319, ց. 1, գ.175, թ. 8 շրջ., 9, 10 շրջ.:

համար. որդեգիրներ պահելու և ուսման ծախսերը հոգալու, գյուղական ծխական դպրոցներին, հոգևոր դպրոցներին, ռեալական դպրոցին օժանդակելու, ուսումնարանական պիտույքներ հայթայթելու, աշակերտներին նյութապես օժանդակելու, կարիքավոր ընտանիքներին օգնելու, գրքերի և պարբերականների հրատարակության, գրադարան-ընթերցարանում անվճար ընթերցողներ պահելու: Եվ միայն տեղական վարչության փակվելուց հետո այդ «մայր» կոչվող գումարը պետք է տրվեր որպես սեփականություն հոգևոր դպրոցին և Մարիամյան օրիորդաց դպրոցին[122]:

Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր պետի՝ 1897 թ. օգոստոսի 10-ի շրջաբերականով Ելիզավետպոլի նահանգապետը 1900 թ. հունիսի 8-ի գրությամբ ներկայացնում է Շուշիի հայկական բարեգործական ընկերության կանոնադրությունը, որը փոխարինում է Կովկասի հայոց բարեգործական ընկերության՝ Շուշիի տեղական վարչության գործող կանոնադրությանը[123]: Ըստ կանոնադրության ընկերությունը հայ-լուսավորչական դավանանքի՝ Շուշիի բնակիչներին միայն դրամական, նյութական և բժշկասանիտարական օգնություն հատկացնելու նպատակ պետք է հետապնդեր: Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր վարչությունն իրավունք ուներ ցանկացած ժամանակ, երբ ընկերության գործունեությունը կհամարեր ոչ կանոնավոր կամ կանոնադրության խախտում կնկատեր, փակել ընկերությունը: Ընկերության գործունեության դադարեցման դեպքում նրան պատկանող ունեցվածքն ու գույքը պետք է անցնեին տեղական քաղաքային հանրային վարչության տնօրինմանը[124]:

1902 թ. հունվարի 24-ի՝ Ելիզավետպոլի նահանգապետի պաշտոնակատարի՝ Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր վարչությանը ներկայացրած գրության համաձայն՝ Կովկասի հայոց բարեգործական նախկին ընկերության Շուշիի բաժանմունքի լուծարման հետևանքով ընկերությանը պատկանող գրադարան-ընթերցարանն անցնում է տեղական քաղաքային հանրային

[122] «Արձագանք», Թիֆլիս, 1894, հմ. 3, էջ 494: 1899, հմ. 10, էջ 1273:
[123] ՀԱԱ, ֆ. 1262, ց. 2, գ. 287, թ. 121:
[124] Նույն տեղում, թ. 122-133:

վարչության տնօրինության ներքո: Շուշիի դուման որոշում է ընդունում և միջնորդություն ներկայացնում ավանդ ստացած գրքերով բացելու գրադարան-ընթերցարանը, որն էլ բավարարվում է. Բացվում է քաղաքային գրադարան-ընթերցարանը, որի պատասխանատու է ընտրվում պալատական խորհրդական Մելիք-Օսիպովը[125]:

Երբ 1907 թ. արծարծվում էր Կովկասի հայոց բարեգործական ընկերության վերաստեղծման հարցը, առաջինը խոսվում է Շուշիի մասնաճյուղին՝ իբրև ավագ դստեր, օգնության ձեռք մեկնելու և այն վերաբացելու մասին, հատկապես որ անմիջապես կարող էր վերականգնվել գրադարան-ընթերցարանը[126]: Այսպիսով՝ 1908 թ., ի շարս մյուս ճյուղերի, վերաբացվում է նաև Շուշիի մասնաճյուղը:

1900-1911 թթ. ընթացքում Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի տեղական վարչության նվիրատուների շարքերը նվազել են: Սակայն եղել են բարերարներ, ովքեր իրենց կտակից որոշակի գումարներ են հատկացրել ընկերության օգտին: Համաձայն սինոդի կտակների վերաբերյալ 1900թ. գործի, շուշեցի Հովհաննես Գրիգորի Խունունցը իր կտակի 6-րդ կետի գ մասով 150 ռուբլի է կտակել Բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղին գրքերի ձեռքբերման համար[127]: 1911թ. մեկ այլ շուշեցի՝ Թեոդորոս Խաչիյանցը, 1000 ռուբլի է կտակել Շուշիի մասնաճյուղին:

Առաջին համաշխարհային պատերազմի և հայ ժողովրդի ողբերգության՝ Մեծ եղեռնի հետևանքները, բնականաբար, չէին կարող անտարբեր թողնել բարեգործական ընկերությանը, հետևաբար նաև այդ գործունեությանն անմասն չէր Շուշիի տեղական մասնաճյուղը: 1917-1918 թթ. տեղական վարչությունը Հայ գաղթականական կազմակերպության գլխավոր խորհրդի հետ համատեղ մեծ գործունեություն է ծավալում որբերի տեղավորման, նրանց ապրուստի և ուսման հարցերը լուծելու գործում[128]:

---

[125] Նույն տեղում, գ. 347, թ. 266 շրջ.:
[126] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 850, թ. 48-49 շրջ.:
[127] ֆ. 57, ց. 2, գ. 1553, թ. 165-165 շրջ.:
[128] Մանրամասն տե՛ս ֆ. 239, ց. 1, գ. 26:

Կովկասի հայոց բարեգործական ընկերության հայրենանվեր գործունեությունը շարունակվել է մինչև Հայաստանի խորհրդայնացումը:

Եղեռնից փրկված գաղթականներին, որբերին, ռազմաճակատի զինվորներին օգնելու, տեղավորելու, խնամելու գործին անմնացորդ նվիրվեցին շուշեցիները ստեղծելով հասարակական-բարեգործական ընկերություններ՝ «Շուշիի եղբայրական օգնության կոմիտե»-ն, «Նպաստամատույց հանձնաժողով»-ը և «Պատերազմից տուժած զինվորների և նրանց ընտանիքների օգնության ընկերություն»-ը, որոնց հաշվետվությունները տպագրվում էին թերթերում[129]: Նշված բարեգործական հաստատությունները կազմակերպում էին ցերեկույթներ, խնջույք-ճաշեր և ստացված գումարներով հոգում վիրավոր կամավորների ընտանիքների կարիքները:

Շուշիի «Պատերազմից տուժած զինվորների և նրանց ընտանիքների օգնության ընկերություն»-ը միայն 1915թ. մարտ ամսին քաղաքի 162 ընտանիքների շուրջ 11 633 ռուբլի 63 կոպեկ օգնություն է տվել[130]:

«Եղբայրական օգնության կոմիտե»-ի անդամները շրջում էին Արցախի գյուղերով կատարելով հանգանակություններ: Այդ միջոցների մի մասը ուղղարկվում էին ռազմաճակատ, իսկ մնացածով հոգում էին փախստականների կարիքները: Միայն Շուշիում տեղավորվել էին 2000 փախստականներ: 1914թ. «Եղբայրական օգնության կոմիտե»-ի անդամները Արցախից հավաքագրել են 4970 ռուբլի, թիֆլիսաբնակ շուշեցիներից՝ 2000 ռուբլի, որից 1000 ռուբլին փոխանցել են Մայր Աթոռին[131]:

Որբերի խնամքը կազմակերպելու համար 1916թ. օգոստոսին թեմականի փողոցի վրա Ներսես Մելիք Փաշայանի տանը «Եղբայրական օգնության կոմիտե»-ն որբանոց բացեց[132]:

Փաստորեն XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին Շուշիի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքն

---

[129] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 381:
[130] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 381:
[131] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 383-385:
[132] Նույն տեղում, էջ 384:

աշխուժանում ու վերելք էր ապրում հիմնականում բարերարների և բարեգործական ընկերությունների միջոցների, նվիրատվությունների հաշվին: Ռուսական կայսրության ծայրամաս համարվող Արցախը և մասնավորապես Շուշին, անտեսված լինելով պետության կողմից, զարգանալու մեծ հնարավորություններ չուներ, բայց այդ խնդիրն իրենց վրա վերցրին շուշեցի մեծահարուստ առևտրականները, հասարակ քաղաքացիները՝ ամեն ջանք ու եռանդ ներդնելով հայրենի քաղաքի շենացման համար: Այս ամենի արդյունքը այն էր, որ արդեն XX դարի սկզբին Շուշին դարձել էր Անդրկովկասի նշանավոր քաղաքներից մեկը ունենալով սալահատակված փողոցներ, երկհարկանի, եռհարկանի շենքեր, գեղեցիկ եկեղեցիներ,կոյուղի և այլն:

Բայց Շուշիին առանձնակի վեհություն են պարգևում իր եկեղեցիները,որոնք կառուցվել էին հիմնականում հայ նվիրյալ բարերարների միջոցներով:

Հայաստանում եկեղեցիներ սկսել են կառուցել քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց անմիջապես հետո: Հայ ազգային ինքնատիպ ճարտարապետությունն իր կատարելությանն է հասնում եկեղեցաշինության բնագավառում: Եկեղեցաշինությունը Հայաստանում իրականացվել է հիմնականում նվիրատվությամբ: Այս գործին ակտիվորեն մասնակից էին և՛ թագավորները, իշխանները, հոգևորականները, և՛ հասարակ շինականները, քաղաքացիները, որոնք ցուցաբերած առատաձեռնությամբ արտահայտել են իրենց կրոնական ջերմեռանդությունը և գալիք սերունդներին թողել անմոռաց հիշատակ: Այդ մասին են վկայում եկեղեցիների պատերին արված արձանագրությունները, արխիվային վավերագրերը, որոնք ներառում են Սինոդի օրագրություններ, արձանագրություններ, տարաբնույթ գրագրություն:

XVI-XIX դարերում Արցախում եկեղեցիները հիմնականում կառուցվում էին բազիլիկատիպ՝ առանց գմբեթի: Դրանք ունեին համեմատաբար պարզ հորինվածք,կառուցման համար պահանջվում էր քիչ ծախս և ժամանակ: Այս իրողության գլխավոր պատճառը, բնականաբար, տնտեսական ու քաղաքական ծանր դրությունն էր:

Հիշյալ դարերում Արցախում կառուցված հուշարձանների մեջ ընդամենը վեց եկեղեցի է գմբեթավոր, որից հինգը՝ Շուշի քաղաքում: Դրանք են՝ Կուսանաց վանք, Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ, Կանաչ ժամ, Ագուլեցոց, Մեղրեցոց եկեղեցիները:

XIX դարում կազմվել և իրականացվել է Շուշիի կառուցապատման երեք գլխավոր հատակագիծ, իսկ չորրորդը՝ 1912 թ., նախագծել է քաղաքի գլխավոր ճարտարապետ Ա. Ղոնդախսազյանը: Առաջին երեք հատակագծերը կազմելիս քաղաքի ռազմապաշտպանական ամրապնդման, քաղաքաշինական հարցերին է ուշադրություն դարձվել, նաև հաշվի է առնվել քաղաքի աննախադեպաճը[133]:

Հենց այս հատակագծերի իրականացման արդյունքում Շուշին իր քաղաքային ճարտարապետությամբ միանգամայն առանձնանում էր[134]: Նկատի ունենալով այն, որ աշխարհիկ շինությունները նույնպես գերազանցապես բարերարների գործունեության արդյունք էին, տեղին ենք համարում ներկայացնել ծագումով շուշեցի անվանի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի արժեքավոր գնահատականը. «Հետաքրքիր է Շուշի քաղաքը, ուր տները հաճախ գրեթե ճշտորեն կրկնում են ճակատների լուծման միևնույն թեման: Բայց դա բոլորովին չի խանգարել, որ քաղաքը դառնա խիստ կոլորիտային, երփներանգ՝ կրկնություններով հանդերձ, ավելին, այդ կրկնությունները գունախաղ են ստեղծում տների տարբեր բարձրության, ռելիեֆի հարստության, որմնախորշերի ու պատշգամբների բազմազանության, փողոցների անսպասելի դարձերի շնորհիվ: Գնում ես, և հանկարծ դիմացդ բացվում է մի նոր հեռապատկեր, երկրորդը, երրորդը, որոնք, իրենց հերթին, փոփոխվող լուսավորությամբ զարմանալիորեն ճոխացնում են քաղաքի փողոցների ճարտարապետության ծավալների տարածության ներդաշնակությունը»[135]:

Շուշի այցելած Մեսրոպ Թաղիադյանը հայտնում է, որ փայտե եկեղեցիների տեղում քարից կառուցվել են գեղեցիկ

---

[133] Մկրտչյան Ծ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Եր., 1985, էջ 217, 220-221:

[134] Մանրամասն տե՛ս Սարգսյան Մ., Ակնարկներ Շուշիի քաղաքաշինության պատմությունից, Եր., 1996:
Саркисян М., Из истории градостроительства Шуши, Ер.,1996.

[135] Իսրայելյան Ռ., Հոդվածներ, ուսումնասիրություններ, ակնարկներ, Եր., 1982, էջ 130:

ճարտարապետական համալիրներ, երկհարկանի առանձնատներ և հյուրանոցներ, բազմաթիվ խանութներ, հասարակական, մշակութային և կրթական շենքեր: Իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ, ներկայացնելով քաղաքի էթնիկ կառուցվածքը, նկարագրելով 1820-ական թվականներին Շուշիում ծավալված լայնաթափ շինարարությունը՝ նանշում էր, որ տեղի բնակիչները հայերն ու թուրքերն են, հայերը հինգ հարյուր ընտանիք են և ունեն երեք եկեղեցիներ՝ Ագուլեցոց, Ղարաբաղցոց և Ղազանչեցոց մեծ քարե եկեղեցին՝ վերակառուցված Զոհրապ և Մարկոս Թառումյան եղբայրների կողմից. «Ունէին եկեղեցիս երիս, զԱգուլեցւոց, զՂարաբաղցւոց, այլ քարակերտու զմեծ եկեղեցիս ի նորոյ շինեցին յայնժամ երկոքին եղբայրքն Թառումեանք՝ Զոհրաբ և Մարկոս»[136]:

Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին խոշոր չափերի ճարտարապետական հուշարձան է, որի ճակատները երեսպատված են տեղական սրբատաշ կաթնագույն կրաքարով[137]: Այն Շուշիի հպարտությունը և հայկական ամենախոշոր եկեղեցիներից է: Գմբեթը հիմնված է չորս սյուների վրա: Արտաքին ձևերը շքեղ են, զարդաքանդակներ են արված ամենուրեք՝ հատկապես դռների, լուսամուտների կամարների վրա: Արվեստի գեղեցիկ նմուշ է զանգակատան քարաշեն շղթան: Տաճարի հարավային դռան գլխամասում արված արձանագրությունը վկայում է, որ եկեղեցու շինարարությունը սկսվել է 1868 թ.՝ Գևորգ Դ կաթողիկոսի օրոք (այս մասին տեղեկանում ենք նաև Սինոդի օրագրություններից[138]), և ավարտվել 1887 թ.՝ Մակար Ա կաթողիկոսի օրոք, օծվել է 1888 թ. սեպտեմբերի 20-ին: Այն կառուցվել է Նախիջևանի Ղազանչի գյուղից Շուշի գաղթած բնակիչների միջոցներով: Եկեղեցու խորանի ստորին հատվածի հետնամասում արված արձանագրությունից հայտնի է դառնում տաճարը կառուցած ճարտարապետի անունը. «Ընծայեցաւ սբ. պատկերս ի յիշատակ աշխատողի շինուն

[136] Թաղիադեան Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. Ա, էջ 226:
[137] Հասրաթյան Մ., Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու ճարտարապետությունը:- Շուշին հայոց քաղաքակրթության օրրան: Եր., 2007, էջ 278-281:
[138] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, գ. 74, թ. 128 շրջ.:

եկեղեցւոյս Աւետիսի Յարամիշենց եւ ի զօրայնոյն ամենեցոց 1886 ամի: Ճարտարապետ Սիմէոն Տէր Յակոբեանց»:

Դեպի արևմուտք շուշեցի բարերար Աբրահամ Խանդամիրյանցի կառուցած եռահարկ զանգակատունն է՝ հետևյալ արձանագրությամբ. «Յիշատակ է այս զանգակատունս ղազանչեցի հանգուցեալ Գաբրէլի Հովսէփեան Բատիրեանց եւ Ղազանչեցի հանգուցեալ Միտի Մկրտիչ Մարգարեան Խանդամիրեանց ամուսնոց ի վրոյ Բալասանին եւ որդոցն յարուփին եւ Ստեփանին եւ ղազանչեցւոց առհասարակ բոլոր ժողովրդեանն զօր ած ընկալցի ի փառս իւր փրկի հոգւոյ բոլորեցոնց կենդանեաց եւ ննջեցելոց յամին ազգականոցէ եւ փրկչական 1858 ամի»:

Արձանագրությունից պարզ է դառնում, որ զանգակատունը կառուցվել է տասը տարի ավելի շուտ, քան սկսվել է հիշյալ եկեղեցու շինարարությունը: Այս հանգամանքից կարելի է ենթադրել, որ այստեղ եղել է XVIII դարում կառուցված եկեղեցի, որը քանդվել է, և տեղում նորն է կառուցվել: Նման եկեղեցու վերաբերյալ հիշատակել է նաև 1820 թ. Շուշի այցելած Մեսրոպ Թաղիադյանը «Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքում: 1847 թ. Արցախի Հայոց վիճակային կոնսիստորիայի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտի՝ Էջմիածնի Սինոդին ուղղված հայտարարությունը ևս փաստում է, որ Շուշիում կա Սբ. Ամենափրկիչ անունը կրող եկեղեցի, որի գմբեթը խարխուլ վիճակում է, իսկ եկեղեցու տեսքն արդեն վատթարացել է և վերանորոգման կարիք ունի: Առաջնորդը թույլտվություն է խնդրել եկեղեցուն պատկանող 296 ռուբլի արծաթը հատկացնել այդ աշխատանքներին (թեև նշելով, որ այն բավական չէ նշված վերանորոգության համար)[139]:

Շուրջ հինգ տարի տևած՝ Արցախի Հայոց վիճակային կոնսիստորիայի և Էջմիածնի Սինոդի միջև քննարկումների արդյունքում, երբ հինը վերանորոգելու կամ նորը կառուցելու վերաբերյալ կարծիքներ էին հնչում, Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսը վճռում է. «Առ այն զայս մեր խորհուրդք տամք Սինօդին յառաջադրել վիճակաւորի և Անդամոց կոնսիստորի և ամենայն ժողովրդեան Հայոց Շուշվայ քաղաքի, թէ առաւել կասկածելի է

[139] Նույն տեղում, գ. 2145, թ. 1 շրջ.:

առանց համաձայնութեանց ճարտարապետաց կարկատել զխախտութիւն, և ո՛չ էլ դիւրին շինելն զնոր եկեղեցի ծանր ծախուք, որ ևս վնասակար է հասարակութեան, այլ հանճարաւոր խորհրդածութեամբ զմտաւ ածել զի թէ աներկիւղ իցէ ժամասացութիւն 'ի սուրբ Փրկիչ եկեղեցւոյ դարձեալ կառավարիլ այն հին եկեղեցեաւն իւրեանց, իսկ թէ իցէ կասկածելի լաւ է կամ վարձել և կամ շինել 'ի նորոյ զմի բաւականաչափ ժողովրդեան աղօթարան հասարակ՝ թէև ծախուք, մինչև Աստուածային խնամակալութիւն տացէ ժողովրդեան զյաջող միջոց վասն շինելոյ զեկեղեցին առաւել փառաւոր և յաղագս բազմացուցանելոյ զարդիւնսն եկեղեցական վասն հարկաւորացն յաղագս նորոգութեանց անձնական տաճարաց ամենից հոգևորականաց և ժողովրդականաց արանց և կանանց, հարստաց և աղքատաց, ծերոց և տղայոց վասն որոց ամենեցուն մատոյց զանձն իւր միածին որդին Աստուծոյ պատարագ 'հաշտութիւն Աստուծոյ Հօր երկնաւորի ևս 'ի թողութիւն մեղաց մեր ամենեցուն: Յամի ազգական 1302 և Փրկչական 1853 օգոստոսի 1. 'ի Թիֆլիզ: Կաթուղիկոս ամենայն Հայոց Ներսէս»[140]:

Աղա Մահտեսի-Հովհաննես Յարամիշյանցը և Շուշեցի Աբրահամ Խանդամիրյանցը տեղի վիճակային կոնսիստորիային ներկայացնում են հանգուցյալ Բաղդասար միտրոպոլիտի՝ դեռ 1844 թվականից ստացած թույլտվությունը՝ սեփական միջոցներով Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցու քարաշեն զանգակատան կառուցման համար, որը մնացել էր անկատար: Աբրահամ Խանդամիրյանցը և Հովհաննես Բատիրյանցը կրկին ցանկություն են հայտնում հիշյալ գործը ավարտին հասցնել: Յուրաքանչյուրը պատրաստակամություն է հայտնում 1.500 ռուբլի արծաթ հատկացնելու, չբավականացնելու դեպքում՝ Խանդամիրյանցը խոստանում էր լրացնել պակասորդը: Այդ ազգանվեր գործի առթիվ իրենց գոհունակությունն են հայտնում եկեղեցու ծխականները, որոնց շնորհակալագիրը ստորագրությունների և եկեղեցու նախագծի ու ծախսերի նախահաշվի հետ միասին ներկայացվում են Սինոդի տնօրինությանը[141]: Ըստ կոնսիստորիայի՝ հիշյալ կառույցը Զրաբերդցոց կոչվող թաղում՝ Աթոռապատկան հայոց առաջնորդական

[140] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, գ. 74, թ. 26 շրջ.:
[141] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2145, թ. 30 շրջ.:

տան մոտ է գտնվում, որին կից կար Բահաթրյանների կառուցած ջրմուղ աղբյուրը[142]:

1852 թ. դեկտեմբերին Անդրեաս Խանդամիրյանցը կտակում նշում է, որ իր վաղաժամ հանգուցյալ որդի Մնացական Խանդամիրյանցի բաժնից 10.000 ռուբլի արծաթ հատկացնում է որևէ հոգևոր գործի: Նրա մահից հետո՝ 1857 թ. հունիսի 1-ին, կտակը հաստատվում է Ծամախու արքունական պալատում, ըստ որի՝ հանգուցյալ բարերարի կինը և փեսաները՝ Բաբա Բեկլարյանցը և աստիճանավոր Հակոբ Ուռպելյանցը (Օրբելյանց) նշանակվում են շարժական և անշարժ գույքի հոգաբարձուներ[143]:

Անդրեաս Խանդամիրյանցի այրին՝ Մարիամ Գևորգյանը, տեղեկանալով հոգևոր իշխանության մտադրությանը՝ Ծուշիում Արցախի Հայոց վիճակային առաջնորդարանի մերձակայքում նոր քարաշեն եկեղեցի կառուցելու մասին, հայտնում է. «...Ուստի և ես հարկաւոր համարիմ մատուցանել ընդ այսմ Բարձր-Սրբազնութիւն Ձերում զկազմեալ պլանն 'ի հանգուցեալ առնէ իմմէ Անդրէասայ Խանդամիրեանց դեռ 'ի կենդանութիւն իւրում, և խնդրեմ ամենախոնարհաբար առաջարկել զայն, ուր հարկ է, վասն հաստատութեան և ըստ այնմ ձևակերպութեան անփոփոխկամք են ինձ կառուցանել զմտադրեալ ին և եկեղեցին 'ի յիշեալ տեղւոջն»[144]:

1859 թ. Սինոդը Թիֆլիսի շինարարական հանձնաժողովին տրամադրեց ինժեներ ճարտարապետ Ֆրեյլիխի կառուցելիք եկեղեցու նախագիծը, ֆասադը և ծախսերի նախահաշիվը՝ Կովկասի փոխարքայի հաստատմանը ներկայացնելու համար[145]:

Արցախի Հայոց վիճակային կոնսիստորիայի Սինոդին ներկայացված՝ 1866 թ. հայտարարության համաձայն, բարերարի կտակած 10.000 ռուբլի արծաթը, որը պահ էր տրվել Մոսկվայի արքունի գանձատանը, տոկոսների հաշվին դարձել էր 16.000, և հոգաբարձուները շինարարական աշխատանքները սկսելու համար ևս երեք տարի ժամանակ են խնդրում, որպեսզի այդ գումարը հասնի 20.000 ռուբլի արծաթի, նաև նշում են, որ ավելի հարմար նախագիծ

---

[142] Նույն տեղում, գ.3618, թ. 1-2:
[143] Կտակի մասին մանրամասն տե՛ս հավելվածում, փաստաթուղթ N 1:
[144] ֆ. 56, ց. 1, գ.3618, թ. 4-5:
[145] Նույն տեղում, թ. 6-7 շրջ.:

կազմվի եկեղեցու կառուցման համար, որպեսզի այն նման լինի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցուն՝ բայց ավելի մեծ չափերով[146]:

1884 թ. տվյալներով բարերարի կտակած 10.000 ռուբլին տոկոսներով հանդերձ քառապատկվում է՝ դառնում 40.000, որից 20.000 ռուբլին վճռվում է հատկացնել եկեղեցու շինարարությանը, իսկ մնացած 20.000-ը օգտագործել եկեղեցուն կից հայոց հոգևոր օրիորդական ուսումնարան կառուցելու համար[147]: Այդ մասին թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Սագինյանցը հայտարարություն է ներկայացնում Սինոդին, որին ընդառաջելով՝ վերջինս թույլատրում է վերոհիշյալ շինարարությունը[148]:

Շինարարության ընթացքում ծախսվել է մոտ 100 000 ռուբլի գումար, իսկ գմբեթը կառուցվել է Թադևոս Թամիրյանցի նյութական օժանդակությամբ[149]: Եկեղեցու շրջակայքը 1889թ. սալահատակվել էր Հովհաննես Խունյանցի միջոցներով[150]:

Շուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցու կառուցման, ցանկապատման, հետագա գոյության համար քաղաքի մի շարք բնակիչներ իրենց կտակներից նյութական միջոցներ են հատկացրել այդ նպատակով: Այսպես. Էջմիածնի հայոց լուսավորչական սինոդի՝ 1873 թ. կտակների վերաբերյալ գործի համաձայն, շուշեցի Պողոս Գասպարի Ալեքսանյանը Ղազանչեցոց եկեղեցու վերանորոգման համար 1.000 ռուբլի է կտակել՝ պայմանով, որ եկեղեցու երեցփոխն ամեն տարի բանկից ստանա այդ գումարի տոկոսները և իր ու իր հանգուցյալ հարազատների հոգու հանգստության համար տարեկան հինգ անգամ՝ տաղավար տոներին, պատարագ մատուցի: Իսկ Շուշիում գտնվող հայրական տան՝ իրեն պատկանող մասը, այն ժամանակ, երբ կինն ու մայրը այլևս չեն կամենա ապրել այդտեղ, ըստ կտակի, պետք է վաճառվի, գումարը պահվի բանկում, որի տոկոսները Ղազանչեցոց եկեղեցու երեցփոխը պետք է հատկացնի կտակարարի հանգուցյալ հոր կողմից վերակառուցված Շուշիի գավառի Նոր-Շեն գյուղի եկեղեցու քահանաներին իրենց ծառայության ու կտակարարի

---

[146] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ.3618, թ. 13 շրջ.:
[147] Նույն տեղում, գ. 7861, թ. 1 շրջ., 2 շրջ.:
[148] Նույն տեղում, թ. 7 շրջ.:
[149] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 284:
[150] Նույն տեղում:

ծնողների հիշատակին տարեկան հինգ անգամ պատարագ մատուցելու համար[151]:

Համաձայն սինոդի կտակների վերաբերյալ 1900 թ. գործի՝ շուշեցի Հովհաննես Գրիգորի Խունունցը իր կտակի 6-րդ կետի ա մասով Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու գավթի երկաթյա ցանկապատի շինարարության համար կտակել է 200 ռուբլի[152]:

Ղարաբաղի հայոց վիճակային կոնսիստորիային ուղղված՝ Շուշիի բնակիչներ Ջավահիր Աղամալյանց և Աննա Ամբրումյանց քույրերի տեղեկագրի համաձայն՝ իրենց հանգուցյալ քույր Մարգարիտա Ումբրիբեկի Ալեքսանյանցը 1902 թ. կտակ է թողել, որով իր տունը, երկու խաղատոմս՝ առաջին և երկրորդ կարգի, և ինքնագիր ավետարանը Շուշիի Ղազանչեցոց եկեղեցուն է նվիրել: Տունը, ըստ նրա, պետք է իբրև անկելանոց ծառայեր: Բայց որովհետև հանգուցյալը պարտք ուներ, ինչպես նշել է նաև կտակի 5-րդ հոդվածում, ուստի պետք է տունը վարձով տրվեր պարտքը լրացնելու համար, մինչև որ պարտքազերծ լինելով՝ ծառայեց իր նպատակին: Այդ պարտքի գումարը հասնում էր 893 ռուբլի 75 կոպեկի: Նամակագիրները, ներկայացնելով կտակը, խնդրում են. «Նախ՝ կարգադրել յանձնել Ղազանչեցոց եկեղեցւոյ երեցփոխանին օրինական ճանապարհով հաստատել տալու այդ կտակը մինչև օրէնքով սահմանուած մի տարին, երկրորդ՝ ստանալ մեզանից (հեղ.- նամակագիր քույրերի) հանգուցեալի տան կալուածագիրը, աւետարանը և տոմսը և երրորդ՝ կարգադրել վճարելու հանգուցեալի 893 ր. 75 կ. պարտքը, որը մեր կարծիքով աւելի նպատակայարմար է, որ եկեղեցին այժմէն վճարէ այդ պարտքը և ամեն ինչ ստանայ իր կատարեալ կարգադրութեան տակ ըստ կտակին, քան թողնել, որ տարիներ ուշանայ տան վարձով լրացնելու և ով գիտէ ինչ փորձանքի ենթարկելու գրաւ դրած խաղատոմսը»[153]: Ըստ Ղարաբաղի վիճակային կոնսիստորիայի Էջմիածնի սինոդին ներկայացրած հայտարարության՝ խաղատոմսերը ստացվել են[154]:

---

[151] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ.1553, թ. 70-72 շրջ.:
[152] Նույն տեղում, թ. 165-165 շրջ.:
[153] Նույն տեղում, թ. 1193 շրջ.:
[154] Նույն տեղում, թ. 43 շրջ.:

Հաղորդակցության ճանապարհների ինժեներ Խաչատուր Ավետիսի Եարամիշյանցը 1903 թ. Ղազանչեցոց եկեղեցուն իբրև սկզբնական ֆոնդ 1.000 ռուբլի է նվիրել, որի տոկոսները պետք է տրվեին նույն եկեղեցու զառամյալ քահանաներին, ինչը և արվել է:

Շուշեցի Մարգարիտ Մելիք-Շահնազարյանցը 1907 թ. Ղազանչեցոց եկեղեցուն 500 ռուբլի է կտակել, որի տոկոսներով թեմական դպրոցում պետք է որդեգիրներ պահվեին: Դրամը տրվել է եկեղեցուն:

Թազա Հարությունի Միրզայանցը իր կտակելի ունեցվածքից 1 գորգ նվիրել է Ղազանչեցոց եկեղեցուն[155]:

Այսպիսով գալիս ենք այն համոզմանը, որ կտակարարությունը միաժամանակ յուրատեսակ ազգային միաբանության դրսևորում էր: Կտակարարներին թելադրող և պարտադրող չկար, նրանց հորդորում էր սեփական խիղճն ու պատասխանատվության զգացումը, հայրենասիրական պարտքն ու քրիստոնեական հավատը: Կտակելի ունեցվածքի համար սահմանված չափ գոյություն չուներ. յուրաքանչյուրն անում էր իր հնարավորության և ցանկության սահմաններում:

Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին գործել է մինչև 1930 թվականը, մասամբ նորոգվել է 1981-1988 թթ.՝ մշեցի վերականգնող վարպետ Վ. Բաբայանի ջանքերով: 1988 թ. Շուշիի հայերին տեղահանելուց հետո ադրբեջանցիները ջարդել են զանգակատան հրեշտակների խորաքանդակները: 1998 թ. ավարտվել է եկեղեցու զանգակատան նորոգումը, և մեծ հանդիսավորությամբ նույն թվականի հուլիսի 19-ին այն օծվել է որպես Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդանիստ:

Շուշիի Ագուլեցոց քարաշեն եկեղեցին կառուցվել է 1822 թ. մեծահարուստ Թառումյան եղբայրների միջոցներով, ինչի մասին վկայում են արխիվային վավերագրերը. «Յամի Տեառն 1821 Դեկտեմբերի 25. Մինչ դէպ եղև մեզ ելանել 'ի սուրբ Կաթուղիկէ Էջմիածին Մայր Աթոռոյն մերոյ՝ և գալ այսր յԱստուածաշէն Ամուրս Շուշի յայցելութիւն մերազնեայ եկեղեցականաց և ժողովրդականաց, տեսել զպտուղ հաւատոյ ջերմեռանդութեամբ

[155] ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 282, թ. 2-3 շրջ.: ֆ. 57, ց. 2, գ. 1553, թ. 1216 շրջ.:

զարդարեալ Թառումեանց Գերազնիւ Աղայ Զօհրապ ու Գերազնիւ Աղայ Մարկոս և մեր յատուկ երախտաւոր հանգուցեալ Աղայ Բաբայ և Աղայ Յօհանջան չորից համակամ եղբարցն տէր Մատթէոսեան Նախիջևանցի, զհոյակապ Նորաշէն ավագ տաճարս ասիմ քաղաքիս Ծուշուայ, որ յանուն սուրբ Աստուածածնի, արժան համարեցայ թողուլ 'ի սմին Նոր եկեղեցւոջ զայս Նորատիպ վայելուչ սուրբ Ճաշոցս ոսկեզօծ յիշատակ հոգւոյ իմոյ և 'ի նշան քահանայապետական գերառատ սիրոյս: Յամի տեառն 1822 Յունվար ամսոյ քսանին: Կաթուղիկոս ամենայն Հայոց Վշտալի Եփրեմ»[156]:

Մինչև Ղազանչեցոց եկեղեցու կառուցումը Ագուլեցոց եկեղեցին համարվել է քաղաքի ամենամեծ եկեղեցին, որի պատճառով կոչվել է Ավագ եկեղեցի: Ագուլեցոց Սբ. Աստվածածին եկեղեցին գտնվում էր քաղաքի կենտրոնում: Այն կառուցված է եղել չորս սյուների վրա, ունեցել է կլոր սանդուղք-պատվանդան, արտաքինից եղել է ուղղանկյունաձև, ներսից՝ գմբեթավոր կառուցվածքով: Ունեցել է երեք զանգակատուն, որոնցից ամենամեծը եղել է եկեղեցու տանիքի կենտրոնում, մյուսները՝ արևելյան և արևմտյան կողմերում: Ցավոք, այդ զանգակատները չեն պահպանվել:

1850 թ. Էջմիածնի Սինոդի կառավարչական մասից գրություն է ուղարկվում Արցախի Հայոց վիճակային կոնսիստորիային, ըստորի, համաձայն Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի կոնդակի, թույլատրվում է Ագուլեցոց Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցման բարերարներ Զոհրապ և Մարկոս Թառումյանների ժառանգներին, ի հիշատակ և երախտագիտություն իրենց հանգուցյալ ծնողների, եկեղեցու պատին քանդակելու վերոհիշյալ բարերարների անունները[157]:

Ագուլեցոց Սբ. Աստվածածին եկեղեցու վերանորոգման կարիքի վերաբերյալ Արցախի Հայոց վիճակային կոնսիստորիայի հայտարարությանը[158] ընդառաջելով՝ 1861 թ. Սինոդը եկեղեցական գումարներից միջոցներ հատկացրեց դրա համար[159]: Եկեղեցու վերանորոգման կարիք զգացվեց նաև 1880-ական թվականներին: 1888 թ.

---

[156] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2626, թ. 12:
[157] Նույն տեղում, թ. 3-5:
[158] Նույն տեղում, գ. 3826, թ. 9-10:
[159] Նույն տեղում, թ. 11 շրջ.:

տեղի վիճակային կոնսիստորիան Սինոդին է ներկայացնում եկեղեցու ֆիզիկական վիճակը, որում նշվում է, որ. «Փայտեայ ծածկոց եկեղեցւոյն մերոյ Ագուլեաց, որոյ երկարութիւնն է 56 1/2 արշին[160] և լայնութիւնն 31 արշին Ռուսաց, իսպառ հնացեալ և փչացեալ է, այնպէս զի ի տեղալ անձրևաց սուզանին ի ներքո կաթիլքն, և վնասի շինուածոց եկեղեցւոյն: Ըստ խորհրդոյ հմուտ վարպետաց պարտէ փութալ այժմէն շինել զնոր ծածկոց ժեշտեաց, ի վերայ որոյ պահանջին ծախք 2.883 ռուբլի 20 կոպեկ»[161]:

Կոնսիստորիայի դիմումի համաձայն՝ երեսփոխան Միրզաջան Պատվականյանցին իրավունք տրվեց եկեղեցու գումարներից հատկացնել սահմանված գումարը՝ հիշյալ վերանորոգության համար: Ագուլեցոց Սբ. Աստվածածին մայր եկեղեցին կառուցման օրից մինչ նկարագրվող ժամանակահատվածը գմբեթ չի ունեցել: Եվ ահա, Մ. Պատվականյանցը 1888 թ. օգոստոսի 18-ի հայտարարությամբ դիմում է տեղի վիճակային կոնսիստորիային՝ խնդրելով Սինոդին միջնորդություն ներկայացնել, որպեսզի իր սեփական միջոցներով խաչի հետ միասին գմբեթի շինության թույլտվություն ստանա: Կոնսիստորիան նաև խնդրում է հիշյալ շինության ավարտից հետո թույլ տալ արձանագրել գմբեթի վրա բարերարի անունը[162]: Գմբեթի կառուցման թույլտվության հատկացմանը Ելիզավետպոլի նահանգական վարչությունը չի առարկում և պահանջում է փայտյա գմբեթի կառուցման համար նոր նախագիծ ու շինության գլխավոր մասի ամրության վերաբերյալ բացատրություն ներկայացնել՝ հաստատելու համար: Դրանք ներկայացվում են ամիսներ անց՝ հնարավորինս կարճ ժամանակում հաստատելու խնդրանքով[163]:

1865 թ. Շուշի քաղաքի բնակիչ Սարգիս Ավետիսի Թառումյանցը, որը վերաբնակվել էր Նախիջևանի գավառից, վավերացնում է իր կտակը[164], որի 10-րդ կետը վերաբերում էր Շուշիին և նրա պատմամշակութային հուշարձաններին:

---

[160] Արշինը երկարության չափման ռուսական միավոր է, 1 արշինը հավասար է 0,711 մետրի:
[161] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8345, թ. 1:
[162] Նույն տեղում, գ. 8413, թ. 1 շրջ.:
[163] Նույն տեղում, թ. 11-12, 17:
[164] Նույն տեղում, գ. 10192, թ. 15:

Սարգիս Թառումյանցն իր կտակի 10-րդ կետում նշում է. «Անհրաժարելի պարտաւորություն լիցի սիրելի կտակատարացս և Հոգաբարձուաց կենաց իմոյ զկնի մահուան ամուսնոյ իմոյ Սանամին գուն գործել ընդ փոյթ վաճառել զկնի նորա մնացեալ զբոլոր շարժական և անշարժ գոյքն իմ գիտութեամբ երկոտասան պատուելի ժողովրդականաց սուրբ Աստուածածնայ մայր եկեղեցւոյն մերոյ Ագուլեաց Ծուշի քաղաքիս և երեսփոխանի եկեղեցւոյն այնորիկ և զգոյացեալ մայր գումարն դրամոց գրել տալ ամբողջապէս յեկեղեցական տումարին Ագուլեաց եկեղեցւոյ, և ապա յանձնել զայն վկայութեամբ երեսփոխանի այնորիկ յեկեղեցւոյ ի մշտնջենաւոր պահպանութիւն յեկեղեցւոջ անդ յորժամ և արթուն լինել պարտին կտակատարքն իմ և երեցփոխանք ժամանակացն այնոցիկ յաճումն մայր գումարին դրամոց զգոյշ և հաւատարիմ եղանակաւ տալ տոկոսեօք զայն արժանահաւատանձանց և ապա 'ի գոյացեալ տոկոսեաց անտի 'ի գործ տնել ամի ամի անխափան զմի մասն վասն պայծառութեան Ագուլեաց եկեղեցւոյն մերոյ, զմի մասն բաշխել կարի աղքատ ժողովրդականաց եկեղեցւոյն մերոյ, զմի մասն տալ 'ի ժամուց քահանայից եկեղեցւոյն մերոյ, որք և պարտաւոր են ամի ամի յաւուրս հինգ նաւակատեաց տարւոյն շարունակ մատուցանել զմեղաքաւիչ սուրբ պատարագ 'ի փրկութիւն հոգոյ իմոյ և կենակցիս Սանամին, որպէս և ի վեր անդր յիշատակեցի առանց ինչ ձեռնամուխլինելոյ 'ի մայր գումարն»[165]:

1911 թ. սեպտեմբերի 12-ին Թիֆլիսի դատական ատյանում քննվում է Սարգիս Թառումյանցի՝ Ագուլեցոց եկեղեցուն արված կտակի հետ կապված գործը, համաձայն 1910 թ. մայիսի 11-ի Եգոր Թառումյանցի բողոքի՝ ժառանգության իրավունք ստանալու վերաբերյալ: Ըստ վերջինիս և նրա ժառանգների բողոքի՝ կտակարարի կտակի 10-րդ կետի համաձայն, նրա կնոջ մահից անմիջապես հետո պետք է վաճառվեր նրան պատկանող գույքը, և վաճառքից առաջացած գումարը պահ տրվեր դրամատանը, իսկ տոկոսներն օգտագործվեին եկեղեցու բարօրության համար: Ըստ բողոքարկողի՝ կտակատարի կամքը չի կատարվել տասը տարիների ընթացքում, ինչը ենթադրում է, որ նրա

[165] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8345, թ. 17 շրջ.:

կտակը համարվում է անվավեր, և գույքը պետք է անցնի ժառանգներին[166]:

1911 թ. նոյեմբերի 18-ին Ագուլեցոց եկեղեցու կալվածքներին վերաբերող հարցերի շուրջ խորհրդակցելու համար ժողովի են հրավիրվում նույն եկեղեցու երեցփոխ Միքայել Եղիազարյանցը, եկեղեցու կալվածքների խնամատար Գրիգոր Մինասբեգյանցը, եկեղեցու ծխականներից ընտրված անձինք: Ժողովը նախագահում է Խրիստափոր Փերջանյանցը: Ժողովի արձանագրությունից պարզ է դառնում, որ խնամատար Մինասբեգյանցը «համաձայն զապրոդաժնի զապիսին կապված Յովհաննէս Սիմէօնեան Օհանեանցի հետ Մարտի 12-ին 1910 թիւ, որով Ագուլեաց եկեղեցուն պատկանեալ Դարալագեազում գտնուող կալուածները, այն է՝ Այնազուր, Բախջաջուղ և Ղըզըլղըշլաղ, կէս մասը վաճառուած է եղել յիշեալ Օհանեանցին վեց հազար մանէթով, որից առաջօրէն ստացուած է մէկ հազար ռուբլի և մտցրուած է տեղւոյս Փոխադարձ Վարկի Ընկերութիւնը, իսկ մնացեալը պէտք է ստացուէր վերջնական վաճառման թուղթը (կուպչին) հաստատելուց, ուստի նա, Մինասբէգեանցը, անցեալ Հոկտեմբեր ամսոյ 26-ին գնացել է Երևան քաղաքը, որտեղ ստորագրել կուպչին, կալուածները յանձնել Օհանեանցին, ստանալով նրանից կանխիկ մնացեալ հինգ հազար ռուբլի...»: Ըստ այդմ՝ որոշվում է. «Վեց հազար ռուբլի, ինչպէս Ագուլեաց եկեղեցւոյ սեպհականութիւն, մտցնել Շուշւոյ Փոխադարձ Վարկի Ընկերութիւնը, խնամատար Մինասբէգեանցի անուամբ առ այժմս մէկ տարւայ ժամանակաւ այս պայմանով, որ յիշեալ վեց հազար ռուբլի գումարը Մինասբեգեանցը իրաւունք չունի ստանալու առանց Ագուլեաց եկեղեցւոյ երէցփոխի և տասներկու ընտրեալ ծխականների յօժարութեամբ, իսկ այդ գումարի տոկոսը իրաւունք ունենան ստանալու յիշեալ եկեղեցւոյ երէցփոխը և հոգաբարձութիւնը, ու գործադրել հանգուցեալ Սարգիս Թառումեանցի Կտակի համեմատ: Յիշեալ վեց հազար ռուբլին մէկ տարով առ այժմ թողնելու նպատակն է, որ միգուցէ Օհանեանցի կուպչին որևիցէ մի օրինական պատճառաւ չեն հաստատում այն

[166] Նույն տեղում, թ. 83 շրջ.:

ժամանակ Օհանեանցը յետ է ստանում իւր տուած վեց հազար ռուբլին, թողնելով կալուածները եկեղեցուն...»[167]:

Վերոհիշյալ արձանագրության հետ միասին Ագուլեցոց եկեղեցու կալվածքների խնամատար Գր. Մինասբեգյանցը հայտնում էր, որ հիշյալ վաճառքից ստացված 6.000 ռուբլին դրված է դրամատանը՝ հարյուրին վեց տոկոս տոկոսադրույքով և պայմանով, որ այդ գումարն առանց եկեղեցու երեցփոխի և 12 ընտրյալ ծխականների գիտության և համաձայնության, ինքն իրավունք չունի ստանալու, իսկ այդ գումարի տոկոսն ամեն վեց ամսից հետո իրավունք ունի ստանալու Ագուլեցոց եկեղեցու հոգաբարձությունը, և երեցփոխը կարող է գործադրել այն՝ համաձայն հանգուցյալ Սարգիս Թառումյանցի կտակի[168]:

1914 թ. հուլիսի 16-ին Արցախի Հայոց վիճակային կոնսիստորիան հայտնում է Սինոդին, որ, հիմք ընդունելով Սարգիս Թառումյանցի կտակի թիվ 193 գործը, տարբեր գրագրություններն ու Շուշիի Ագուլեցոց Սբ. Աստվածածին եկեղեցու հաշվեմատյանը, վերոհիշյալ կտակի 10-րդ կետը իրագործված է ճշտությամբ[169]: Այս հայտարարության հիման վրա էջմիածնի Սինոդը հաստատում է կոնսիստորիայի հայտարարությունը և հրամայում գործել կտակի համաձայն[170]:

Հասարակ շուշեցիները նույնպես փորձում էին իրենց ներդրումը ունենալ եկեղեցու կառուցման գործում նվիրելով ոչ միայն գումարներ, այլ նաև գույք, ունեցվածք: Նրանք անկախ նրանից ապրում էին Շուշիում թե ոչ, կյանքի վերջին տարիներին կազմում էին կտակ, որից բաժին էին հանում հայրենի քաղաքին:

Շուշեցի Սարգիս Ավետիսի Թառումյանցը Նախիջևանի գավառում գտնվող իր կալվածքը 1865 թ. կտակել է Շուշիի Ագուլյաց եկեղեցուն՝ պայմանով, որ կալվածքը վաճառվի, և դրամագլուխն անձեռնմխելի պահելով, տոկոսն ամեն տարի տրվի նույն եկեղեցուն, աղքատներին և քահանաներին[171]: 1916 թ. Ղարաբաղի հայոց վիճակային կոնսիստորիայի տվյալներով կալվածքը վաճառվել է, և դրամը պահ է

[167] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8345, թ. 62 շրջ.:
[168] Նույն տեղում, թ. 61 շրջ.:
[169] Նույն տեղում, թ. 89:
[170] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 8345, թ. 90-91:
[171] ֆ. 57, ց. 2, գ.1553, թ. 1160 շրջ.-1161, 1162 շրջ.-1163:

տրվել Շուշիի փոխանորդության վարկային ընկերության բանկում, իսկ տոկոսները տրվել են ըստպատկանելության[172]:

Ագուլլյաց սբ. Աստվածածին եկեղեցու միաբան Հովհաննես քահանա Թառումյանցը 1886 թ. իր սեփական տունը, որը գտնվում է Շուշիի Ագուլլյաց եկեղեցու մոտ, նվիրել է հիշյալ եկեղեցուն, և իր մահից հետո կտակատարները պարտավորվել են վաճառել տունը և վաճառքի գումարից 300 ռուբլի հատկացնել հոգևոր դպրոցին, մնացած գումարը բանկում պահել ու տոկոսները տալ միաբան քահանաներին, իսկ տոկոսների կես մասն էլ պետք է հատկացվեր եկեղեցուն, որի քահանաները պարտավոր էին շաբաթը մեկ անգամ՝ ուրբաթ օրերը՝ Զատիկից մինչև Համբարձման տոնը, պատարագ մատուցել՝ կտակարարի և վերջինիս կնոջ հոգու փրկության համար[173]:

Ելիզավետպոլի (Գանձակի) շրջանային դատարանի քաղաքացիական բաժանմունքի 1913 թ. մարտի 26-ի հանրային նիստի ժամանակ, կտակատար Միքայել (Միխայիլ) Գրիգորի Եղիազարյանցի հայցադիմումի համաձայն, լսվել է շուշեցի Թազա Հարությունի Միրզայանցի կտակի հաստատման գործը: 1912 թ. մայիսի 2-ին կազմված կտակով կտակարարն իր ունեցած դրամական և իրեղեն ունեցվածքը կտակել է համաքաղաքացի Միխայիլ Եղիազարյանցին, որն էլ իր մահից հետո այդ ամենը հետևյալ կերպ պետք է տնօրիներ. Շուշիի Ագուլլյաց Սբ. Աստվածածին եկեղեցուն հանգուցյալի հիշատակի համար հատկացվում էր 100 ռուբլի՝ պայմանով, որ գումարը մնա անձեռնմխելի, իսկ տոկոսները հատկացվեն եկեղեցում ամեն տարի հանգուցյալի հոգու հանգստության համար հոգեհանգստի պատարագ մատուցելուն, ապա՝ մնացյալ 370 ռուբլին տրամադրվելու էր նույն եկեղեցու համար քարե կրպակ կառուցելուն, որի ճակատային պատին՝ դռների վերևում, պետք է գրվեր հանգուցյալ կտակարարի անուն-ազգանունը որպես հիշատակ, և պետք է այդ կրպակի եկամուտներով սովորեին Ագուլլյաց եկեղեցու չքավոր ծխականների երեխաները:

Թազա Միրզայանցն նաև 1 գորգ և 1 արծաթյա շերեփ է նվիրում եկեղեցուն, որի վաճառքից ստացված գումարով Ագուլլյաց եկեղեցու համար պետք է պատրաստվեր սկիհ, որի վրա որպես

[172] Նույն տեղում, թ. 43:
[173] Նույն տեղում, թ. 1178-1179:

հիշատակ կգրվեր կտակարարի անունը: Անմիջապես նրա մահից հետո Միխայիլ Եղիազարյանցը պարտավոր էր նշված իրերը հանձնել եկեղեցուն[174]: 1913 թ. դեկտեմբերի 18-ին Ելիզավետպոլի շրջանային դատարանի նախագահի որոշմամբ, որը վավերացվում է դատախազի կնիքով, վերոհիշյալ կտակը հաստատվում է, և կատարման համար հասցեագրվում տեղի նահանգային վարչությանը[175]: Վերջինս որոշում է շրջանային դատարանի դատախազի 1914 թ. հունվարի 3-ի համապատասխան գրությունը հանձնել Էջմիածնի լուսավորչական սինոդի տնօրինությանը[176], որն էլ կարգադրում է Ղարաբաղի կոնսիստորիային կտակի քաղվածքի պատճենը ուղարկել Շուշիի Ագուլյաց եկեղեցու ծխական հոգաբարձությանը՝ հանգուցյալ Թազա Միրզայանցի կտակած գույքը ստանալու համար[177]: Սակայն 1916 թ. փետրվարի 11-ին կոնսիստորիայի կողմից սինոդին ներկայացված հայտարարության համաձայն՝ կտակը լիովին դեռ կատարված չէր[178]:

Այժմ եկեղեցին հիմնահատակ ավերված է: Պահպանվել է հյուսիսային պատի հատվածը, որը խորհրդային տարիներին վերածվել է բնակելի տան մի պատի: Եկեղեցու հիմքերը, ամենայն հավանականությամբ, պահպանվել են տեղում, և հնարավոր է դրանք պեղել ու վերականգնել:

Մեղրեցոց եկեղեցին կառուցվել է գրեթե նույն սկզբունքով, ինչ Ագուլեցոց եկեղեցին, և նույնպես ուշագրավ հուշարձան է: Արձանագրություններում այն նաև կոչվում է «Սբ. Աստվածածին Մեղրեցոց եկեղեցի», որը կառուցվել է 1838թ.՝ Մահտեսի Հախումյանցի ծախսերով: Աղոթասրահն ուղղանկյունաձև մակերես է ունեցել: Զանգակատունը կրկին երեքհարկանի էր: Մեկ այլ՝ փոքր զանգակատուն գտնվում էր եկեղեցու տանիքի կենտրոնում:

Համաձայն Արցախի Հայոց վիճակային կոնսիստորիայի օրագրության՝ 1838 թ. ապրիլի 15-ին Շուշիի քաղաքացի Մահտեսի Բաբա Հախումյանը դիմում է կոնսիստորիային, որի մասին

[174] ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 282, թ. 2-3 շրջ.: ֆ. 57, ց. 2, գ. 1553, թ. 1216 շրջ.:
[175] ֆ. 57, ց. 2, գ. 1553,, թ. 4 շրջ.:
[176] Նույն տեղում, թ. 5-6 շրջ.:
[177] Նույն տեղում, թ. 7 շրջ.:
[178] Նույն տեղում, թ. 44 շրջ.:

գործակալ Տեր Հովհաննես ավագ քահանան հայտնում է. «18 ամիս է՝ որ նա պատրաստեալ է զամենայն հարկաւորեալ պարագայս ո՛չ վասն շինութեան նոր իմն եկեղեցւոյ, այլ՝ վասն նորոգելոյ միայն զհին եկեղեցի Մեղրեցւոց, և որովհետև ժամանակ է արդէն ըսկզբաւորելոյ զշինութիւն, վասն որոյ խնդրէ չլինել այնմ արգելիչ, այլ՝ եթէ գտցէ Կանսիստորեայս հարկաւոր՝ կարող է և զկնի Հրաման տալոյն ծանուցանել զայնմանէ Սիւնհոդոսին Էջմիածնի»[179]:

Այս խնդրագրին ի պատասխան՝ կոնսիստորիան որոշում է «զեկեղեցին զայն 'ի պատճառս իսպառ հնութեան նորին չէ մարթ այլևս թողուլ առանց նորոգման: - Եւ երկրորդ, թէ ԺԲ պարբերութիւնը 77 յօդուածոյ Կարգադրութեանն ո՛չ վերաբերի առ նորոգութիւն եկեղեցեաց և վանօրէից, այլ՝ միայն առ 'ի նորոյ հիմնարկութիւն և շինութիւն այնպիսեաց, վասն որոյ Վիճակային Կանսիստորեայս Ղարաբաղու եզրակացուցանէ տալ թոյլ սկիզբն առնել նորոգութեան հին եկեղեցւոյն Մեղրեցւոց. և քանզի յիշեալ Հախումեանն 'ի 22 անցեալ Ապրիլի փոխեցաւ 'ի կենաց աստի, վասն որոյ զայսմ եզրակացութենէ ատենիս յայտնել Հոգաբարձուացն կարգելոց 'ի վերայ ժառանգի նորա Համբարձումայ Հախումեանց, նմանապէս քահանայից և ժողովրդեան Մեղրեցւոց ընդ ձեռն գործակալ Տէր-Յօհաննէս Աւագ-քահանային յայտնել, թէ՝ նոքա մինչև ցաւարտումն նորոգութեան նոյն եկեղեցւոյն կարին գնալ՝ կէսն 'ի նոցանէ յԱգուլեաց Աստուածածնի և կէսն 'ի Ղազանչեցւոց Ամենափրկիչ եկեղեցիսն. ի զկնի կատարման այսր համարել զգործս զայս վերջացեալ:- Ձնախատիպն ստորագրեցին - Ատենակալ Կանսիստորիիս Արքեպիսկոպոս Բաղդասարն, և Անդամք – Յովսէփ վարդապետ, Խաչատուր քահանայ, Աւետիս քահանայ և Առաքեալ քահանայ»[180]:

Այս փաստաթղթից ևս տեղեկանում ենք, որ 1838 թ. արդեն կար Ղազանչեցոց անունը կրող եկեղեցի, ինչի մասին նշել ենք վերևում:

Էջմիածնի Սինոդին ուղղված դատավոր Կորգանովի (Ղորղանյան) առաջարկության հիման վրա, քանի որ եկեղեցին փայտաշեն է ու

[179] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 415, թ. 2:
[180] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 415, թ. 2շրջ.-3:

պետք է կառուցվի քարից, այլ ոչ թե կրկին փայտից, այն համարվում է կառուցում, այլ ոչ՝ վերանորոգում, Հախումյանի կողմից քարե եկեղեցու կառուցումը թույլատրվում է միայն Սինոդի թույլտվությունից հետո[181]:

Հիշյալ թույլտվությունից հետո սկսվում են Մեղրեցոց եկեղեցու շինարարության աշխատանքները: Ավելի ամուր հիմքով եկեղեցի կառուցելու համար այն կառուցվում է հին փայտաշեն եկեղեցու հակառակ կողմում՝ 3 1/4 արշին լայնությամբ և 5 1/4 արշին երկարությամբ: 1839 թ. կեսերին, եկեղեցու կառուցումը դեռ լիովին չավարտած, մահանում է այդ մեծ գործի նախաձեռնող և բարերար Մահտեսի Բաբա Հախումյանը: Արցախի պարետ փոխգնդապետ Կիլը դիմում է Սինոդին՝ հայտնելով, որ եկեղեցու կառուցումն անկարելի է դադարեցնել, քանզի այն շուտով ավարտին կհասցվի, բացի այդ, Վրաստանի գլխավոր կառավարիչ, գեներալ-լեյտենանտ Գոլովինը Շուշի այցելության ժամանակ կարգադրել է հանգուցյալ Հախումյանի կնոջը հիշյալ եկեղեցու համար զանգակատուն կառուցել[182]: Այս դիմումի հիման վրա տեղի կոնսիստորիան ստանում է Սինոդի դրական պատասխանը[183]:

Սակայն, ուսումնասիրելով հետագա տարիների եկեղեցական գրագրությունը, տեղեկանում ենք, որ վերոհիշյալ զանգակատունը կամ չի կառուցվել, կամ կառուցվել է, բայց եղել է շատանշուք և տարիների ընթացքում կորցրել է իր բարվոք տեսքը: Այսպես, 1913 թ. հուլիսին Շուշիի քաղաքացի ինժեներ Ներսես Ղազարի Մինաս-Վարդապետյանը դիմում է թեմի կառավարիչ Զավեն վարդապետին Մեղրեցոց Սբ. Աստվածածին եկեղեցու համար իր միջոցներով զանգակատուն կառուցելու խնդրանքով[184]: Այս դիմում-խնդրանքը արժանանում է եկեղեցու ծխականների ու հոգևոր դասի հավանությանը, և եկեղեցական-ծխական ժողովը, միաձայն ընդունելով Մինաս-Վարդապետյանի նվիրաբերությունը, բարերարին շնորհակալություն է հայտնում, նաև որոշում է վերջինիս խնդրանքի համաձայն, մոր՝ Սոֆիայի մահից հետո նրան

[181] Նույն տեղում, թ. 4-6:
[182] Նույն տեղում, թ. 8 շրջ.:
[183] Նույն տեղում, թ. 9-10:
[184] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 297, թ. 20:

հիշյալ եկեղեցու բակում թաղելու թույլտվություն խնդրել հոգևոր իշխանությունից[185]:

Այս ամենի հիման վրա կազմված արձանագրությունը ու Մինաս-Վարդապետյանցի հայտարարությունները ներկայացնելով Գևորգ Ե կաթողիկոսին՝ թեմի կառավարիչ Զավեն եպիսկոպոսը հայտնում է. «Ծուշի քաղաքի Մեղրեցոց Սբ. Աստուածածին եկեղեցին գտնուում է անշուք դրութեան մէջ, բացի ուրիշ շատ թերութիւններից չունի նոյն իսկ զանգակատուն, և ահա այդ եկեղեցու ծխականներից մէկը՝ բարերար ինժեներ Մեծ. պ. Ներսէս Ղազարեան Մինաս-Վարդապետեանց գրաւոր ցանկութիւն է յայտնել կառուցանել նոր զանգակատուն իր սեպական միջոցներով և միաժամանակ խնդրել է արտօնել իրեն՝ ապագայում իր մօրը այդ զանգակատան տակ կամ նոյն եկեղեցու բակում թաղելու»[186]: Կաթողիկոսական դիվանի միջոցով Հայրապետի թույլտվությունը ստանալուց հետո[187], 1914 թ. գարնանը, Ներսես Մինաս-Վարդապետյանցի միջոցներով սկսվում է զանգակատան կառուցումը[188], որն ավարտվում է նույն թվականի աշնանը՝ արժենալով մոտ 6.000 ռուբլի[189]: Այս մասին հայտնում են նաև զանգակատան շենքի կառուցման գործի լիազորներ Խորեն քահանա Իսկանդարյանցն ու Հայկ Կոստանդյանցը՝ վկայելով, որ Մեղրեցոց եկեղեցու զանգակատան շինությունն ավարտվել է 1914 թ. դեկտեմբերի 16-ին[190]:

Գևորգ Ե կաթողիկոսի 1914 թ. հոկտեմբերի 1-ի կոնդակով ինժեներ Ներսես Մինաս-Վարդապետյանցն արժանացավ Հայրապետական օրհնության՝ բարի և օգտավետ գործի համար, նաև՝ մոր մահից հետո նրան Ծուշիի Մեղրեցոց Սբ. Աստվածածին եկեղեցու գավթում ամփոփելու թույլտվություն ստացավ. «Արդ՝ արժանի ամենայն ջատագովութեան և խրախուսանաց համարելով զբարի և զօգտաւէտ գործ Ձեր, այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով օրհնեմք զՄեծապատուութիւն Ձեր և զհամայն ընտանիս Ձեր յարակցեմք, զի թոյլատրեմք յետ մահուան հարազատ մօր Ձերոյ Սոֆիայի, թաղել

[185] Նույն տեղում, թ. 22 շրջ., 23 շրջ.:
[186] Նույն տեղում, թ. 19:
[187] Նույն տեղում, թ. 24 շրջ.:
[188] Ֆ. 56, ց. 18, գ. 1013, թ. 1:
[189] Ֆ. 57, ց. 2, գ. 346, թ. 45:
[190] Նույն տեղում, թ. 46:

զմարմին նորա ի գաւթի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Մեղրեցւոց Ծուշի քաղաքի: Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն»[191]:

Մեղրեցոց եկեղեցու շինարարության գործին 1300 ռուբլի գումար է նվիրաբերել նաև Շուշեցի Թեոդորոս Խաչիյանցը, իսկ բաքվաբնակ Եղիսաբեթ Կրասիլնիկյանցը՝ 500 ռուբլի[192]:

1920 թ. Ծուշին ադրբեջանական հրոսակների կողմից հրի մատնվեց, եկեղեցին ավերվեց, իսկ 1960 թ. ադրբեջանական իշխանության կողմից քանդվեց և վերածվեց բացօթյա բեմահարթակի, ինչի հետևանքով ներկայումս միայն հիմքի պատերն են պահպանվել:

Ծուշիում հաստատված ագուլեցիներից ու ղազանչեցիներից հետո քաղաք են տեղափոխվում մեծ թվով մարդիկ Արցախի այլ շրջաններից, որոնցից շատերը բնակվում են առանձին թաղամասում՝ այն կոչելով «Ներքին թաղ»: Այս թաղամասի բնակիչները ևս կառուցել են եկեղեցի, որը կոչվել է «Աստվածածնա եկեղեցի»: Նրանք հետագայում տեղափոխվում են քաղաքի հյուսիսային կողմը և այնտեղ հիմնում նոր բնակավայր՝ Վերին թաղը, կառուցում նոր եկեղեցի, որը բնակիչների շրջանում անվանվում է նաև «Թազա ժամ». «Հասարակութիւն 'ի Հայոց ժողովրդականաց, բնակելոց յառաջ քան զայս 'ի Ներքին թաղի Ծուշի քաղաքի 'ի միջի Մահմետականաց ունէին զառանձին հնացեալ եկեղեցի վասն Աստուածապաշտութեան յանուն սրբոյ Աստուածածնայ՝ կառուցեալ 'ի վաղ ժամանակաց հետէ, որոյ որմունք միայն էին քարեայ, բայց յարկ նորին փայտեայ: - 'Ի 1840 ամի 'ի պատճառս կրելոյ յիշեալ հասարակութիւն Հայոց 'ի կենցաղակցութենէ ընդ մահմետականաց՝ խառն ունելով 'ի միասին ընդ նոսա զբնակութիւն իւրեանց, զբազմադիմի վիշտս ո՛չ միայն զանձնականս, այլ որ առաւել է 'ի մասին Աստուածապաշտութեան և դիմելոյ ընտանեաց նոցա յեկեղեցին (վաղ քաջ ընդ առաւօտն կամ ընդ երեկո ըստ սահմանեցելումն), ըստ իմում միջնորդութեան, հրամանաւ տեղական քաղաքական իշխանութեան, վերաբնակեցաւ հասարակութիւն այն 'ի Ներքին-Թաղէն 'ի Վերին-Թաղն քաղաքիս՝ ('ի

[191] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 346, թ. 47-48:
[192] «Արձագանք», Թիֆլիս, 1897, հմ. 11-12, էջ 1672-1673:

Հիւսիւսոյ-Արևմտից կողման), և այս տեղի (որոշեալ) վասն բնակութեան նոցա գոլով հեռի ո՛չ միայն 'ի նախկին հնացեալ եկեղեցւոյ իւրեանց, յորում շարունակել այլևս ըստ հնութեան ժամերգութիւն էր երկիւղալի, այլև 'ի միւս եկեղեցեաց քաղաքիս, տանի ցայսօր հասարակութիւն այն զմեծ նեղութիւն 'ի դիմել ի յայլ եկեղեցիս 'ի պատճառս, որպէս ասացաւ հեռաւորութեանն»[193]:

Այն կառուցվում է Ծուշիի բնակիչներ Հովհաննես և Բաբա Հունանյանց եղբայրների բարերարությամբ: 1847թ. եղբայրները դիմում են Արցախի վիճակավոր առաջնորդ միտրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանցին հետևյալ խնդրանքով. «Լուեալ եմք մեք, թէ Հասարակութիւն Հայոց Վերին-Թաղի դիտաւորեալ գոլով կառուցանել 'ի հիմանէ զնոր եկեղեցի յանուն սրբոյ Աստուածածնի 'ի տեղւոջ անդ, ուր է այժմ ժամատուն նոցա փայտեաց և խարխալեալ, և առ այս վախճան ըստ թղթակցութեան Ձերդ Բարձր- Սրբազնութիւն արդէն ստացեալ է պլան ու ֆասատն նոյն եկեղեցւոյ, բայց հասարակութիւն այն գտանելով յաղքատիկ դրութիւն և չունելով զգումար ինչ պատրաստի հարկաւորեալ առ այն շինութիւն մնայ թերակատար դիտաւորութիւն նոցա. Հարազատ եղբայրն մեր՝ Մկրտիչն Յունանեանց, հանգուցեալն 'ի տէր յանցելում ամի, ունելով զծանօթութիւն զայնմ դիտաւորութենէ յիշեալ հասարակութեան, 'ի կենդանութիւն իւրում բանաւոր կտակաւ աւանդեալ է մեզ երկոցունց եղբարցս կառուցանել զայն եկեղեցի 'ի յիշատակ հոգւոյ նորա սեպական ծախիւք մերովք.- Ուստի մեք երկոքին եղբարքս ստիպեալ 'ի քրիստոնէական ջերմեռանդութենէ առ կատարումն յիշեալ կտակի հանգուցեալ 'ի Տէր եղբօր մերոյ Մկրտչի Յունանեանց և այլոց ննջեցելոց մերոց 'ի կառուցումն յիշեալ եկեղեցւոյ վասն հասարակութեան Հայոց Վերին-Թաղի, հոգալով զամենայն հարկաւորեալ ծախսն առ այն 'ի սեպականութենէ մերմէ, սկսեալ 'ի հիմանէ մինչ զկատարել ապէս աւարտումն այնորիկ առանց օգնականութեան ուրուք. և այսու աղերսարկութեամբ յայտանելով զջերմաջերմ յօժարութիւն մեր 'ի կառուցումն յիշեալ եկեղեցւոյ գծագրեալ դարամբ, խոնարհաբար խնդրեմք 'ի Ձերդ Բարձր – Սրբազնութենէ առնել զպատշաճեալն տնօրէնութիւն միջնորդելոյ

[193] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2199, թ. 1:

զլուծումն 'ի շինութիւն նոյն եկեղեցւոյ յանուն սուրբ Աստուածածնայ համեմատ պլանին և ֆասատին, ստացելոյ արդէն: - Յոհաննէս Յունանեանց, Բապայ Յունանեանց»[194]:

Բաղդասար միտրոպոլիտի միջնորդությամբ՝ Էջմիածնի Սինոդն այս հայտարարությունը, կառուցվելիք եկեղեցու նախագծի հետ միասին, ներկայացնում է Կովկասի փոխարքայի տնօրինությանը[195], որն էլ 1848 թ. հունվարի 14-ին թույլատրում է Սինոդին՝ համապատասխան կարգադրություններ անելու Շուշիի հյուսիսային մասում Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցման գործում[196]:

1912թ. այս եկեղեցու բարօրության համար շուշեցի Ասրի Գրիգորի Այդինյանցը կտակել է 200 ռուբլի:

Եկեղեցին հետագայում կոչվել է Կանաչ ժամ կամ Ղարաբաղցոց եկեղեցի: Վերջին տարիներին այն վերանորոգվել է:

Շուշիում եկեղեցաշինության և եկեղեցիների վերանորոգության գործում իր կազմակերպչական անդուլ ջանքերով, հետևողականությամբ և անգամ ֆինանսական ներդրումներով անուրանալի դերակատարություն է ունեցել Արցախի թեմի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանը: Նրա հայրենանվեր և եկեղեցասեր շինարարական գործունեության լավագույն գնահատականը տվել է անվանի շուշեցի Լեոն. «Շինարարական եռանդը Բաղդասար միտրապոլիտի գործունէութեան պատվաւոր կողմն է կազմում: Մենք տեսանք, որ նա երիտասարդութիւնից աշխատում էր Խաչենի աւերուած վանքերի եւ մանաւանդ Գանձասարի վերաշինութեան վրայ: Այդ հոգատարութիւնը նրա մէջ անշէջ մնաց եւ առաջնորդական պաշտոն ստանալուց յետոյ, չնայած անդամալուծութիւնը ըստ երեւութին չպիտի թոյլ տար նրան յաջողութեամբ գլուխ հանել խոշոր շինարարական ձեռնարկութիւնները»[197]:

1830 թ. նոյեմբերի 13-ից Ղարաբաղի թեմի միտրոպոլիտ կարգված Բաղդասար Հասան-Ջալալյանցի օրոք կրկին զարթոնք է ապրում

[194] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2199, թ. 3 շրջ.:
[195] Նույն տեղում, թ. 4-5:
[196] Նույն տեղում, թ. 8 շրջ.:
[197] Լէօ, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր դպրոցի, էջ 127:

Արցախի հոգևոր կյանքը[198]: Եթե նրա միտրոպոլիտության սկզբում Ղարաբաղի թեմում 1837թ. կար ընդամենը 3 վանք, 53 եկեղեցի, 32 ժամատուն[199], ապա հետագա տարիներին եկեղեցապատկան կառույցների թիվն զգալիորեն ավելանում է նորերի կառուցման և հների վերանորոգման շնորհիվ:

Վերոնշյալ բարեգործներից բացի, եղել են նաև շուշեցի բարերարներ, ովքեր իրենց կտակներում գումարներ, նյութական միջոցներ են հատկացրել քաղաքի բոլոր եկեղեցիներին, հոգևորականներին, միաբանուհիներին: Նրանցից Հակոբ Բալայանցը 1881 թ. քաղաքի բոլոր եկեղեցիներին և Կուսանաց վանքին 2.000 ռուբլի է կտակել, որը, ըստ 1916 թ. փետրվարի 11-ին կոնսիստորիայի կողմից սինոդին ներկայացված հայտարարության, փոխանցվել է սինոդին: Ծնունդով շուշեցի, բայց Բաքու քաղաքում բնակվող Եղիսաբեթ Կրասիլնիկյանցը 1898թ. Ծուշիի Կուսանանց վանքին 300 ռուբլի է կտակել[200]: Կուսանաց վանքի միաբանուհիներին շուշեցի Հովհաննես Գրիգորի Խունունցը 50 ռուբլի է կտակել[201], իսկ Թեոդորոս Խաչիյանցը՝ 200 ռուբլի:

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին–XX դարի սկզբին ազգային բարերարների եկեղեցաշինական գործունեությունը Ծուշիում բավականին բեղմնավոր էր: Անշուշտ, այդ ամենը դիտարկելով հայոց ընդհանուր եկեղեցաշինության և բարեգործության համապատկերում՝ պետք է ըստ արժանվույն կարևորել և գնահատել շուշեցի բարեգործների հայրենանվեր գործունեությունը, որն ակտիվորեն դրսևորվեց քաղաքում եկեղեցիների շինարարությամբ: Կարող ենք նշել նաև, որ ներկայացնելով շուշեցի բարերարների կտակարար գործունեության ընդամենը մի քանի օրինակ, այդուհանդերձ դրանց իսկ միջոցով հնարավոր է դառնում ընդհանուր պատկերացում կազմել նրանց հայրենասիրության, գթասրտության և հայրենանվեր կեցվածքի վերաբերյալ:

---

[198] Բալայան Մ., Ծուշիի վերածումը Ղարաբաղի հոգևոր կենտրոնի,-Ծուշին հայոց քաղաքակրթության օրրան, Եր., 2007, էջ 70-78:
[199] Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.): Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Թ, Եր., 2001, էջ 14:
[200] «Արձագանք», Թիֆլիս, 1897, հմ. 11-12, էջ 1672-1673:
[201] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ.1553, թ. 165-165շրջ.:

Նշված շրջանում երկրամասում տարածված էին բազմաթիվ հիվանդություններ, համաճարակներ, որոնց զոհ էին գնում հազարավոր մարդիկ: 1892թ. համաճարակ է բռնկվում նաև Շուշիում: Դրա համար կարիք էր զգացվում, որ քաղաքն ունենար բժշկական հաստատություն: Նման նախաձեռնությամբ հանդես է գալիս մեծահարուստ Հովհաննես Ժամհարյանը, ով 1894թ. դիմում է Շուշիի քաղաքային վարչությանը: Ստանալով թույլտվություն Հովհաննես Ժամհարյանը իր եռահարկ առանձնատանը բացել է հիվանդանոց, պահպանման ծախսերի համար հատկացրել 100 000 ռուբլի գումար: Դրանից բացի նա հետագայում 150 000 ռուբլի էր հատկացրել անհրաժեշտ սարքավորումներ և կահավորանք ձեռք բերելու, իսկ 5000 ռուբլի՝ նվիրել դեղատան համար[202]: Հիվանդանոցի բացումը տեղի է ունեցել 1902թ., որտեղ աղքատների բժշկությունը ձրի էր կատարվում[203]:

1911թ. Ժամհարյան հիվանդանոցին շուշեցի Թեոդորոս Խաչիյանցը կտակել է 1000 ռուբլի գումար:

1916թ. Ավան Յուզբաշյանի միջոցներով երեխաների սուր վարակիչ հիվանդությունների համար բացվում է բուժման կենտրոն[204]:

Բացի նշված շինություններից Շուշին ուներ ատամնաբուժարան, բազմաթիվ աղբյուրներ, հյուրանոցներ, առողջարաններ, փոստ, հեռագրատուն ու այլ շինություններ:

Քաղաքի շենացման, զարգացման, կառուցապատման գործում իրենց մեծավանդ ներդրումն ունեցան շուշեցի մեծահարուստներ Թամիրյանցների, Թառումյանցների, Խանդամիրյանցների, Բատիրյանցների, Առաքելյանների, Ժամհարյանների ընտանիքները:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ չնայած ուսումնասիրվող ժամանակաշրջանի քաղաքական բարդ իրադարձություններին՝ հայ բարերարների բազում նվիրատվությունների շնորհիվ Շուշիում կառուցվեցին եկեղեցիներ, հիվանդանոցներ, հասարակական շենքեր ու շինություններ: Նրանց անմնացորդ նվիրումի արդյունքում

---

[202] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 323:
[203] Նույն տեղում, էջ 324:
[204] Նույն տեղում, էջ 324:

Շուշին օրեցօր ավելի էր կառուցապատվում և գեղեցկանում: Հենց բարերարների միջոցներով կառուցված Շուշին դարձավ Արցախի ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական կենտրոնը:

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ
ՇՈՒՇԻԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2.1. ՇՈՒՇԵՑԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ցանկացած ժողովրդի մշակութային առաջընթացի ու քաղաքակրթական վերելքի գրավականը եղել է կրթությունը: Գիտությունն ու կրթությունը միշտ առաջնային տեղ են ունեցել նաև հայոց պատմության մեջ: Հայ իրականության մեջ ուսումնական հաստատությունները կրել են դպրոց, դպրատուն, լսարան, վարժարան, ուսումնարան, կրթարան, վարդապետարան, համալսարան և այլ անուններ:

Առաջին հայկական դպրոցների հիմնումը կապվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ, ով դպրոց է հիմնել նաև Արցախում՝ Ամարասում: Այդ փաստը վկայում է, որ Մաշտոցի ապրած ժամանակներից առ այսօր արցախցիների կյանքում գիտության և կրթության օջախները կարևոր նշանակություն են ունեցել: Հայության կյանքում Արցախը կրթամշակութային և լուսավորչական ասպարեզում կարևոր դերակատարում է ունեցել՝ որպես ուսումնակրթական կենտրոն ունենալով հենց Շուշի մայրաքաղաքը[205]:

XIX դարի սոցիալ-տնտեսական տեղաշարժերը որոշակի պայմաններ էին ստեղծում կրթաուսումնական կյանքի զարգացման համար: Նոր տնտեսական հարաբերությունները պահանջ են դնում ունենալ ուսյալ մասնագետներ: Հայ մեծահարուստները միջոցներ չէին խնայում իրենց զավակներին, ինչպես նաև տաղանդաշատ հայրենակիցներին հայրենի երկրում և արտասահմանում ուսում տալու: Քննարկվող ժամանակահատվածում Շուշիում գործող դպրոցների մեծ մասը պահվում էր մեկենասների միջոցներով[206]:

Քաղաքի մշակույթի բնագավառում ձեռք բերած հաջողությունները հետևանք էին դպրոցական կյանքի կազմակերպման, ինչում անգնահատելի դեր ունեցան հայ առաքելական եկեղեցին և, մասնավորապես, Արցախի թեմի առաջնորդները: Դպրոցների մեծ մասը բացվել էր եկեղեցիներին կից ու պահվում էր հոգևորականների ջանքերով, ովքեր փորձում էին կրթությունը տարածել Արցախում: Նույնիսկ հաճախ եկեղեցին

[205] Արցախում ընդհանրապես և Շուշիում հատկապես 1850-1920 թթ. դպրոցական գործի զարգացման մասին մանրամասն տե՛ս Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. Ա, Ստ., 2014, էջ 109-133, 178-182, 355-367, 395-419: Հարությունյան Մ.Գ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստ., 2010, էջ 30-53:

[206] Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Եր., 2011, էջ 191:

ընդդիմանում էր ցարական իշխանությունների հակահայկական քաղաքականությանը, որոնք փորձում էին փակել հայկական դպրոցները: Արցախի թեմի առաջնորդների լուսավորչական ձեռնարկումների շնորհիվ Շուշիի գավառում ընդլայնվում է դպրոցների ցանցը: Դպրոցական կյանքի աշխուժացման, մշակույթի զարգացման մեջ մեծ դերակատարություն են ունեցել միտրոպոլիտներ Բաղդասար Հասան-Ջալալյանը, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանը, Զավեն արքեպիսկոպոսը և ուրիշներ:

XIX դարում մեծ վերելք ապրեց կրթական գործը: Դեռ 1805 թ. շուշեցի Մելիք Ազարյանի բացած մասնավոր դպրոցում սովորում էր 35 աշակերտ, իսկ Հակոբ Յուզբաշյանի բացած դպրոցում՝ 45 աշակերտ[207]: 1821 թ. շուշեցիներ Մարկոսյանների, Թառումյանների, Ժամհարյանների և այլոց հովանու ներքո դպրոց բացեց Մեսրոպ Թաղիադյանը[208]: Ըստ Մ. Թաղիադյանի՝ դպրոցներ կային Ագուլեցոց, Ղարաբաղցոց և Ղազանչեցոց եկեղեցիներին կից[209]:

Արդեն 1830 թ. դեկտեմբերի 30-ին բացվում է առաջին պետական գավառական դպրոցը 127 աշակերտով և 5 ուսուցչով[210]: Սրանից զատ՝ այդ շրջանում Շուշիում գործում էին Տեր Խաչատուրի (10 աշակերտ) և Առաքել սարկավագի (20 աշակերտ) դպրոցները[211]:

1820-1920 թթ. ընթացքում այստեղ գործող թվով տասը կրթօջախների համբավը դուրս էր եկել երկրամասի սահմաններից: Դրանց թվում էին Ղարաբաղի Հայոց թեմական դպրոցը (հիմնվել է 1838 թ.), Ղարաբաղի Տիրամայր Սուրբ Մարիամ օրիորդաց ուսումնարանը (1864 թ.), Քաղաքային ուսումնարանը (1875 թ.), Ռեալական ուսումնարանը (1881 թ.), Մարիամ-Ղուկասյան օրիորդաց գիմնազիան (1912 թ.) և այլն: Շուշիում գործող դպրոցներին լիովին կարելի է վերագրել, ընդհանուր առմամբ, արևելահայ դպրոցներին տրված՝ Վ. Երկանյանի գնահատականը. «1800-1870թթ. հայկական դպրոցի պատմության այն շրջանն էր, երբ հասարակության լավագույն ուժերի ջանքերով ու բուն ժողովրդի օժանդակությամբ

---

[207] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 78, թ. 9, 43:
[208] Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 85-86:
[209] Թաղիադեան Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. Ա, Կալկաթա, 1847, էջ 86-87:
[210] Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի 1-ին կեսին, Եր., 1964, էջ 46-50:
[211] Հարությունյան Գ., Հայկական դպրոցը Արցախում 5-19-րդ դարերում, Ստ., 2000, էջ 20:

նախադրյալներ ստեղծվեցին կրթության գործը նոր աստիճանի բարձրացնելու համար: Այլ կերպասած, այդ շրջանը, հատկապես 1850-60-ական թվականները, արևելահայ ու արևմտահայ նոր դպրոցի գաղափարական հիմնավորման և կազմակերպական նախապատրաստման շրջան էր: Այս տարիներին էր նաև, որ դպրոցն սկսեց դանդաղորեն տարածվել Արևելյան և Արևմտյան Հայաստանի գավառներում»[212]:

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում մեծ էր բարերարների դերը, որոնց հատկացրած նյութական միջոցներով էլ հիմնվել են դպրոցներ և ուսումնարաններ:

Դպրոցների դերը Ծուշիի կյանքում անժխտելի է, և այդ տեսակետից առաջնության պատիվը պատկանում է Հայոց թեմական հոգևոր դպրոցին: Այն բացվել է 1838 թ. հունիսի 22-ին Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանի ջանքերով ու միջոցներով: Սկզբում դպրոցը ապահովություն, հիմնական դրամագլուխ, պահպանության որոշակի աղբյուրներ չուներ: Բաղդասար միտրոպոլիտը դպրոցը բացեց՝ հույսը դնելով հայերի աջակցության և օժանդակության վրա[213]: Կոնսիստորիան նույն թվի հունիսի 29-ին դիմում է Ս. Էջմիածնի սինոդին, որպեսզի հաստատի հոգևոր թեմական դպրոցի շտատը (բյուջեն): Սինոդը հոկտեմբերի 8-ի գրությամբ հաստատում է այն: Բաղդասար միտրոպոլիտը նոյեմբերի 9-ին օրհնության թուղթ է ուղարկում թեմի շրջանների՝ Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի, Իգիրմիդորդի[214] հայ բնակչությանը, որպեսզի կամավոր նվիրատվությամբ օգնեն հոգևոր ատյանին և հոգևոր ճեմարանին, ուր սովորում էին Ղարաբաղի թեմի հոգևորականների երեխաները: Թե՛ հոգևոր ատյանը և թե՛ դպրանոցը զուրկ էին եկամուտներից, ուստի միտրոպոլիտը հաճախակի օգնության դիմումներ էր հղում՝ մի կողմից ժողովրդին, մյուս կողմից՝ կաթողիկոսին և սինոդին:

Սինոդին ուղղված մի գրության մեջ նա հայտնում էր, որ ժողովուրդը սիրով նվերներ չի տալիս՝ դժգոհելով, որ դպրոցներում սովորում են միայն հոգևորականների զավակները,

---

[212] Երկանյան Վ., Հայ կական դպրոցը 1800-1870 թթ., ԼՀԳ, 1970, հմ. 10, էջ 31-32:
[213] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 174, թ. 115:
[214] Խամսայի մելիքություններից մեկը, նաև այդպես է կոչվել Գյուլիստանի մելիքությունը:

իսկ աշխարհականներինը՝ ոչ: Սինոդը 1838 թ. դեկտեմբերի 17-ին թույլ է տալիս տեղ լինելու դեպքում դպրանոց ընդունել նաև աշխարհականների որդիներին: Դպրոցի առաջին ուսուցիչներն են եղել Գրիգոր ավագ սարկավագ Տեր-Ավագյանը, թուրքերեն և պարսկերեն լեզուների ուսուցիչ մոլլա Ալլահվերդին, որին հաջորդ տարին փոխարինել է հայազգի միրզա Ֆարուխ Ամիրխանյանը: 1841 թ. դպրոցի տնօրենն է եղել Գաբրիել Մամիկոնյանը: Սեփական շենք չունենալու պատճառով դպրոցը տեղավորված է եղել վարձու շենքում՝ տարեկան 100 ռուբլի վարձով: Դպրոցն սկզբում 65 աշակերտև 2 ուսուցիչ ուներ: Նյութական սղության պատճառով այն 1843թ. ժամանակավորապես փակվել է: 1845թ. միտրոպոլիտը կրկին ժողովրդի օգնությանն է դիմում, և դպրոցը նույն թվի օգոստոսի 17-ին կրկին վերաբացվում է՝ 45 աշակերտով և 5 ուսուցչով[215]: Շուշեցի Քալանթարյաններն իրենց տունը վեց ամիս ժամանակով ձրի տրամադրում են դպրոցին, իսկ պետական դպրոցի տեսուչ Խիտրովը հանձն է առնում ձրի վարել դպրոցի տեսչության պաշտոնը և ռուսերեն, պատմությունու աշխարհագրությունդասավանդել [216]:

Թեմական դպրոցը պահելու նպատակով Բաղդասար միտրոպոլիտը յուրաքանչյուր ծխականից գանձվող հատուկ տուրք (20 կոպեկ) սահմանեց, իր միջոցներով շենք կառուցեց: 1853 թ. Բաղդասար միտրոպոլիտն իր հիմնադրած թեմական դպրոցի համար շենք կառուցելու նպատակով առաջնորդարանի դիմաց հողատարածք է վերցնում, սակայն մահվան պատճառով նրա ձեռնարկումը մնում է անկատար: Դա ավարտին է հասցնում Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը՝ 1872 թ. հունիսի 22-ին կատարելով դպրոցի նոր շենքի բացումը:

Մաթևոս Ա. կաթողիկոսի 1859 թ. դեկտեմբերի 4-ի կոնդակով հաստատվում է Շուշիի Հայոց թեմական հոգևոր դպրոցի կանոնադրությունը[217]: 1860 թ. դպրոցը հանձնվում է Շուշիի հասարակության կողմից ընտրված հոգաբարձությանը, որին

---

[215] Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), էջ 183:

[216] Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1913, հմ. 7-8: «Տեղեկագիր Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրանոցի 75-ամեայ գոյութեան»:

[217] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 879, թ. 3-6: Կանոնադրութիւն Շուշուայ հոգեւոր դպրոցի՝ հաստատուած Մատթէոս կաթողիկոսի ամենայն հայոց հայրապետական Շուշուայ հայոց հասարակութեան անունով տուած կոնդակով դեկտեմբերի 4-ին 1859 թուին ի Ս. Էջմիածին համար 284, Շուշի, 1894, 7 էջ:

հաջողվում է զգալի չափով բարելավել դպրոցի նյութական դրությունը:

Դպրոցը մեծ փոփոխությունների է ենթարկվում, երբ Մաթևոս կաթողիկոսը շուշեցիների խնդրանքով 1863 թ. դպրոցի տեսուչ է նշանակում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում տարիներ առաջ ճանաչում ստացած Պետրոս Ծանշյանին: Վերջինիս օգնականն է եղել Պերճ Պռոշյանը, ով դասավանդել է հայոց լեզու, հայ գրականություն և հայոց պատմություն: Նրանց ջանքերով դպրոցը սկսում է ծաղկել: Իսկ արդեն Խորեն Ստեփանեի օրոք այնտեղ աշակերտների թիվը հասավ 300-ի[218]:

Ս. Էջմիածնի սինոդի՝ 1879 թ. տվյալներով դպրոցն ուներ 8 դասարան, 15 ուսուցիչ, 334 աշակերտ, պահպանման աղբյուրներն էին եկեղեցական գումարները և ժողովրդի կամավոր նվիրատվությունները[219]: Հատկանշական է, որ հետագայում ևս դպրոցի ֆինանսական մուտքերը կանոնավոր կերպով ներկայացվում էին հանրության[220]:

1903թ. հունիսի 12-ին ցարական կառավարությունն օրենք հրապարակեց հայկական եկեղեցուն պատկանող հողերի և գույքի բռնագրավման մասին: Այդ օրենքը հարված էր ոչ միայն հայ եկեղեցուն, այլև հայկական դպրոցներին, քանզի եկեղեցական կալվածքների հաշվին էին պահվում թեմական ու ծխական դպրոցները: Օրենքը դժգոհության և բողոքի զայրույթ առաջացրեց ամբողջ հայության մեջ, այդ թվում՝ Արցախում: «Ժողովուրդն ամենուրեք ոտքի ելավ՝ պաշտպանելու իր հավատի նյութական հիմքը, - գրում է Բ. Ուլուբաբյանը: Խռովություններն սկսվեցին Շուշիի թեմականից: Աշակերտներն ու դասատուները բողոքի ցույց կազմակերպեցին, ելույթ ունեցողները ցարի հրամանագիրը համարեցին հայասպան վճիռ, կոչ արին ազգովին կռվել նրա դեմ, մինչև վերջին կաթիլ արյունը պաշտպանել սեփական ազգային հարստությունն ու իրավունքը: Բռնություններ սկսվեցին

[218] ԼԷՕ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 385-386: «Մշակ», 1874, հմ. 52:
[219] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7280, թ. 2-3:
[220] Օրինակ տե՛ս Հաշուեցուցակ Ղարաբաղու Հայոց ազգային դպրոցաց վասն 1875, 1876, 1877, 1879 և 1880 ամաց, Շուշի, 1881: Համառօտ հաշիւ մտից և ծախուց թեմական դպրանոցի հայոց Շուշուայ վասն 1890-1891 և 1892 ամաց, Շուշի,1893: «Արձագանք», Թիֆլիս, 1894, հմ. 1, էջ 143-145, 156: Հմ. 10, էջ 1515-1516: Հմ. 11-12, էջ 1722-1729:

ցուցարարների դեմ, ուսանողներից մի քանիսին բանտնետեցին, ապա ազատելով՝ կարգադրեցին դուրս անել դպրոցից: Սա՝ սկզբնական շրջանում. մի քանի ամիս անց՝ դեկտեմբերին, Կովկասի վարչապետ Գոլիցինի կարգադրությամբ Թեմականը փակվեց՝ «Ի պատճառս վնասակար ընթացից որպէս կառավարող անձանց, նոյնպես եւ սանունց նորին»: Թեմականին էլ հետևեցին ծխական դպրոցները, որոնք այլևս գոյություն ունենալ չէին կարող, քանի որ զրկվում էին նյութական միջոցներից»[221]:

Հայ ժողովրդի ծավալած պայքարի արդյունքում 1905թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ II-ը ստիպված չեղյալ հայտարարեց վերոնշյալ տխրահռչակ օրենքը: «Ամբողջ հայության շրջանում փակված ուսումնական հաստատություններից,- գրում է Բ. Ուլուբաբյանը,- առաջինը վերաբացվեց Շուշիի թեմական դպրոցը, ապաստիճանաբար՝ և մյուսնե- ը »[222]:

Դպրոցն ավելի բարեկարգ տեսք է ստանում 1908-1910 թթ. տեսուչ Ավետիք Տեր-Պողոսյանի օրոք և նրաջանքերով[223]:

1913թ. շուշեցիները պատրաստվում էին նշել դպրոցի հիմնադրման 75-ամյակը[224]: Դպրոցի հոբելյանի նախապատրաստական աշխատանքները սկսվում են նրա նյութական ապահովության համար կազմակերպված դրամահավաքությամբ[225] և ամենայն հանդիսավորությամբ ու հիրավի համաժողովրդական ձևով[226]:

1912 թ. փետրվարի 15-ին թեմականի հոբելյանական տոնակատարությունների համար ստեղծված Կենտրոնական հոբելյանական հանձնաժողովի նախագահ, Արցախի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն եպիսկոպոսը խնդրում է Գևորգ Ե. կաթողիկոսին՝ թեմական դպրոցի հոբելյանը նշելու և ընդհանրապես կրթական գործի անապահով դրության բարելավման

---

[221]Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994, էջ 194:
[222]Նույն տեղում:
[223]Տե՛ս Խուդոյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., 1987, էջ 370-374:
[224]Տե՛ս Քոչարյան Ա., Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի հիմնադրման 75-ամյակի տոնակատարությունները՝ ըստարխիվային վավերագրերի, ԲՀԱ, 2012, հմ. 1-2, էջ 213:
[225] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 171, թ. 46-50:
[226] Մանրամասն տե՛ս Կարգ Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրանոցի 75-ամեայ յօբելեանական տօնակատարութեան, Շուշի, 1913: Ղարաբաղի Հայոց հոգեւոր թեմական դպրանոցի 75-ամեակը, Շուշի, 1913:

համար օրհնության և հորդորական թուղթ տալ ղարաբաղցիների անունով: Այդ խնդրանք-դիմումն ուղարկվում է թեմական դպրոցի հոգաբարձու Գ. Քալանթարյանի, ճարտարապետ ու հոգաբարձու Մկրտիչ Ղոնդաղսազյանցի, ղարաբաղցի ունևորներ Դավիթ Ավան-Յուզբաշյանի, Գաբրիել Կաֆյանցի և այլ ականավոր անձանց մասնակցությամբ Թիֆլիսում կայացած խորհրդակցությունից հետո[227], և երկու օր անց արժանանում է Վեհափառի հավանությանը[228]:

Զավեն եպիսկոպոսի պնդմամբ՝ եթե շուշեցիները 250-300 հազար ռուբլի նվիրաբերեին դպրոցին, ապա այդ գումարի 5 %-ը դպրոցն ընդմիշտ կապահովեր, և դրամագլուխն էլ մի որևէ բանկային հաստատությունում ապահով ու անձեռնմխելի կմնար: Ըստ նրա՝ «Այդ մեծ գումար էլ չէ շուշեցիների համար, որոնք առանց այն էլ տարեկան 7-8 հազար ռուբլի տալիս են, որից ոչ մի յետք չէ մնում»[229]:

Ըստ թեմի բնակչության հոգևոր-վարչական, դպրոցական և կալվածական դրության մասին Զավեն եպիսկոպոսի 1911/1912 թթ. հաստատած տեղեկագրի՝ թեմական դպրոցը, սեփական շենք չունենալով, տեղավորված էր Մարիամյան օրիորդաց դպրոցի համար կառուցված շենքում, իսկ վերջինիս աշակերտուհիները՝ թեմական դպրոցի հին շենքում, և երկու շենքերն էլ դպրոցի համար հարմար չէին: Այս վիճակը կարող էր ոչ միայն դպրոցի զարգացումը խոչընդոտել, այլ նաև փակման վտանգի առաջ կանգնեցնել[230]:

Քանի որ նշված հոբելյանական հանդեսը պետք է կատարվեր առաջնորդարանում, որին կից էր դպրանոցը, Կովկասի բոլոր ազգային-հասարակական հաստատություններն առանձին պատգամավորություններով դրան պետք է ներկայանային: Այդ պատճառաբանությամբ Զավեն եպիսկոպոսը դիմում է Ս. Էջմիածնի սինոդին՝ առաջնորդարանի շենքում և բակում նորոգություններ անելու համար վիճակային արդյունքներից գումար ծախսելու թույլտվության խնդրանքով[231]:

Թեմական դպրոցի հիմնադրման հոբելյանի առիթով հանգանակություններ են կատարվում: Զավեն և Բաբկեն (Ս. Սինոդի

[227] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 963, թ. 3 շրջ.:
[228] Նույն տեղում, թ. 1 շրջ.:
[229] ֆ. 227, ց. 1, գ. 171, թ. 49-50:
[230] ֆ. 57, ց. 2, գ. 1908, թ. 3-19:
[231] ֆ. 56, ց. 18, գ. 955, թ. 1:

անդամ, որը նշանակվել էր Ս. Էջմիածնից հոբելյանական աշխատանքներին աջակցելու համար) եպիսկոպոսները հանգանակում են 600.000 ռուբլուց ավելի գումար, որը ներառում էր մոսկվաբնակ ղարաբաղցի Բաղդասար Արզումանյանի նվիրաբերած 200.000 ռուբլին, Հռիփսիմե Խանդամիրյան-Ղուկասյանի, դպրոցի սան Միքայել Արամյանցի, Մովսես Թավադյանի, Գրիգոր Բեգլարյանցի որդիների նվիրաբերությունները և այլն[232]: Միքայել Արամյանցը դպրոցին էր նվիրել 45.000 ռուբլի արժողությամբ իր տունը, որը գտնվում էր Ծուշիում: Նա իր վրա էր վերցրել նաև վերակառուցման և ճանապարհի վերանորոգման ծախսերը[233], որի համար հուլիսի 18-ի կոնդակով ստացել էր Վեհափառի օրհնությունը[234]:

Թեմական դպրոցին գումարներ են նվիրաբերել նաև մոսկվաբնակ Ա. Խանդամիրյանը՝ 10.000 ռուբլի, շուշեցի բաքվաբնակ Ղարաբեկյանցը՝ 1000 ռուբլի, Պողոս Ալեքսանյանը՝ 3000 ռուբլի, Մկրտիչ Հովհաննիսյանը և Սուրեն Ադամյանը՝ 20.000 ռուբլի, Պողոս Ղուկասյանը՝ 10.000 ռուբլի, Մնացական Խունունցը՝ 7000 ռուբլի և ուրշներ[235]:

Գևորգ Ե. կաթողիկոսը 1913 թ. հուլիսի 18-ի Հայրապետական կոնդակով ընդունում և հաստատում է Բաղդասար Արզումանյանցի՝ դպրոցի հոբելյանի կապակցությամբ կատարած նվիրաբերության (200.000 ռուբլի) վերաբերյալ կտակավանդ գրությունը[236]:

Հոբելյանի կապակցությամբ թեմական դպրոցի օգտին կատարված հանգանակություններին հանգամանալից անդրադարձավ և գնահատեց շուշեցի հայտնի մտավորական Համբարձում Առաքելյանը: Ըստ նրա տեղեկատվության՝ դպրոցին նվիրաբերվել էր հետևյալ գումարը. «1. Բաղդասար Արզումանյան՝ բնիկ շուշեցի, վաճառական Մոսկվայում - 200.000 ռ., 2. Միքայել Արամյանց՝ բնիկ շուշեցի, կապիտալիստ, նվիրել է Ծուշիում գտնված իր տունը, որն արժեր 30-40.000 ռ., 3. Գրիգոր Առաքելյան՝ բնիկ շուշեցի, բնակյալ Մոսկվա, կապիտալիստ - 5.000 ռ., 4. Բաքվում շուշեցի եղբայրներ Պողոս և Արշակ Ղուկասյանների հանգանակությունը - 55.000 ռ., 5. Դավիթ խան Ավան-

[232] «Տարազ», Թիֆլիս, 1913, հմ. 7-8, էջ 104:
[233] Անթանեսյան Վ., Միքայել Արամյանց, Եր., 2011, էջ 46:
[234] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 309, թ. 86 շրջ.-87:
[235] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 329-330:
[236] Կտակի մասին մանրամասն տե՛ս հավելվածում, փաստաթուղթ N 2:

Յուզբաշյան՝ շուշեցի, կապիտալիստ - 8.000 ռ.»: Նա նաև, ըստ արժանվույն գնահատելով Զավեն և Բաբկեն եպիսկոպոսների դերակատարությունը դպրոցի զարգացման գործում, կոչ էր անում. «պատրաստվել ուրեմն արժանաւորապէս տօնելու Ղարաբաղի թեմական դպրոցի 75-ամեայ յօբելեանը»[237]:

Շուշիում համաժողովրդական ձևով նշվեցին նաև գրերի գյուտի և տպագրության հոբելյանները, Ագուլյաց և Ղազանչեցոց եկեղեցիներում հանդիսավոր պատարագներ մատուցվեցին, թեմական դպրոցում միջոցառում կազմակերպվեց[238]: Էջմիածնում գլխավոր տոնական միջոցառումներին մասնակցելու նպատակով Շուշիի դպրոցների կողմից պատգամավորներ ընտրվեցին Տիգրան Նազարյանը, Հ. Առաքելյանը և Ստ. Մալխասյանցը[239]:

Թեմականի տեսուչները 19-րդ դարի երկրորդ կեսին մեծ մասամբ Եվրոպայի և Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացած գործիչներ էին (Պետրոս Ծանշյան, Խորեն Ստեփանե), որոնք Շուշի էին բերում նոր, առաջադիմական գաղափարներ և հասարակական կյանքի առաջընթացին ծառայեցնում: Դպրոցում դասավանդել են նշանավոր հայագետներ Ստ. Մանդինյանը, Ա. Բահաթրյանը, Մ. Բարխուդարյանը, Ե. Լալայանը, Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Մ. Պլուզյանը, գրողներ Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Վ. Փափազյանը:

Ավելորդ չէ հիշատակել թեմականի աշակերտների քանակը, օրինակ՝ 1838 թ.՝ 20, 1870 թ.՝ 158, 1893 թ.՝ 492, 1909 թ.՝ 374[240]: Դպրոցում դասավանդել են հայերեն, ռուսերեն, պարսկերեն, թվաբանություն, կրոն, պատմություն, երգեցողություն: Սեդրակ Մանդինյանը ծրագրում ընդգրկեց մանկավարժություն[241], իսկ չորրորդ դասարանն ավարտողներից կազմվում էր մանկավարժական հատուկ

---

[237] Տե՛ս Առաքելեան Հ., Ղարաբաղի թեմական դպրոցի յօբելեանը եւ «Դպրոցական ֆոնդը», «Մշակ», 1913, հունիսի 18:
[238] Տե՛ս «Հորիզոն», 1913, հոկտեմբերի 22: «Ղարաբաղ», 1913, հունվարի 22: «Մշակ», 1913, հոկտեմբերի 20, 25:
[239] Տե՛ս «Մշակ», 1913, հոկտեմբերի 5, 8:
[240] Խուդոյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, էջ 374:
[241] Տե՛ս «Մշակ», 1880, սեպտեմբերի 19: Նրա աշխատություններից տես Մանդինեան Ս., Դպրոցական սահմանադրութիւն, Թիֆլիս, 1875: Համառօտ մանկավարժութիւն, Թիֆլիս, 1878: Հայելի դաստիարակութեան տղայոց, Թիֆլիս, 1859: Մանկավարժական տարակուսանքներ մեր մէջ, Թիֆլիս, 1875:

դասարան, որի միջոցով ծխական դպրոցի համար ուսուցիչներ էին պատրաստվում:

Դպրոցի շրջանավարտներից շատերն ակնառու դեր են խաղացել հասարակական-քաղաքական, գիտության, գրականության, մշակույթի և արվեստի բնագավառներում (Մուրացան, Լեո, Համբարձում Առաքելյան, Արամ Մանուկյան, Նիկոլ Դուման, Գարեգին Հովսեփյան, Կ. Մելիք-Շահնազարյան և այլք)[242]: Իսկ Մուրացանի ժառանգները 1914թ. նրա ճոխ գրադարանը՝ 3000 ռուբլի արժողությամբ, նվիրել են թեմականին[243]:

Շուշիում մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում մեծ ավանդ են ներդրել Թադևոս Թամիրյանը ու Արիստակես Խանդամիրյանցը: Վերջինս իր մահից առաջ այդ նպատակի համար հատկացրել է 15.000 ռուբլի, որը, տարիներ շարունակ մնալով բանկում, 1891 թ. կազմել էր 48.000 ռուբլի: Նույն թվականին Խանդամիրյանցի ցանկությունն ի կատար է ածում նրա հարսը՝ Նինո Խանդամիրյանցը, ով այդ 48.000 ռուբլին բաշխում է հետևյալ կերպ. 20.000 ռուբլի հատկացնում է Շուշիի Հայոց թեմական դպրոցին, 20.000 ռուբլի՝ Շուշիում օրիորդական նոր ուսումնարան բացելու, 5.000 ռուբլի՝ այդ դպրոցի գավիթը դրսից ջուր բերելու գործին, իսկ մնացած 3.000 ռուբլին՝ չքավոր հայ աշակերտներին: Իսկ Թադևոս Թամիրյանը մեկ միլիոն ռուբլի էր կտակել Շուշի քաղաքին, որից 300 000 ռուբլի՝ թեմական դպրոցներին, 100 000 ռուբլի՝ ռուս-թաթարական դպրոցին[244]:

Թեմական դպրոցի զարգացման գործում իրենց ավանդն են ներդրել նաև Աբրահամ Նասիբյանը, Պ. Թադևոսյանը, Գրիգոր Բեգլարյանցի որդիները, Ա. Թյունիպեկյանը: 1907 թ. Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսն օրհնության կոնդակ է հղում բաքվաբնակ Աբրահամ Նասիբյանին՝ Շուշիի թեմական դպրոցին 1.000 ռուբլի նվիրելու կապակցությամբ: Թեմականի հոգաբարձության անդամներ և բարերարներ էին շուշեցի մեծահարուստներ Աղա Անդրեաս-բեկ ու Սարգիս-բեկ Քալանթարյանները, Համբարձում-բեկ

---

[242] Մանրամասն տե՛ս Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, էջ 266-302:
[243] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 239:
[244] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 335:

Սարուխանբեկյանը, Կարապետ Ղուլյանը, Սիմոն Կոստանդյանը, Սահակ Բեհլամյանը[245]:

1910 թ. Բաքվում բնակվող շուշեցի Պ. Թադևոսյանը 30.000 ռուբլի նվիրում է իր ծննդավայրի ազգային ուսումնարանին և խոստանում ապագայում ուսման ծրագրերը ընդլայնելու նպատակով ևս 20.000 նվիրել: 1912 թ. «Կոչնակ»-ը հայտնում է, որ Շուշիում մահացած Գրիգոր Բեգլարյանցի որդիները թեմական դպրոցին են հատկացրել 15.000 ռուբլի: 1915 թ. աշնան սկզբներին Թիֆլիսում վախճանված Ա. Թյունիպեկյանը կրթական նպատակների համար կտակում է 150.000 ռուբլի[246]:

Շուշիի թեմական դպրոցին գումարներ են հատկացրել նաև նյութապես ոչ ապահով վիճակում գտնվող շուշեցիները, ովքեր թեև փոքր, բայց իրենց ներդրումն են ունեցել կրթության զարգացման գործում: Նրանք հատկապես փորձում էին իրենց ներդրած գումարներով աղքատ ընտանիքների երեխաների ուսման վարձը վճարել: Բարեգործությամբ աչքի են ընկել Շուշիից դուրս բնակվող, բայց ծնունդով շուշեցիները նույնպես, ովքեր կյանքի վերջին տարիներին կազմած կտակներում բաժին են հատկացրել թեմական դպրոցին: Ներկայացնենք այդպիսի մի քանի նվիրատվություններ.

1879 թ. շուշեցի Մարտիրոս Խանդամիրյանցը կտակել է, որ իր մահից հետո որդիներն ամեն տարի 100-ական ռուբլի հատկացնեն տեղի թեմական դպրոցին, բայց 1916 թ. փետրվարի 11-ին Ղարաբաղի վիճակային կոնսիստորիայի կողմից սինոդին ներկայացված հայտարարության համաձայն, որդիները դա չեն արել:

Շուշիի Ագուլյաց սբ. Աստվածածին եկեղեցու միաբան Հովհաննես քահանա Թառումյանցը 1886 թ. Շուշիի հոգևոր թեմական դպրոցին 300 ռուբլի է կտակել՝ պայմանով, որ այդ գումարը բանկում պահվի, և դրա տոկոսներով մի աշակերտ պահեն. այդ աշակերտը պետք է լիներ Բարսեղ Աղաջանյանցի ազգից, եթե ոչ, Գրիգոր Մուքիի Բարսեղյանցի ազգից, եթե նրանք էլ չունենան կամ չկամենան սովորել, պետք էր ընդունել մի քահանայորդի:

[245] Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 221:
[246] Մանրամասն տե՛ս http: //www.shushi.org/education.php.

Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսին ուղղված՝ Բաքու քաղաքի վաճառական Քրիստափոր Գրիգորի Թումայանցի հայտարարության համաձայն՝ նրա հայրը՝ շուշեցի Գրիգոր Հայրապետի Թումայանցը, 1892 թ. հունիսի 22-ին կազմած ինքնագրով, բայց ոչ նոտարական կտակով, ավանդել է ժառանգներին աստվածահաճո նպատակների համար հատկացնել 75.000 ռուբլի: 1894 թ. Գրիգոր Թումայանցի մահից հետո ժառանգները, ցանկանալով հավերժացնել իրենց հոր հիշատակը, որոշում են կտակարարի տրամադրած 75.000 ռուբլու փոխարեն 83.000 ռուբլի հատկացնել կրոնական և ուսումնական նպատակների համար: Այս գումարից Շուշիին է հատկացվել 5.000 ռուբլի՝ հօգուտ թեմական հոգևոր դպրոցի: Այս գումարը պետք է պահվեր անձեռնմխելի, իսկ տոկոսները ամեն տարի գործադրվեին ի հիշատակ Թումայան ամուսինների՝ որդեգիրներ պահելու համար, իսկ դպրոցի վարչությունը յուրաքանչյուր անգամ պարտավոր էր Վեհափառին տեղեկացնել ընտրված որդեգիրների մասին: Մնացած գումարը հատկացվել է այլ քաղաքների կրոնական և ուսումնական հաստատություններին[247]: Այս աստվածահաճո գործի համար Գրիգոր Թումայանցի ժառանգները Հայրապետական օրհնության են արժանանում[248]:

1896թ. շուշեցի Բաբա Բեգլարյանը հօգուտ Շուշիի թեմական դպրոցի մի հողամաս է կտակել, որից ստացված միջոցներով պետք էր չորս որդեգիրների ուսման վճարը իրականացվեր: Գործը կիսատ է մնացել ու դիվան հանձնվել[249]:

Համաձայն Էջմիածնի հայ-լուսավորչական սինոդի հոգևոր կտակների վերաբերյալ 1897 թ. թիվ 21 գործի՝ Համբարձում Հարությունի Ստեփանյանցը, 1894 թ. կտակ է կազմել, որով հատկացրել է 10.000 ռուբլի Շուշիի հոգևոր թեմական դպրոցի կարիքների, ինչպես նաև աղքատ ընտանիքներից մեկական տղայի և աղջկա դաստիարակության համար, որոնք պետք է համարվեն իր անվանական թոշակառուները[250]:

---

[247] ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 286, թ. 2 շրջ.:
[248] Նույն տեղում, թ. 4 շրջ.:
[249] ֆ. 57, ց. 2, գ. 1553, թ. 27 շրջ.:
[250] Նույն տեղում, թ. 147-148:

Կտակների վերաբերյալ սինոդի 1900 թ. գործի համաձայն՝ շուշեցի Հովհաննես Գրիգորի Խունունցը իր կտակի 6-րդ կետի բ մասով Շուշիի հայկական թեմական հոգևոր դպրոցին 150 ռուբլի է կտակել, իսկ մեկ այլ շուշեցի՝ Առաքել Քոչարյանցը 200 ռուբլի:

Շուշեցի Բալասան Դաստակյանցը 1901 թ. թեմական դպրոցին 800 ռուբլի և մի քանի իրեր է կտակել, բայց կտակատար Իսահակ Թադևոսյանցը ներկայացրել է միայն 400 ռուբլի՝ հայտնելով, որ մնացյալը ծախսված է կտակողի թաղման համար[251]:

1911 թ. շուշեցի Թեոդորոս Խաչիյանցը կտակել է քաղաքի թեմական դպրոցին 1.500 ռուբլի:

Թեմական դպրոցի գործունեությունն ընդհատվեց 1920 թ. մարտին Շուշի քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում:

Շուշիի հայությունն Արևելյան Հայաստանում առաջինը լուրջ ուշադրություն դարձրեց աղջիկների կրթության գործին, և այդ հարցում իրենց մանկավարժական նվիրվածությամբ ակտիվ դերակատարություն ունեցան հենց արցախցի կին լուսավորիչները[252]: Կնոջը կրթելուն և նրան հասարակական ակտիվ գործունեության մղելուն մեծ նշանակություն էր տալիս Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանը: Նա 1852 թ. ապրիլի 18-ին Շուշիի կոնսիստորիայի խորհրդի նիստում առաջարկում է Շուշիում բացել օրիորդաց դպրոց, քանի որ կինն ավելի շատ է շփվում երեխաների հետ, և դրա համար էլ նրա ազդեցությունը մեծ է ընտանեկան դաստիարակության մեջ[253]: Այդ գործին նվիրվեցին առաջադեմ գործիչներ Պ. Ծանշյանը, Պ. Պռոշյանը, Հ. Հախումյանը, Մ. Հախումյանը, և ուրիշներ, որոնց նախաձեռնությամբ 1864թ. Շուշիում հիմնվեց □Դպրոցասեր հայուհյաց ընկերություն□-ը[254]: □Դպրոցասեր հայուհյաց ընկերություն□-ը կարևոր նշանակություն տալով աղջիկների կրթության և դաստիարակության հարցերին, ակտիվ մասնակցություն ունեցավ

[251] Նույն տեղում, թ. 43 շրջ.:
[252] Մանրամասն տե՛ս Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, էջ 336-354:
[253] Հարությունյան Մ. Գ., Արցախի մշակույթի ականավոր գործիչների լուսավորական գործունեությունը (1850-1920 թթ.), ԼՀԳ, 2005, հմ. 3, էջ 161:
[254] Հարությունյան Մ. Գ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստ., 2010, էջ 21:

իգական դպրոցներ հիմնելու գործին: Այսպես, Դպրոցասեր հայուհյաց ընկերության անմիջական օժանդակությամբ 1864 թ. ապրիլի 7-ին Շուշիում բացվեց օրիորդաց դպրոց մեծահարուստ Համբարձում Հախումյանի սեփական տանը՝ Մարիամ Հախումյանի միջոցներով և տնօրինությամբ: Վերջինիս խրախուսել և մեծապես օգնել էին այն ժամանակ թեմականի տեսուչ Պետրոս Ծանշյանը և ուսուցիչ Պերճ Պռոշյանը: Դպրոցի դրական ազդեցությունը կանանց վրա զգալի էր: Ժամանակի մամուլի էջերում շատ նշանավոր հայեր ողջունել են Արցախի թեմական առաջնորդ Ստեփան արքեպիսկոպոս Բաղալյանի թույլտվությամբ հաստատված՝ «Ղարաբաղի Սուրբ Մարիամ Օրիորդաց ուսումնարան» անվամբ կրթօջախի բացումը: Այս դպրոցի բացումն այնքան մեծ իրադարձություն էր, որ անգամ փոխարքայի կին, մեծ իշխանուհի Օլգա Ֆյոդորովնան Մարիամ Հախումյանին հատուկ շնորհակալություն հայտնեց[255]:

Դասերն ընթանում էին Հախումյանների տան հինգ սենյակներում: Տեսուչ է նշանակվում Պետրոս Ծանշյանը, տեսչուհի՝ Մարիամ Հախումյանը, իսկ վերակացու՝ Եղիսաբեթ Սիմոնյանը: Շուշիի օրիորդաց դպրոցն աչքի էր ընկնում ընդգծված կարգ ու կանոնով, ուսուցիչների ընտրությամբ, որոնցից մեկը մեծ վիպասան Պերճ Պռոշյանն էր: Այստեղ բարձր մակարդակի վրա էր աղջիկների կրթման և դաստիարակման գործը: Մարիամ Հախումյանը խոստացել էր ուսումնարանի վարձը իր սեփականությունից վճարել և իր հաշվին պահել երկու աղքատ աշակերտուհի[256]: Դպրոցում ուսուցումը հայերեն է տարվել: Դասավանդվել են հայերեն, ռուսերեն, հայոց պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն, վայելչագրություն, ձեռագործ, նկարչություն, երգեցողություն[257]: Դպրոցը գոյատևում էր «երեք տեսակ աղբիւրից. հոգաբարձուհեաց տարեկան տուրքերից, որդեգրուհեաց թոշակից եւ բարերարաց նուիրատուութիւնից»[258]: Սակայն այսպիսի վիճակով դպրոցը երկար չի կարողանում

[255] Տե՛ս Ղարաբաղու տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացուիլը, Շուշի, 1864:
[256] Մանրամասն տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1864, մարտի 14, ապրիլի 4:
[257] Մանրամասն տե՛ս Լէօ, նշվ. աշխ., էջ 290-302: Խուդոյան Ս., նշվ. աշխ., էջ 375-377:
[258] Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), էջ 301:

շարունակել իր գործունեությունը: Այն փակվում է 1872 թ.: Այդ առնչությամբ 1884 թ. նշվում էր, որ այն զոհ եղավ «խարդախ մարդկանց ինտրիգներին»[259]:

Մարիամյան դպրոցի փակվելուց որոշ ժամանակ անց՝ 1879 թ. մարտի 13-ի Հայրապետական կոնդակով Շուշիի առաջնորդական փոխանորդ Արիստակես վարդապետ Սեդրակյանի ջանքերով բացվեց Հռիփսիմյան իգական դպրոց[260]: Նրա գրության համաձայն՝ դպրոցի ֆինանսական աղբյուրները պատահական էին և սակավ, ուստի խնդրում էր օգտվել վիճակային արդյունքներից[261]: 1884 թ. Ղարաբաղի թեմի ծխական դպրոցների թեմական տեսչի ներկայացրած տեղեկագրի համաձայն՝ Հռիփսիմյան դպրոցը ժամանակավորապես գործում էր Արզուման Բաբալյանցի տանը՝ Կուսանաց անապատի մոտակայքում: Այն ուներ 2 դասարան՝ 50 աշակերտով[262]:

Համաձայն Ղարաբաղի թեմի տեղեկագրերի՝ Շուշիում 1886 թվականին բացվում է ևս մեկ՝ «Մարիամյան» անունը կրող օրիորդաց դպրոց[263]: 1886/87 թթ. դպրոցում սովորում էին 160-165 աշակերտուհիներ, որոնց թիվը հաջորդ ուսումնական տարում հասնում է 196-ի, և որոնցից 46-ը «ձրիավարժ» էին[264]: Տարեցտարի դպրոցի աշակերտուհիների թիվն ավելանում էր, ինչը վկայում է բնակչության շրջանում կանանց կրթության դերի բարձրացման մասին: Այսպես, 1891/92 ուս. տարում՝ 214 աշակերտուհի[265], 1892/93 ուս. տարում՝ 268[266], հաջորդ՝ 1894/95 ուսումնական տարում այն հասնում է 333-ի[267]:

Ըստ 1895 թ. թեմի եկեղեցական-ծխական ուսումնարանների տեղեկագրի՝ Մարիամյան դպրոցում ուսուցչություն էին անում Կատարինե Սպանդարյանցը, Համազասպ քահանա Տեր-Ավետիքյանցը, Վարվառե Լազարյանցը, Սոֆիա Հասան-Ջալալյանցը, Տալիթե

---

[259] Տե՛ս http: //www.shushi.org/education.php.
[260] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 149, թ. 13: Լէօ, նշվ. աշխ., էջ 385-386: Խուդոյան Ս., նշվ. աշխ., էջ 377-378:
[261] ֆ. 57, ց. 1, գ. 149, թ. 13 շրջ.-14:
[262] ֆ. 56, ց. 10, գ. 883, թ. 162 շրջ.: «Մշակ», 1879, հուլիսի 18:
[263] ՀԱԱ, ֆ. 56, ց. 10, գ. 914, թ. 33 շրջ.-34: Գ. 921, թ. 248-249:
[264] ֆ. 7, ց. 1, գ. 9, թ. 47 շրջ.: ֆ. 48, ց. 1, գ. 305, թ. 48 շրջ.:
[265] ֆ. 56, ց. 15, գ. 254, թ. 6-7:
[266] Նույն տեղում, թ. 29-30:
[267] Նույն տեղում, գ. 280, թ. 20-21: Համառօտ հաշիւ մտից եւ ծախուց Շուշու «Ս. Մարիամեան» հայոց օրիորդաց եկեղեցական-ծխական երկդասեան ուսումնարանի վասն 1894-95 դպրոցական ամի, Շուշի, 1895:

Դավթյանցը, Գայանե Առստամյանցը, Գաբրիել Ղուլիքևխայանցը, Հովսեփ Ջանումյանցը, Միքայել Տեր-Հարությունյանցը, Գևորգ Հախինյանցը[268]:

1896թ. Շուշեցի Բաբա Բեգլարյանը հօգուտ Մարիամյան օրիորդաց ուսումնարանի մի հողամաս է կտակել, որից ստացված միջոցներով պետք էր չորս որդեգիրների ուսման վճարը իրականացվեր[269]: Համաձայն սինոդի կտակների վերաբերյալ գործի՝ Շուշեցի Հովհաննես Գրիգորի Խունունցը իր կտակի 6-րդ կետի բ մասով՝ հօգուտ աղքատուսանողների՝ 1) կտակել է քաղաքի հայկական եկեղեցական-ծխական իգական ուսումնարաններին 150 ռուբլի, իսկ որին ինչքան՝ թողել է հոգաբարձուների տնօրինությանը, 2) Մարիամյան դպրոցին՝ 150 ռուբլի[270]:

Օրիորդաց դպրոցը 1896 թ. փակվում է և վերաբացվում է 1905 թ. փետրվարին[271]: 1906 թ. տվյալներով՝ աշակերտուհիների թիվը 150-ից ավելի էր[272]: Թեև կյանքի վերջում մեծ բարերար Թադևոս Թամիրյանցը իր ունեցվածքից 100 000 ռուբլի է կտակել դպրոցին[273], հավանական է, որ այն նպատակային չի ծախսվել, որովհետև 1907/08 ուսումնական տարվա սկզբից դպրոցը հանձնվում է թեմական դպրոցի հոգաբարձության խնամքին[274]: 1908/09 ուսումնական տարում կրթօջախը գործում էր 5 բաժանմունքով, և ուներ 5 տարվա դասընթաց: Դպրոցում սովորում էին 230 աշակերտ-աշակերտուհիներ՝ 37 տղա և 193 աղջիկ, պաշտոնավարում էին Թեոդորոս Տեր-Հովհաննիսյանը, Իսաջան Տեր-Հովհաննիսյանը, Կարապետ Վարդապետյանը, Եվգինե Տեր-Բաղդասարյանը, Շուշանիկ Բաբայանը և ուրիշներ[275]:

1909/10 ուսումնական տարվա ընթացքում դպրոցին դրամական մուտք է եղել աշակերտների ուսման վարձից 2.000 ռուբլի և մոսկվաբնակ Շուշեցի Ժամհարյան եղբայրների նվիրադրամը, որը տրվում է յուրաքանչյուր տարի՝ 200 ռուբլի չափով: Դպրոցը

---

[268] Ֆ. 57, ց. 2, գ. 849, թ. 10-16:
[269] Նույն տեղում, գ. 1553, թ. 27 շրջ.:
[270] Նույն տեղում, թ. 165-165 շրջ.:
[271] ՀԱԱ, Ֆ. 57, ց. 2, գ. 905, թ. 14:
[272] Ֆ. 227, ց. 1, գ. 105, թ. 5:
[273] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 335:
[274] Ֆ. 57, ց. 2, գ. 1908, թ. 9:
[275] Ֆ. 56, ց. 15, գ. 543, թ. 43:

տեղավորված էր առաջնորդարանի շինության մի մասում, որը կազմում էր շինության մոտավորապես կեսը, սակայն զուրկ էր անհրաժեշտ հարմարություններից[276]: Բաքվի հայոց եկեղեցիների գործակալի առաջարկով[277], բարեգործական նպատակով, Մարիամյան օրիորդաց դպրոցին 50.000 ռուբլի գումար նվիրելու ցանկություն էր հայտնել նաև Նիկոլայ Առափելյանցը (Առաֆելյանց), նմանակով այդպիսի ցանկություն էին հայտնել նաև բաքվաբնակ շուշեցիներ Բեգլարյանցը և Սարուխանյանցը[278], իսկ շուշեցի Թեոդորոս Խաչիյանցը կտակել է 1000 ռուբլի:

1911/12 ուսումնական տարում դպրոցում դասավանդում էին նաև բժիշկ Ն. Եարամիշյանը (տեսուչ), գրող Վրթանես Փափազյանը, Լևոն Թախտաճյանը, Գրիգոր Տեր-Պողոսյանը, Անուշավան Տեր-Միքայելյանը, Ստեփան Դեմուրյանը և ուրիշներ: Դպրոցն ուներ աղքատախնամ ընկերություն՝ կազմված դպրոցի ուսուցիչներից, որը չքավոր աշակերտներին օգնության ձեռք էր մեկնում՝ ձրիաբար նրանց հագուստ, գրքեր և այլ դպրոցական պիտույքներ տալով[279]:

Դպրոցը գործունեությունը դադարեցրեց 1920 թ. ադրբեջանցիների կազմակերպած կոտորածների արդյունքում: Իսկ արդեն խորհրդային տարիներին Մարիամ-Ղուկասյան դպրոցը գործել է՝ որպես Մ. Ֆրունզեի անվան ուսումնարան:

Շուշիի գավառի Փիրջամալ գյուղից բաքվաբնակ Միրզա Սարուխանյանցը և իր եղբայրը՝ Սարգիս Սարուխանյանցը իրենց հանգուցյալ ծնողների՝ Ազիզգյուլ և Միքայել Սարուխանյանցների հիշատակը հավերժացնելու համար Հայոց թեմական դպրոցին և նրա խնամքին հանձնված Մարիամյան օրիորդաց դպրոցին են նվիրում 1.500 ռուբլի, որը պետք է լիներ անձեռնմխելի գումար, և դրա տոկոսներով պետք է պահվեին որդեգիրները: Նրանք նաև թեմական դպրոցի և Մարիամյան օրիորդաց դպրոցի աղքատախնամ ընկերություններին են 100-ական ռուբլի հատկացնում[280]:

Սարուխանյանց եղբայրները, բացի նշյալ դպրոցներից, իրենց նվիրաբերումն են կատարել նաև Շուշիի ռեալական, քաղաքային և

---

[276] Ֆ. 57, ց. 2, գ. 932, թ. 3:
[277] Նույն տեղում, գ. 1830, թ. 53 շրջ.:
[278] Նույն տեղում, թ. 46 շրջ.:
[279] ՀԱԱ, Ֆ. 57, ց.2, գ. 1908, թ. 9-10:
[280] Նույն տեղում գ. 1590, թ. 1 շրջ.:

Մարինսկի օրիորդաց ռուսական դպրոցներին՝ 1.500 ռուբլի, թուրք հոգևորականության և բարեգործական ընկերության ենթակա դպրոցներին՝ 1.500 ռուբլի, Բարեգործական ընկերության Շուշիի ճյուղին՝ 500 ռուբլի: Վերոհիշյալ գումարները պիտի մնային անձեռնմխելի, և տոկոսներով պիտի պահվեին որդեգիր-որդեգրուհիներ: Նրանց բարեգործությունները սրանով չէին սահմանափակվում. Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու ծխական դպրոցին նվիրաբերել են 500 ռուբլի, Շուշիի ջուլհականոցին՝ 200 ռուբլի, իսկ նրանց կանայք նվիրել էին 500 ռուբլի՝ պայմանով, որ գումարը մնա անձեռնմխելի, իսկ տոկոսն ստանան Ղազանչեցոց եկեղեցու միաբան քահանաներն ու Կուսանաց վանքի կույսերը և ամեն տարի հոգեհանգիստ կատարեն հանգուցյալի հիշատակին Ս. Աստվածածնի տոնին՝ Ղազանչեցոց եկեղեցում, ավագ հինգշաբթի օրը՝ Կուսանաց վանքում: Սարուխանյանցների երեխաները նվիրել էին տաճկահայ գաղթականների օգտին 200 ռուբլի, թեմական դպրոցի երգեցիկ քառաձայն խմբի աղքատ աշակերտներին՝ 100 ռուբլի, աղքատներին բաժանելու համար՝ 20 ռուբլի: Նրանց ընդհանուր նվիրաբերած գումարը հասնում էր մոտ 37.000 ռուբլու (ներառած նաև իրենց ծննդավայր Փիրջամալ գյուղի հայոց եկեղեցական-ծխական դպրոցի նոր շենքի կառուցումը՝ 6.000 ռուբլի արժողությամբ, նաև հատկացրել են 24.000 ռուբլի, որը պետք է լիներ անձեռնմխելի գումար, ու նրա տոկոսը՝ տարեկան 1.200 ռուբլի, պետք է տրվեր դպրոցի պահպանությանը, որտեղ ուսումը լինելու էր ձրի, և տրամադրվելու էին Փիրջամալ ու շրջակա գյուղերի չքավոր դասակարգի երկսեռ մանուկներին)[281]: Այս բարեգործությունների համար 1916 թ. մարտի 11-ի Հայրապետական կոնդակով Միրզա և Սարգիս Միքայելի Սարուխանյանց եղբայրներն արժանանում են Վեհափառի օրհնությանը[282]:

Հայ ժողովրդին բաժին հասած բազմատեսակ աղետների հետևանքով որբացած հայ մանուկներին օգնելու նպատակով Շուշիի կանանց հանձնաժողովը հիմնում է որբանոց-դպրոց[283]: Վեհափառը Բաքվի հայոց եկեղեցիների գործակալ Զավեն եպիսկոպոսին

[281] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1590, թ. 1 շրջ.:
[282] Նույն տեղում, թ.4 շրջ.:
[283] ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թ. 796:

հանձնարարում է սատարել բարեգործական այդ ձեռնարկությանը ու այդ գործի հաջողությունն ապահովելու համար դիմել բարեգործ անձանց և հաստատություններին[284]: Զավեն եպիսկոպոսը դիմումներ է հղում բարերար Մովսես Բուդաղյանցին[285], Մարդասիրական ընկերությանը, Նպաստամատույց մասնաժողովին[286] և այլ բարերարների: Թիֆլիսի Նպաստամատույց հանձնաժողովը խոստանում է Շուշիի որբանոց-դպրոցին հատկացնել 3-4 հազար ռուբլի գումար[287]: Սակայն, որբանոցին տրվող օգնությունը սուղ էր: Հատկապես առաջին տարիներին որբանոցի վիճակը հուսահատական էր: Զավեն եպիսկոպոսի միջոցով որբանոցին էր հատկացվել 200 ռուբլի, ինչում ավանդ ունեին Սարգիս Խանդամիրյանցը և տիկին Բահաթրյանը[288]:

1911 թ. մարտի 25-ին Շուշիի որբանոցի հոգաբարձությունը «Մշակ» թերթի խմբագրությանն է ներկայացնում որբանոցի գոյությունը պահպանելու համար նվիրատվություններ կատարած անձանց ցանկը՝ նվիրաբերված գումարների տեղեկացումով՝ թերթում նվիրատուներին շնորհակալություն հայտնելու և այդ տվյալները հրապարակելու խնդրանքով: Վերջիններս Բաքու, Կրասնովոդսկ, Սամարղանդ և այլ քաղաքներից էին, մոտ 130 նվիրատուներ՝ 500 ռուբլուց քիչ ավելի գումարով, որը հանգանակել էր հոգաբարձության անդամ Մ. Եղիազարյանցը, իսկ 250 ռուբլի՝ Մնացական Խունունցը[289]:

Որբանոցին նվիրատվություններ են կատարել նաև Արցախի տարբեր բնակավայրերի հայերը, որոնք նույնպես անմասն չմնացին այդ ծանր պահին: 1911թ. Շուշիի բնակիչ Թեոդորոս Խաչիյանցը Շուշիի որբանոցին կտակել է 250 ռուբլի, չքավորներին՝ 200 ռուբլի, մարաղացի Առաքել Տեր-Ներսիսյանցը՝ 15 ռուբլի[290]: Իսկ մեծ բարերար Թադևոս Թամիրյանը 100 000 ռուբլի հատկացրել է աղքատներին և որբերին[291]:

---

[284] Ֆ. 57, ց. 2, գ. 1830, թ. 12:
[285] Նույն տեղում, թ. 6:
[286] Նույն տեղում, թ. 17:
[287] ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թ. 797:
[288] Ֆ. 57, ց. 2, գ. 1590, թ. 18 շրջ., 19:
[289] ՀԱԱ, Ֆ. 227, ց. 1, գ.159, թ. 3-5:
[290] Ֆ. 200, ց. 1, գ. 1553, թ. 44:
[291] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 335:

Շուշիում կային երեք միադասյա եկեղեցական-ծխական դպրոցներ, որոնցից Թադևոսյանը և Ագուլյացը՝ երկսեռ, Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցու միադասյանը՝ արական[292]:

Թադևոսյան երկսեռ միադասյա դպրոցը գտնվում էր Վերին Թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու բակում: Դպրոցը հիմնվել է 1895 թ. բաքվաբնակ շուշեցի Իսահակ Մաթևոսի Թադևոսյանցի մեկենասությամբ: 1896 թ. ցարական կառավարության հրամանով մյուս դպրոցների հետ միասին փակվում է նաև այս դպրոցը և վերաբացվում միայն 1905 թ.՝ ազգային դպրոցները վերաբացելու թույլտվություն ստանալուց հետո[293]:

1908/1909 ուսումնական տարում դպրոցը բաղկացած էր երկու բաժանմունքից, որտեղ սովորում էին 70 տղա և 31 աղջիկ: Դպրոցում դասավանդում էին երեք ուսուցիչ՝ Արամ Տեր-Իսրայելյանը, Հակոբ Խանլարյանը և Մուշեղ քահանա Վարդապետյանը[294]:

Հաջորդ ուսումնական տարում դպրոցն ուներ երեք բաժանմունք՝ 112 աշակերտներով՝ 68 տղա և 44 աղջիկ: Ուսուցիչներն էին Ասլան Միրզայանը (նաև՝ Աբասյանց) և Արամ Տեր-Իսրայելյանը: Այստեղ սովորում էին քաղաքի ամենաչքավոր երեխաները: Ուսումը դպրոցում ձրի էր, երեխաները ձրիաբար ստանում էին նաև դպրոցական պարագաներ, ծայրահեղ չքավորները՝ նաև հագուստ: Թադևոսյան դպրոցը պահվում էր բաքվաբնակ շուշեցի Իսահակ Թադևոսյանի կտակած 30.000 ռուբլի գումարի տոկոսներով, որոնք տարեկան կազմում էին 1.600 ռուբլի, և որոնցով հոգում էին դպրոցի ծախսերը: Մայր գումարը պահվում էր բանկում՝ դպրոցի անունով, տոկոսների մնացորդը կցվում էր մայր գումարին: Դպրոցն ուներ երկու սենյակից և պատշգամբից բաղկացած լավ կահավորված սեփական շինություն, որը կառուցվել էր բարերար Իսահակ Թադևոսյանի միջոցներով[295]: Համաձայն Ղարաբաղի հայոց եկեղեցական-ծխական դպրոցների թեմական տեսուչ Ստեփան Տեր-Ավետիքյանի գրության՝ Թադևոսյան դպրոցը ամբողջ թեմում

[292] Ֆ. 57, ց. 2, գ.1908, թ. 11 շրջ.:
[293] Նույն տեղում, գ. 905, թ. 14:
[294] Ֆ. 56, ց. 15, գ. 543, թ. 25:
[295] ՀԱԱ, Ֆ. 57, ց. 2, գ. 932, թ. 3 շրջ.:

նյութապես լիովին ապահովված միակ եկեղեցական-ծխական դպրոցն էր[296]:

Բացի դպրոցը նյութապես ապահովելուց՝ մեծ բարերարին մտահոգում էին նաև դպրոցական ծրագրի ու, դրա հետ կապված, սաների՝ հետագայում ավելի բարձրակարգ կրթություն ստանալու հարցերը: Այդ մասին է վկայում Ի. Թադևոսյանցի՝ Ս. Էջմիածնի հայոց լուսավորչական սինոդին ուղղված հետևյալ խնդրագիրը. «Շուշի քաղաքի Ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցուն կից իմ անունով, այն է՝ «Թադէոսեան» ծխական երկսեռ դպրոցի դասաւանդութիւնը կատարում է գիւղական ծխական դպրոցների ծրագրով, որին ղեկավարում է թեմական տեսուչը: Այդ ծրագիրը բնաւ չէ համապատասխանում թեմական դպրանոցների ծրագրին, որից առաջանում է այն անհարմարութիւնը, որ իմ դպրոցը աւարտող սաները հեշտութեամբ չեն կարողանում մտնել Ղարաբաղի թեմական դպրանոցը, ուր աշակերտների ընդունելութիւնը կատարում է կօնկուրս քննութիւնով. այդպիսով յիշեալ սաները, որոնք ամենաաղքատ և չքաւոր դասակարգից են, մնում են թերուս և զուրկ գէթ միջնակարգ կրթութիւնից: Յայտնելով վերոյիշեալի մասին Ս. Սինօդիդ՝ ամենախոնարհաբար խնդրում եմ՝ կարգադրել յիշեալ իմ անունով ծխական դպրոցի ուսումնական մասի ղեկավարութիւնը յանձնել Շուշուայ թեմական դպրանոցի տեսչութեանը, որտեղ դասատուութիւնը աւանդուի թեմական դպրանոցի ծրագրով նորա տեսչի հայեցողութեամբ, որպէս զի աւարտող սաները հեշտութիւն ունենան մտնել դպրանոցը միջնակարգ ուսում ստանալու իմ որդեկրութեամբ, այդ մասին և յայտնել ինձ անդ հարկ եղած նիւթական օգնութիւնս հասցնելու»[297]: Իսահակ Թադևոսյանի սկսած բարենպատակ գործունեությունը նրամահից հետո շարունակում են ժառանգները: Նրանք հոր մահից հետո կրթական գործին են նվիրաբերում 5.000 ռուբլի[298]:

Շուշիի եկեղեցական-ծխական դպրոցները պահվում էին եկեղեցու արդյունքներով, ուսումնավարձով, ինչպես նաև նվիրատվություններով: Բացառություն չէր նաև Մեղրեցոց

[296] Նույն տեղում, գ. 905, թ. 27, գ. 913, թ. 9:
[297] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 905, թ. 16 շրջ.:
[298] Նույն տեղում, գ. 1902, թ. 26-27 շրջ.:

միադասյա արական դպրոցը, որը գտնվում էր Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցու բակում: Այն բացվել էր 1907 թ. աշնանը: Դպրոցը բաղկացած էր երկու բաժանմունքից, որտեղ 1908/09 ուսումնական տարում սովորում էին 70 աշակերտներ, դասավանդում էին 2 ուսուցիչ՝ Սամուել քահանա Գասպարյանը և Հմայակ Վարդապետյանը: Ուսման վարձն ըստ կարողության էր՝ 10 ռուբլի, 8 ռուբլի, 6 ռուբլի: Սովորողներից մոտ 35 հոգի ձրիավարժ էին՝ իբրև չքավոր: Դպրոցի շինությունը, եկեղեցապատկան լինելով, ուներ անհարմարություններ[299]: Դպրոցի տարեկան եկամուտները ձևավորվում էին աշակերտների ուսման վարձից՝ 200 ռուբլի, և Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցու հատկացրած նպաստից՝ մոտ 500 ռուբլի[300]:

Այս դպրոցին իր ավանդն էր բերել Թեոդորոս Խաչիյանցը, ով դպրոցի վերանորոգության նպատակով ներդրել էր 3.000 ռուբլի և կառուցել երեք սենյակից բաղկացած երկրորդ հարկ: Մանուկ սերնդի ուսման ու դաստիարակության գործի համար Խաչիյանցի կատարած բարեգործությունը արժանացել է Վեհափառի գոհունակության և 1913 թ. փետրվարի 8-ի կոնդակով օրհնվել[301]:

Շուշիի երրորդ միադասյա դպրոցն Ագուլյաց եկեղեցու երկսեռ դպրոցն էր, որը գտնվում էր Ագուլյաց Ս. Աստվածածին եկեղեցու բակում: Դպրոցը բացվել էր 1908թ. սեպտեմբերին[302]: Առաջին տարում այն բաղկացած էր մեկ բաժանմունքից, որտեղ սովորում էին 42 հոգի՝ 23 տղա և 19 աղջիկ[303]: Հաջորդ ուսումնական տարում աշակերտների թիվը հասնում է 60-ի՝ 36 տղա, 24 աղջիկ: Դպրոցի սաները քաղաքի ամենաչքավոր դասից էին: Այս դպրոցում ուսուցչություն էր անում միայն Գրիգոր Ղարագեոզյանը, ով ավարտել էր Ներսիսյան հոգևոր դպրոցի լրիվ դասընթացը: Այս դպրոցում ուսումը ձրի էր: Երեխաները ձրիաբար ստանում էին նաև դպրոցական պարագաներ, ամենաչքավորները՝ հագուստ: Դպրոցի շինությունը պատկանում էր Ագուլյաց եկեղեցուն, որն ուներ անհրաժեշտ հարմարություններ: Ագուլյաց դպրոցը պահվում էր

[299] Ֆ. 56, ց. 15, գ. 543, թ. 25:
[300] Ֆ. 57, ց. 2, գ. 932, թ. 3 շրջ.:
[301] Նույն տեղում, գ. 309, թ. 20:
[302] Ֆ. 56, ց. 15, գ. 620, թ. 11:
[303] ՀԱԱ, Ֆ. 56, ց. 15, գ. 543, թ. 26:

Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի հաշվով: Մասնաճյուղը հոգում էր դպրոցի համարյա բոլոր ծախսերը[304]:

Շուշիում գործում էր նաև Կուսանաց վանքի եկեղեցական-ծխական դպրոցը: Այն բացվել է 1914 թ. Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն եպիսկոպոսի ջանքերով. «Ծխականներից զուրկ և անշուք դրության մեջ գտնվող քաղաքիս Կուսանաց վանքը մասամբ շենացնելու և նրա բարոյական նշանակությունը բարձրացնելու համար այս ուսումնական տարուանից բաց եմ արել այդ վանքի բակում հայոց եկեղեցական-ծխական օրիորդաց դպրոց, որտեղ կրթում ու դաստիարակում են գլխաւորապէս պատերազմի կոչուած զինուորների և ծայր աստիճան չքաւոր ծնողների զաւակներ՝ առանց որևէ ուսման վճարի»[305]: Համաձայն Հայրապետական դիվանի 1914 թ. հոկտեմբերի 8-ի տվյալների՝ վարդապետը խնդրում է Վեհափառին թեմի նորաբաց եկեղեցական-ծխական դպրոցների անունով, որոնց թվում էր նաև Կուսանաց վանքի օրիորդաց դպրոցը, օրհնության և հաստատման կոնդակներ շնորհել [306]:

Նկատի ունենալով վանքի նյութական անձուկ վիճակը և այն, որ վանքին ու նրան կից նորաբաց դպրոցին ոչ մի օգնություն չի տրվում, Զավեն եպիսկոպոսը դիմում է բաքվաբնակ շուշեցի Արսեն Կրասիլնիկյանին և նրա մորը՝ Մարիամ Կրասիլնիկյանին՝ խնդրելով, որ նա իր վաղամեռ քրոջ Սոֆիա (Սոփիա) Կրասիլնիկյանի հիշատակը հավերժացնելու համար, ով թաղված էր նույն վանքի գավթում, նորաբաց դպրոցի պահպանության հոգսն իր վրա վերցնի՝ ապահովելով նրան մի գումարով, որի տոկոսները կկազմեն մոտավորապես 400-500 ռուբլի, և դպրոցը կանվանվի հայոց եկեղեցական-ծխական վանական դպրոց՝ Սոֆիա Կրասիլնիկյանի անվամբ: Հաշվի առնելով, որ Կուսանաց վանքի բակում եղած երկու սենյակներն այնքան էլ հարմար չէին դպրոցի համար, վարդապետը բանակցում էր նաև Կրասիլնիկյանի միջոցներով նոր դպրոցական հարմար շենք կառուցելու նպատակով: Զավեն եպիսկոպոսի դիմումն Արսեն Կրասիլնիկյանի կողմից ստանում է հետևյալ պատասխանը.

[304] Ֆ. 57, ց. 2, գ. 932, թ. 3 շրջ.- 4:
[305] Նույն տեղում, գ. 1039, թ. 57:
[306] Նույն տեղում, թ. 19:

«...Վերադառնալով Բաքու և ստանալով Ձերդ Բարձրապատութեան գրութիւնը, շտապում եմ յայտնել Ձեզ իմ համաձայնութիւնը՝ պահպանել Կուսանաց վանքի բակում իմ հանգուցեալ քրոջ՝ Սոփիայի անունով դպրոց՝ ընդ միշտ տարեկան 400 ռուբլի վճարով»[307]: Դպրոցի պահպանության համար գումար հատկացնելու, աղքատ դասի մատաղ սերնդի համար կրթություն և դաստիարակություն ապահովելու բարեգործության այդ մեծ օրինակը խրախուսվում է նոյեմբերի 12-ի Հայրապետական կոնդակով, կատարվում է Կուսանաց վանքի գավիթում գտնվող եկեղեցական-ծխական դպրոցի բացումը, և պատվիրվում է այն կոչել «Սոփիա Կրասիլնիկեան եկեղեցական-ծխական դպրոց»[308]:

Հայրապետական կոնդակով նոյեմբերի 13-ին Արսեն Կրասիլնիկյանը արժանանում է Վեհափառի օրհնությանը[309]:

Շուշիի ծխական դպրոցներին իրենց ավանդն են բերել ծնունդով շուշեցիները նույնպես. 1896թ. նոյեմբերի 3-ին շուշեցի ալեքսանդրապոլաբնակ Ալեքսանդր Հովհաննեսի Բաբայանցը կազմում է իր կտակը, որի համաձայն, ի թիվս այլ քաղաքների տարբեր հաստատությունների հատկացված նյութական միջոցների, կտակել է ևս 25 ռուբլի Շուշիի հայկական ծխական դպրոցներին, Շուշի քաղաքի աղքատ հայերի ապաստարանին[310]: Նույն Ալեքսանդր Բաբայանցը 1899 թ. Շուշիի ծխական դպրոցներին և այլ հաստատություններին 85 ռուբլի[311] է կտակել, որից 50 ռուբլին՝ Շուշիի ծխական դպրոցներին: Այն սակայն, 1901 թ. նոյեմբերի 30-ին ստացել է սինոդը, քանի որ դպրոցներն արդեն փակված էին[312]:

1900 թ. շուշեցի Հովհաննես Գրիգորի Խունունցը իր կտակի 6-րդ կետի բ մասով Շուշիի Քաղաքային դպրոցին հատկացրել է 50 ռուբլի[313]:

Բարերարների շնորհիվ Շուշիում բացված հաջորդ դպրոցը Մարիամ-Ղուկասյան օրիորդաց դպրոցն էր: Այդ դպրոցի

---

[307] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1039, թ. 57 շրջ.:
[308] Նույն տեղում, թ. 58 շրջ.:
[309] Նույն տեղում, թ. 54-56:
[310] Նույն տեղում, գ. 1553, թ. 1187 շրջ.:
[311] Նույն տեղում, թ. 43 շրջ.:
[312] Նույն տեղում, թ. 28.:
[313] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1039, թ. 165-165 շրջ.:

մեկենասները սերում էին մեծ անցյալ ունեցող ընտանիքներից մեկից՝ Ղուկասյաններից, որոնք հայտնի էին որպես մանուֆակտուրայի առևտրով զբաղվողներ, նավթարդյունաբերողներ, հասարակական գործիչներ և, ի վերջո, բարերարներ: Դպրոցը կառուցվում է վերոհիշյալ ընտանիքի զավակներ շուշեցի Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ եղբայրների հոժարությամբ՝ իրենց հանգուցյալ քրոջ՝ Մարիամ Ղուկասյանի հիշատակը հավերժացնելու համար:

1912 թ. թեմական դպրոցի հոբելյանը նշելու առիթով և, ընդհանրապես, թեմի կրթական գործի անապահով դրությունը բարելավելու մտադրությամբ թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն եպիսկոպոսը Վեհափառի համաձայնությամբ լինում է Թիֆլիս, Մոսկվա, Պետերբուրգ քաղաքներում և հանդիպում ղարաբաղցի դրամատեր ու ակնառու անձանց՝ նրանց աջակցությունը ստանալու համար: Պետերբուրգում Զավեն եպիսկոպոսը Ղարաբաղի թեմի նախկին առաջնորդ Աշոտ եպիսկոպոսի հետ միասին հանդիպում է Պողոս Ղուկասյանցին և հայտնում իր գալու նպատակը՝ խնդրելով Շուշիում գտնվող նրանց հայրական տունը և հանգուցյալ Մարիամ քրոջ անունով բանկում պահված 200.000 ռուբլին հատկացնել օրիորդաց միջնակարգ դպրոց հիմնելու գործին, որը կկոչվեր «Մարիամ Ղուկասյան» անունով: Նկատի ունենալով թեմի համար նման դպրոց հիմնելու անհրաժեշտությունը՝ Պողոս Ղուկասյանը հայտնում է իր համաձայնությունը և հանձնարարում Բաքվում հանդիպել իր եղբայր Արշակ Ղուկասյանի հետ: Ստանալով նաև վերջինիս համաձայնությունը՝ նրա առաջարկով Զավեն եպիսկոպոսը Ղարաբաղի թեմական դպրոցի տեսուչ Ներսես վարդապետի հետ միասին խորհրդակցում է Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունունցի հետ և որոշում փորձել բացել «Մարիամ Ղուկասյան» անունով օրիորդաց միջնակարգ դպրոց, իսկ ուշանալու դեպքում՝ շուտափույթ բացել Ղուկասյանի անունով եկեղեցական-ծխական դպրոց՝ մինչև միջնակարգ դպրոց բացելու արտոնություն ստանալը[314]:

[314] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 974, թ. 1-3 շրջ.:

Վերոհիշյալ համաձայնությունները ստանալուց հետո Զավեն եպիսկոպոսին և Մեսրոպ եպիսկոպոսին հանձնարարվում է մշակել հիմնվելիք Մարիամ-Ղուկասյան դպրոցի հիմնական կանոնները, որից հետո դիվանական խորհուրդը խմբագրում է այն և արձանագրում[315]:

Արշակ Ղուկասյանը Զավեն և Բաբկեն եպիսկոպոսների հետ քննարկում է հիմնվելիք դպրոցի հիմնական կանոններն ու կատարում մի քանի փոփոխություն: Հիմնական փոփոխությունն այն էր, որ իրենց տունը և նվիրաբերած գումարը՝ 200.000 ռուբլին, լինեին Ս. Էջմիածնի անունով, իսկ տոկոսները հատկացվեին Շուշիի դպրոցին[316]:

1913թ. հունիսի 20-ին և 22-ին Գևորգ Ե կաթողիկոսը կոնդակներ է հղում Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն եպիսկոպոսին[317] և եղբայրներ Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Հովսեփի Ղուկասյաններին[318], որոնցով հավանության է արժանացնում Շուշիում Մարիամ-Ղուկասյան օրիորդաց դպրոցի բացումն ու Հայրապետական կոնդակով հաստատում դպրոցի հիմնական կանոնները, Ղուկասյաններին օրհնում այդ բարենպատակ գործունեության համար: Արշակ Ղուկասյանի կատարած փոփոխությունների հիման վրա հաստատված Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցի նոր կանոններն ունեին նախկին կանոններից տարբերվող բովանդակություն[319]:

Արշակ Ղուկասյանը Զավեն եպիսկոպոսի հետ հերթական հանդիպման ժամանակ ընդունում է դպրոցի համար նոր շենք կառուցելու մասին վերջինիս խնդրանքը՝ հաշվի առնելով նվիրաբերված տան՝ որպես դպրոցական շենքի, անհարմարությունները, և որոշում է ևս 30.000 ռուբլի հատկացնել նոր շինվելիք դպրոցական շենքին՝ խնդրելով արագացնել այդ գործը: Անսալով դպրոցի կարիքներին նվիրաբերած 200.000 ռուբլու տոկոսի չբավականացնելու մասին վարդապետի խնդրանքին՝ Ա.

---

[315] Դպրոցի կանոնների մասին մանրամասն տե՛ս հավելվածում, փաստաթուղթ N 3:
[316] Ֆ. 57, ց. 2, գ. 974, թ. 16:
[317] Նույն տեղում, գ. 309, թ. 69-71:
[318] Նույն տեղում, թ. 72-73 շրջ.:
[319] Նոր բովանդակությամբ կանոնների մասին մանրամասն տե՛ս հավելվածում, փաստաթուղթ N 4:

Ղուկասյանը հայտնում էր. «Միանգամայն ապահով եղէք, Հայր Սուրբ, ես նուիրաբերած երկու հարիւր հազարի վրայ իմ և իմ եղբայրների կողմից վերստին կաւելացնեմ ևս երկու հարիւր հազար ռուբլի կամ այնքան գումար, որի տոկոսը հասնի 20 հազարից ոչ պակաս, որով և ընդմիշտ կապահովուի դպրոցը»[320]: Նվիրված տունը, պարտեզը ու նոր կառուցվող շենքն արդեն հաստատված էին Ղուկասյանների անունով, և վկայագիրը հանձնված էր Ա. Ղուկասյանցին, ով պետք է այդ ամենը նոտարական կարգով հաստատեր որպես Ս. Էջմիածնի սեփականություն[321]:

1914 թ. սեպտեմբերից Մարիամ-Ղուկասյան օրիորդաց դպրոցը գործել է Ղուկասյանների տանը և ամբողջ մեկ տարի կառավարվել Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի հոգաբարձության կողմից: Հոգաբարձությունը, համաձայն Վեհափառ Հայրապետի կոնդակի Գ. հոդվածի, հետաձգելով հանդիսավոր տոնակատարությունը մինչև Ղուկասյան եղբայրների Ծուշի վերադարձը, վերջնականապես բացված է հայտարարում Մարիամ-Ղուկասյան օրիորդաց դպրոցը[322]:

1916 թ. ապրիլի 21-ին, երկարատև քննարկումներից հետո, ընտրվում է դպրոցի հոգաբարձական կազմը[323]՝ համաձայն ընտրության կարգի վերաբերյալ Արշակ Ղուկասյանի հետևյալ գրության.

«Ա. «Մարիամ-Ղուկասեան» դպրոցի հոգաբարձութիւնը պէտք է ընտրուի ոչ թէ բոլոր չորս եկեղեցիների ծխականների խառն ժողովում, այլ այդ եկեղեցիների ծխական ժողովներից ընտրուած 10-ական պատգամաւորների խառն պատգամաւորական ժողովում:

Բ. «Մարիամ-Ղուկասեան» դպրոցի հոգաբարձութիւնը պէտք է հաստատուի Հայրապետական կոնդակով:

Գ. «Մարիամ-Ղուկասեան» դպրոցի տեսուչը պէտք է հաստատուի նոյնպէս Հայրապետական կոնդակով:

Ինչ վերաբերում է այն անձնաւորութեան, որը՝ իբրև իմ լիազօր, պիտի մտնի հոգաբարձական կազմի մէջ, նրան դեռևս չեմ ընտրել,

[320] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 309, թ. 31-32:
[321] Նույն տեղում, գ. 1021, թ. 55 շրջ.: «Արարատ», Ս. Էջմիածին, 1913, հմ. 8-9, էջ 685-686:
[322] ֆ. 57, ց. 2, գ. 974, թ. 52, 54 շրջ.:
[323] Նույն տեղում, թ. 70:

սակայն չէի ցանկանայ, որ նրա բացակայութիւնը արգելք հանդիսանար հոգաբարձութեան անմիջապէս գործի անցնելուն: Ուստի, կ'խնդրէի դիւանիդ տնօրինել, որ հոգաբարձութիւնը սկսի իւր գործունէութիւնը առայժմ առանց իմ լիազօրի, մինչև որ ես մօտ ապագայում հնարաւորութիւն կունենամ լիազօր ընտրել և ներկայացնել Նորին Վեհափառութեան ի հաստատութիւն»[324]:

Հոգաբարձուներ ընտրվեցին Շուշիի չորս եկեղեցիների պատգամավորական ընտրության արդյունքում ընտրված պատվիրակներից 8 հոգի՝ Գրիգոր Մինասբեկյանը և Նիկողայոս Գասպարյանը՝ Ագուլյաց եկեղեցուց, բժիշկ Նիկողայոս Եարամիշյանը և Լևոն Վարդապետյանը՝ Ղազանչեցոց եկեղեցուց, Սերգեյ Աթաբեկյանը և Կարապետ Հակոբյանը՝ Մեղրեցոց եկեղեցուց, Թեոդորոս Տեր-Հովհաննիսյանը և Սեդրակ Եղիյանը՝ Վերին Թաղի եկեղեցուց: Նորընտիր հոգաբարձության վերոհիշյալ կազմը, համաձայն բարերարի ցանկության, հաստատվում է Հայրապետի ապրիլի 28-ի կոնդակով[325]:

Մարիամ-Ղուկասյան օրիորդաց դպրոցի հանդիսավոր բացումը նշանակվում է 1916 թ. սեպտեմբերի 18-ին[326]: Տեսուչ է նշանակվում Հայրապետ Մուսայելյանը[327]: Վերջինիս խնդրագրով Հայրապետական դիվանը դիմում է Պողոս, Հակոբ և Աբրահամ Ղուկասյաններին նրանց ցանկությունը իրականացնելու և դպրոցն աստիճանաբար միջնակարգ դպրոցի վերածելու, նաև հանգուցյալ Արշակ Ղուկասյանի՝ դեռ 1914 թ. նշյալ խոստման համաձայն՝ գալիք ուսումնական տարվա նախահաշվում նոր դասարան բացելու համար անհրաժեշտ 5.000 ռուբլին դպրոցին հատկացնելու[328]:

Վերլուծելով առկա փաստաթղթերը՝ Ղուկասյան եղբայրներն ավելացնում են դպրոցին նվիրաբերած գումարը՝ այն հասցնելով 300.000 ռուբլու, որի տոկոսները կազմում էին դպրոցի հաստատուն եկամտի աղբյուրը: Այն դարձել էր Շուշիի միակ օրիորդաց միջնակարգ դպրոցը: Չնայած Ղուկասյան եղբայրների այն համոզմունքին, որ նվիրաբերած գումարը պետք է լիովին

[324] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 974, թ. 57:
[325] Նույն տեղում, թ. 70 շրջ., 72-73:
[326] Նույն տեղում, թ. 82:
[327] Նույն տեղում, թ. 85 շրջ.:
[328] Նույն տեղում, թ. 90-91:

բավարարեր դպրոցի ապահովության համար, Հայաստանի նորաստեղծ հանրապետության գերատեսչությունների միջև 1919 թ. գրագրությունից պարզ է դառնում, որ դպրոցին հասանելիք գումարը չէր բավականացնում անհրաժեշտ կարիքները հոգալուն[329]:

1919 թ. օգոստոսի 27-ին ՀՀ Հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը Նախարարների խորհրդին հայտնեց Ղարաբաղի հայոց ազգային խորհրդի ու ղարաբաղցիների և զանգեզուրցիների հայրենակցական միության վարչության խնդրանքը և ներկայացրեց հետևյալ օրինագիծը. «Վարկ բանալ Հանրային Կրթութեան եւ Արուեստի մինիստրի անունով՝ նպաստ տալու համար Ղարաբաղի Հայոց Թեմական դպրոցին՝ 101.800 ր., Մարիամեան-Ղուկասեան դպրոցին՝ 70.736 ր. 65 կ., 28 ծխական դպրոցների պաշտօնավարած ուսուցիչ-ուսուցչուհիներին՝ 203.716 ր. 65 կ., հաշուելով 1918-19 ուստարայ սեպտեմբերի 1-ից մինչեւ յուլիսի 1-ը՝ ընդամենը 376.253ր. 30 կ.»[330]:

1881 թ. հիմնված Շուշիի ռեալական ուսումնարանը կարգավիճակով պետական էր[331]: Սկզբնական շրջանում պարապմունքներն անցկացվում էին Շուշեցի մեծահարուստ Մովսես բեկի տանը: Հաստատությունն ուներ 2 նախապատրաստական և 5 հիմնական դասարաններ: Ուսումնարանի նպատակը ռուսերենի տարածումն էր: Այդ առումով, պատահական չէ, որ շրջանավարտների զգալի մասը դարձան ոչ-ազգային կուսակցությունների գործիչներ: Ուշագրավ է, որ եթե թեմական դպրոցը ազգային-հայրենասիրական գաղափարների դաստիարակության օջախ էր, ապա ռեալականն առավելապես քաղաքական մտքերի դարբնոց էր: 1896 թվականից թույլատրվել է նաև հայոց լեզվի, գրականության և պատմության դասավանդումը: 1901 թ. Կովկասի փոխարքայի որոշմամբ ուսումնարանի համար կառուցվում է մի փոքր շենք, իսկ արդեն 1901-1908 թթ. Շուշեցի բարերար Գրիգոր Առաքելյանի միջոցներով կառուցվում է ուսումնարանի եռահարկ նոր շենք, որը մինչ օրս կանգուն մնացած եզակի կառույցներից է: Ուսումնարանի

[329] ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 252, թ. 69:
[330] Նույն տեղում, թ. 75:
[331] Մանրամասն տե՛ս Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Շուշիի ռեալականը, Եր., 2001: Շուշիի ռեալական ուսումնարանի հիմնադրման 120-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Ստ., 2001:

շրջանավարտներն իրավունք ունեին ուսումը շարունակելու Ռուսաստանի և Եվրոպայի բուհերում: 1896թ. տվյալներով ռեալական դպրոցի սովորողների մեծ մասը՝ 298 սովորողից 236-ը, հայ էր՝ իսկ սոցիալական ծագումով՝ ազնվական՝ 118, հոգևոր՝ 7, քաղաքացիական դասերից՝ 121, գյուղացի՝ 45[332]:

Ռեալական ուսումնարանում տարբեր տարիներ դասավանդել են Ս. Մանդինյանը, Ս. Հախումյանը, Մ. Բարխուդարյանը, Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Ա. Տերտերյանը:

Ռեալական ուսումնարանը, թեև պահվում էր պետական միջոցներով, բայց հայ բարերարները տարբեր տարիների ուսումնարանին հատկացրել են գումարներ. Թադևոս Թամիրյանը՝ 100 000 ռուբլի[333], Հովհաննես Խունունցը՝ 200 ռուբլի[334] և այլն:

Ռեալական ուսումնարանը գործել է մինչև 1920 թվականը:

Շուշիի տեղական վարչությունն իր գոյությունը հասարակության շրջանում արդարացնելու, մասնաճյուղի դրությունը բարելավելու, հանրության շրջանում իր դիրքն ու գործունեությունն առավել հայտնի դարձնելու համար 1887 թ. նոյեմբերի 15-ի տեղական ընդհանուր ժողովի ժամանակ, անսալով փորձառու անդամների առաջարկին, վճռում է հիմնել իգական սեռի համար արհեստավորաց դպրոց, որի մասին ասվում է. «Յիրաւի որքան մեծ բարիք է մի գաւառական խուլ անկիւնում այս տեսակ դպրոց ունենալը բացառապէս աղքատ դասակարգի համար և թէ որքան պիտի օգտուի վարչութիւնս՝ իր վերոյիշեալ նուիրական գաղափարը իրականացնելու»[335]: Այս առաջարկը վարչությունը ներկայացնում է Թիֆլիսի խորհրդին՝ նրա աջակցությունն ու թույլտվությունը ստանալու ակնկալիքով: Տեղական ընդհանուր ժողովը 1888 թ. ապրիլի 10-ին հաստատեց Օրիորդաց արհեստագիտական դպրոցի ծրագիրը[336]: Համաձայն ծրագրի՝ արհեստագիտական դպրոցը հիմնվում էր գլխավորապես Շուշիի հասարակ դասից հայ օրիորդներին արհեստների օգնությամբ միջոցներ տալու՝ իրանց առօրյա ապրուստը հայթայթելու՝ ավանդելով զուգընթացաբար նաև

[332] Кавказский календарь на 1896, Тифлис, 1895, с. 176.
[333] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 335:
[334] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ.1553, թ. 165-165 շրջ.:
[335] ֆ. 307, ց. 1, գ. 252, թ. 89:
[336] Նույն տեղում, թ. 96:

ընդհանուր ուսում: Դպրոցի աշակերտուհիները սովորելու էին հետևյալ արհեստները. սպիտակեղենի կարն ու ձևը, կանանց և երեխաների հագուստի կարն ու ձևը, զանազան տեսակ ասեղնագործություն, նաև մահուդի վրա, գլխարկների զարդարում, սպիտակեղենի օսլայում և արդուկում: Ուսուցանվելու էին հետևյալ առարկաները՝ կրոն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, գծագրություն, նկարչություն, ընթերցանություն և բանավոր զրույցներ առողջության, աշխարհագրության, բնական պատմության, տնային տնտեսության և ուսանելի արհեստների վերաբերյալ:

Ծաբաթվա ընթացքում արհեստներին նվիրվում էր 20-36 դաս, իսկ առարկաներին՝ 12-15 դաս:

Դպրոցը մի դասարանից էր բաղկացած՝ երեք տարվա դասընթացով: Եթե հնարավորություն լիներ, առաջադեմ և ընդունակ աշակերտուհիներին կարելի էր թողնել նաև 4-րդ տարին՝ գլխավորապես ձեռագործով պարապելու համար: Աղքատու ձրիավարժ աշակերտուհիների թիվը պետք է լիներ 40%-ից ոչ պակաս[337]:

Քննության առնելով վերոհիշյալ ծրագիրը՝ խորհուրդը վարչությանը հայտնում է իր հետևյալ որոշումը. «1) առաջարկեալ նախագծով բացուել մի ուսումնարան բուն արհեստագիտականի բնաւորութիւնից զուրկ է և գոյութիւն ունեցող սովորական ծխականների հանգամանք ունի, 2) իբրև այդպիսին, նա կարող է բացուիլ և պահպանուիլ ի շարս հոգևոր ծխական միադասեան ուսումնարանաց, համաձայն այսպիսեաց համար գոյութիւն ունեցող կանոնների և 3) այդպիսի մի ուսումնարան վարչութիւնն ինքնին կարող է պահպանել իւր տեղական միջոցներով»[338]:

Տեղական ընդհանուր ժողովի կողմից ընտրված մասնաժողովը դպրոցի համար կազմած իր ծրագրում հաստատության պահպանության նպատակով նախատեսել էր 1.600 ռուբլի գումար և Թիֆլիսի խորհրդից ակնկալում էր ևս 300 ռուբլու աջակցություն բացվելիք դպրոցի համար: Սակայն, չստանալով վերոհիշյալ օժանդակությունը, որը խիստ կարևոր էր գոնե դպրոցի գոյության առաջին տարիներին, տեղական վարչությունը հետաձգում է Օրիորդաց արհեստագիտական

[337] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1004, թ. 97-98:
[338] Նույն տեղում, թ. 99 շրջ.:

դպրոցի բացման գործը՝ այն ավելի ուշ իրագործելու մտադրությամբ[339]:

1910թ. նոյեմբերի 12-ին Բաքվի վաճառական Սիմեոն Առաքելի Առաքելյանը կտակ է կազմել, համաձայն որի՝ կտակարարը կտակատարներին պատվիրել է իր կողմից ձեռք բերված ողջ անշարժ գույքը և իրեն պատկանող շարժական գույքի այն մասը, որը կնոջ սեփականությունը չէ, բաժնետոմսերը և այլն, ողջ իր կարողությունը վերածել կանխիկ գումարի, դրա մի մասը կտակում է հարազատներին, իսկ մնացած կարողությունը կտակում է Շուշիում և գավառում տեխնիկական ու արհեստագործական բաժիններով գյուղատնտեսական դպրոցներ կամ գյուղատնտեսական բաժիններով արհեստագործական դպրոցներ բացելու գործին:

Այդ նպատակի համար հատկացված կապիտալից, եթե կտակատարներն անհրաժեշտ կհամարեին, 50.000 ռուբլի պետք է տրամադրվեր շենքի կառուցման և այլ կրթական բարելավումների համար, իսկ մնացած կապիտալի տոկոսները պետք է արդեն բացված դպրոցների պահպանության համար ծախսվեին:

Այն դեպքում, եթե նման դպրոցների բացումն ու պահպանությունն անհնարին կլինեին, կամ դրանք կփակվեին, եթե կապիտալի տոկոսները չբավականացնեին նման դպրոցների կարիքները հոգալուն, ապա այդ կապիտալի տոկոսները պետք է նպատակաուղղվեին Շուշի քաղաքում կամ Շուշիի գավառում հայ որբերի համար որբանոցներ բացելուն, որտեղ էլ նրանք գրագիտություն և արհեստներ կսովորեին: Բոլոր դպրոցները, ուսումնարանները և որբանոցները, որոնք կբացվեին կտակարարի միջոցներով, պետք է կրեին «Սիմեոն Առաֆելյան» կամ «Առաֆելյանական» անվանումը:

Եթե որբանոցների բացումն էլ չէր հաջողվում, ապա ողջ կապիտալի տոկոսները պետք է անցնեին Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությանը, ով էլ այդ տոկոսներով կտակարարի անունով կրթաթոշակառուներ կպահեր՝ առավելապես Շուշիի և Երևանի հայկական հոգևոր դպրոցների և Էջմիածնի ճեմարանի սան

[339] Նույն տեղում, թ. 115:

չքավոր գյուղացիների երեխաներից, քանի նմանները գոյություն կունենային, և հնարավոր կլիներ կատարել կտակարարի կամքը[340]:

Եղիշե ավագ քահանա Գեղամյանցի՝ 1919 թ. դեկտեմբերին հայրապետական դիվանին ուղղված գրության համաձայն՝ կտակատարները բացակայում էին Բաքվից և կտակարարի կտակում ցուցակագրած իրեղեններն ու դրամական արժեքավոր թղթերը գտնվում էին բանկերում՝ ոստիկանության հսկողության ներքո, կտակը ևս իշխանության ձեռքին էր և կարող էր միայն կտակատարների ներկայանալուց հետո գործադրվել[341]: Կտակարարը մահանում է 1919 թ. փետրվարի 25-ին, որից հետո կտակը դեկտեմբերի 3-ին ներկայացվում է Բաքվի շրջանային դատարանի հաստատմանը: Դեկտեմբերի 30-ին այդ դատարանի քաղաքացիական բաժանմունքի հանրային դատական նիստի ժամանակ լսվում է Արսեն Կրասիլնիկյանի հայցադիմումի համաձայն կազմված գործը՝ Սիմեոն Առաքելյանի կտակի վերաբերյալ: Շրջանային դատարանը հաստատում է Թիֆլիսի նոտար Նիկոլաևի կողմից կազմված կտակը[342]: 1920 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայրապետական դիվանի և ՀՀ արտաքին գործերի նախարարության արտասահմանյան հաստատությունների բաժնի միջև տեղի ունեցող գրագրությունից պարզ է դառնում, որ Առաքելյանի կտակատարների բացակայության պատճառով դեռ այն չի գործադրվել, և հնարավոր չի եղել լիովին պարզել հանգուցյալի թողած գույքի քանակն ու վիճակը[343]: Վերջապես Կրասիլնիկյանի վկայության համաձայն՝ պարզվում է, որ հանգուցյալի ողջ գույքը՝ թե՛ շարժական և թե՛ անշարժ, գտնվում էր Բաքվում, այնտեղ էին գտնվում նաև մյուս կտակատարներն ու ժառանգները: Ուստի Բաքվում պետք է պարզվեր ամենը, ողջ գումարը կենտրոնացվեր ու առաջին իսկ հնարավորության դեպքում փոխադրվեր Երևան[344]:

Շուշիում գործում էր նաև մեկ այլ արհեստագործական

---

[340] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 2, թ. 10-11 շրջ., Կտակարարի կամքով կտակատարներ են նշանակվել Բաքվի առաջին կարգի վաճառականներ Գրիգոր և Նիկոլայ Մարտինի Առաքելյանները և Արսեն Սերգեյի Կրասիլնիկյանը: Նաև մինչ վերոհիշյալ կտակը կազմված բոլոր այլ կտակները պետք է անվավեր համարվեին:
[341] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ.1613, թ. 4 շրջ.:
[342] Նույն տեղում, թ. 9-12:
[343] ֆ. 200, ց. 1, գ. 2, թ.12, 19, ֆ. 57, ց. 2, գ.1613, թ. 14, 16, 18:
[344] Նույն տեղում, թ. 20:

ուսումնարան, որը բացվել էր 1883թ. Շուշեցի մեծահարուստների հանգանակած գումարներով[345]: Այս ուսումնարանի շրջանավարտները նպաստեցին Շուշիի տնտեսության զարգացմանը:

Բացի վերը նշվածներից՝ Շուշիում գործում էին Քաղաքային տղայոց դպրոցը (հիմնադրվել է 1875թ., ուներ 300-350 սովորող, ուսման տևողությունը՝ 7 տարի), երեք պետական դպրոց՝ մոտ 200 աշակերտներով, որոնց մեծ մասը հայեր էին: 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին տասնամյակներում գործում էին մասնավոր և երկսեռ ծխական դպրոցներ թաղական եկեղեցիներին առընթեր: Շուշիում էր գտնվում 1900-ական թթ. Ղարաբաղի միակ մանկատունը, որի 100 սաներից 70-ը արևմտահայ էին: Գործում էր 2 մանկապարտեզ, նաև կարուձևի 2 դպրոց: Այսպիսի ակտիվ կրթաուսումնական գործունեության շնորհիվ արդեն 1897թ. Շուշիի գավառի 138.771 բնակչից գրագետ էին 9.654-ը կամ 6,96%, որն ավելի բարձր ցուցանիշ էր, քան Երևանի նահանգի ցուցանիշը[346]:

Շուշիի կրթական կյանքի զարգացման գործում որոշակի ավանդ է ունեցել նաև Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը, որը նյութական օժանդակություն էր ցուցաբերում քաղաքի ուսումնական հաստատություններին: Ընկերությունը հիմնվել է բժիշկ, հասարակական գործիչ Դավիթ Ռոստոմյանի նախաձեռնությամբ՝ լուսավորական, մշակութային և բարեսիրական գործունեություն ծավալելու նպատակով: Դավիթ Ռոստոմյանը ծնվել է 1820թ. Թիֆլիս քաղաքում, կրթությունը ստացել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Գավառական բժշկի պաշտոնում Դավիթ Ռոստոմյանին հնարավորություն է ընձեռվում շրջելու գավառներով, ավելի մոտիկից ծանոթանալու հայերի կյանքին, տեսնելու նրանց թշվառ վիճակն ու հասկանալու առօրյա խնդիրները: Այդ ժամանակ էր, որ նա որոշում է օգտակար լինել իր ազգին, զբաղվել մարդասիրական բուռն գործունեությամբ, լուսավորել ժողովրդին և բարեգործությամբ սատար կանգնել անապահով ու կարիքավոր մարդկանց: Նման ծրագիրը կյանքի կոչելու համար Ռոստոմյանին անհրաժեշտ էին համախոհներ և ամենակարևորը՝ նյութական

[345] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 202:
[346] Первая всеобщая перепись населения Российской империи 1897.- СпБ, 1905, с. 1.

օգնություն: 1859 թվականից նա ձեռնամուխ է լինում անհնարին թվացող այս գաղափարի իրականացման կազմակերպչական աշխատանքներին՝ պարբերաբար լինելով Թիֆլիսում, Պետերբուրգում, բազմիցս խնդրանքներով դիմելով հայազգի մեծահարուստներին. «Փողն ձեզանից, բայց աշխատելն, կանոնադրութիւն գրելն ու հաստատել տալն ինձանից»[347]:

1862-1863թթ. Դավիթ Ռոստոմյանը և նրա գաղափարակից Մովսես Զոհրապյանը վերջնականապես որոշում են հիմնել «Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն» բարեգործական կազմակերպությունը: Ռոստոմյանը և Զոհրապյանը կազմում են ընկերության կանոնադրությունը, և մինչ այն կխմբագրվեր ու կհաստատվեր, նրանց են միանում մի խումբ բաքվաբնակ հայեր: Թեև կանոնադրության 10-րդ հոդվածի համաձայն՝ հիմնադիր անդամները համարվում էին ութը, այնուամենայնիվ, մինչ կանոնադրության հաստատումը, որը տևում է մեկ ու կես տարի, նրանք համալրվում են ևս հինգ անդամով. «Հիմնադիր անդամները համարվում են ութ: Պատուաւոր, անփոփոխ, և տարեկան անդամների թիւը սահմանափակուած չէ: Այս անդամների կարգը կարող են մտանել այն ամենայն անձիք հայերից՝ որք գտանվում են Ռուսիոյ հպատակութեան տակ, առանց զանազանելու նոցա կոչումը, վիճակը և դաւանութիւնը»[348]:

Դավիթ Ռոստոմյանի և Մովսես Զոհրապյանի ջանքերով բարեգործական կազմակերպություն ստեղծելու վերաբերյալ ռուսական իշխանություններին ներկայացրած կանոնադրությունը վերջնականապես հաստատվում է 1864թ. մայիսի 21-ին և անվանվում «Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն հանուն Ս. Գրիգոր Լուսավորչի»: Հարկ է նշել, որ ընկերության հիմնադիր անդամների մեծ մասը ծնունդով շուշեցիներ էին՝ Դավիթ Ռոստոմյան (Թիֆլիս), Ներսես Նիկիտայի Կրասիլնիկյան (Շուշի), Ալեքսեյ Արտեմի Տեր-Ղուկասյան (Շուշի), Մովսես Զոհրաբի Զոհրաբյան(Շուշի), Մուսայել Դանիելի Ծահգեդանյան (Շուշի), Գրիգոր Հայրապետի Թումայանց (Շուշի), Սարգիս Կիրիլի Այվազյան (Բաքու), Սարգիս Հովհաննեսի Տեր-Գրիգորյան (Շուշի), Գևորգ Պողոսի Լալայան

[347] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 32, թ. 2:
[348] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 394, թ. 4:

(Ծամախի), Հակոբ Սահակի Ապրեսյան (Ծուշի), Դավիթ Հովհաննեսի Ադամյան (Ծուշի), Օհանջան Գրիգորի Հախումյան (Ծուշի), Սարգիս Հարությունի Գրիգորյան (Ծուշի)[349]:

Բաքվի հայոց մարդասիրական ընկերության գործունեության պատմությունը բաժանվում է երկու շրջանի. առաջինը՝ ընկերության կանոնադրության հաստատման օրվանից մինչև 1869 թվականը (մինչև Դավիթ Ռոստոմյանի մահը), երկրորդը՝ 1870 թվականից մինչև փակվելը: Առաջին շրջանը կարելի է համարել նախապատրաստական, իսկ երկրորդը՝ ընդարձակ և լայնածավալ գործունեության շրջան: Նյութական սուղ միջոցների պատճառով մինչև 1870թ. ընկերությունն իր գործունեությունը ծավալում է հիմնականում Բաքվում: Այդ ժամանակահատվածում ընկերությունը բարեգործությանը աննշան տեղ էր հատկացնում՝ փոխարենը եռանդով իրականացնելով կրթամշակութային ծրագրեր՝ նյութական օգնություն տրամադրելով մտավորականությանը, ուսանողներին, աշակերտներին, որբերին, այրիներին և աղքատներին: Զուգահեռաբար ընկերությունը պահում էր թոշակառուներ միջնակարգ և բարձրագույն դպրոցներում, նպաստներ հատկացնում ծխական դպրոցներին:

1899թ. Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինի հրամանով փակվում են Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը և մի շարք այլ բարեգործական հիմնարկներ: Առաջարկվում է ընկերության գործունեությունը շարունակել միայն կանոնադրության փոփոխության դեպքում: Նույն թվականին ներքին գործերի նախարար Գորեմիկինը հաստատում է ընկերության ընդհանուր ժողովում ընդունած նոր կանոնադրությունը: Ընկերությունը ստանում է նոր անվանում՝ «Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն»: Փոփոխված կանոնադրությամբ դուրս են մղվում տասնյակ տարիներ գործող կրթական և ուսումնական ծրագրերը, ընկերության գործունեությունը սահմանափակվում է միայն բարեգործությամբ, այն էլ՝ միայն Բաքվի նահանգում: Ի. Լ. Գորեմիկինի հրամանով մշակութային և ուսումնական գործունեության իրավունքից զրկվելու պատճառով

[349] Նույն տեղում, գ. 55, թ. 8:

ընկերությունն իր գումարների մի մասը նվիրաբերում է ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանին, Շուշիի հայոց հոգևոր դպրոցին և Բաքվի քաղաքային ինքնավարությանը:

Անգնահատելի է Բարեգործական ընկերության դերը հայ ժողովրդի ազգային կրթական ասպարեզում: Հավատարիմ մնալով իր սկզբունքներին՝ ընկերությունը միշտ գործել ու աշխատել է հայ ժողովրդի բարօրության, կրթության և լուսավորության բարելավման համար, ունեցել է բազմաթիվ որդեգիրներ տարբեր վայրերից, որոնց ներկայացրած խնդրագրերը վկայում են նրանց ծանր նյութական վիճակի մասին: Ընկերության հիմնադիրների զգալի մասը հայտնի և ազդեցիկ շուշեցիներ էին, այդ պատճառով ընկերությունը Շուշի քաղաքի կրթական և մշակութային կյանքն առանձնահատուկ ուշադրության կենտրոնում էր պահում, միջոցներ էր տրամադրում դպրոցներ բացելու համար. «Այսօր Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցու բակում պտի բացի երկսեռ դպրանոց, նախագահութեամբ թեմական վարդապետի եւ հոգաբարձութեան»[350]:

Շուշի քաղաքում կրթական օջախներ հիմնելուց բացի՝ ընկերությունը հովանավորում էր նաև դպրոցներում սովորող հայազգի շնորհալի զավակներին: Այդ որդեգիրներից մեկը՝ Լևոն Աթարբեկյանը, շնորհակալական ուղերձ է հղում Մարդասիրական ընկերության խորհրդի անդամներին. «Ստանալով «Մարդասիրական ընկերության» հարգելի ժողովի՝ իմ խնդրի առիթով կայացրած վճիռը, որով հայտնվում է ինձ, որ կընդունվիմ նրա «որդեգիրների կարգում անշուշտ առաջին կանդիդատ միւս տարուանից»-պարտք եմ համարում արտայայտել, առ այժմ թէև միայնակ խոսքերով, իմ ջերմ շնորհակալութիւնը դէպի ընկերութեան պատուելի անդամները»[351]: Շուշիի ծխական դպրոցների, ուսումնական հաստատությունների հոգաբարձուները պարբերաբար գումարում էին ժողովներ, որտեղ քննարկում էին տվյալ ուսումնական հաստատության կրթական ոլորտի գործունեության և փոփոխությունների, տարբեր առաջարկների, ինչպես նաև տնտեսական, ֆինանսական և այլ հարցերի վերաբերյալ զանազան հարցեր: Այդ նիստերի արձանագրություններն ամենայն ճշտությամբ ուղարկվում էին

[350] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 716, թ. 22 շրջ.:
[351] ֆ. 27, ց. 1, գ. 29, թ. 33:

Բաքվի մարդասիրական ընկերության, ուր դրանք ուսումնասիրելով՝ խորհրդի անդամները համապատասխան ցուցումներ էին տալիս ու որոշումներ կայացնում[352]:

Հաճախակի կազմակերպվող հանգանակությունների արդյունքներից (օրինակ 1889 թ. շուշեցի Հայրապետ Գրիգորի Հախումյանցը Բաքվի մարդասիրական ընկերությանը 600 ռուբլի է կտակել, որի տոկոսները հանգուցյալի եղբոր ցանկությամբ մի քանի տարի ուղարկվել են Շուշիի թեմական դպրոցի հոգաբարձությանը[353]) կամ ընկերության՝ տարեկան համալրվող հաշվից Շուշիի դպրոցներին պարբերաբար դրամական փոխանցումներ էին կատարվում. «Ի Հոգաբարձութեանս լուան զգրութիւն Մարդասիրական ընկերութեունդ Բագու քաղաքի, մատուցանէք Հոգաբարձութիւնս զրենդ անվանեալ պետական թղթադրամս առաջին արժողութեամբ մի հարիւր ռուբլի, իսկ երկրորդն հինգ հարիւր ռուբլին, ընդ ամիսն վեց հարիւր ռուբլին կտակեալ ի հանգուցեալ Հայրապետ Հախումեանց, յօգուտ Հոգևոր դպրոցեն Շուշւոյ, և խնդրէ զդրամագլուխեն թողուլ անձեռնմխելի, իսկ զտոկոսեն նորին ի գործ դնիլ յօգուտ չքաւոր աշակերտաց նոյն դպրոցեն, և զստացմանէ նոյն դրամոցն ծանուցանել նոյն Մարդասիրական ընկերութեան վասն ապահովութեան նորեն»[354]: Այսինքն, Բաքվի մարդասիրական ընկերության գործունեության պտուղները տեսանելի էին դառնում ոչ միայն Շուշիի տարբեր ուսումնական հաստատություններում ունեցած ձեռքբերումներով՝ դպրոցներին և կարիքավոր սաներին օգնություն հատկացնելով, այլև որբերին և չքավորներին օգնելով, նրանց տրամադրելով կացարաններ ու ապահովելով աշխատանքով, քանի որ 1900-ականներին Բարեգործական միությունում փոխվում էին օգնության ձևաչափերը:

1906թ. սկսած՝ միության տարեկան ժողովներում ոմանք առաջարկում էին թողնել բարեգործության այն եղանակը, որն ուներ «կարեկցանքի ձև», և անցնել օգնության ավելի խելացի ու նպատակահարմար եղանակի՝ այն է կատարել օգնության բաշխումը

[352] Ֆ. 545, գ. 1, գ. 319:
[353] Ֆ. 57, գ. 2, գ.1553, թ. 27, 43:
[354] ՀԱԱ, Ֆ. 27, գ. 1, գ. 84, թ. 5:

աշխատանքի տրամադրման միջոցով: Ընկերությունը ստեղծում է տարբեր աշխատատեղեր (մսուր-մանկապարտեզներում, դպրոցներում և այլ), որտեղ կարիքավորներն իրենց աշխատանքով ու քրտինքով էին վաստակում սեփական ապրուստի միջոցը[355]:

Այս իրավիճակը շարունակվում է մինչև 1912թ.: 1913թ. հոկտեմբերին ցարական իշխանությունը վերականգնում է ընկերության մշակութային և ուսումնական գործունության իրավունքը, ինչպես նաև ընկերության նախկին անվանումը՝ «Ս. Գրիգոր Լուսավորչի անվան Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն»[356]:

1920թ. ապրիլին Ադրբեջանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո ընկերությունը դադարում է գործել:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ, չնայած ֆինանսական դժվարություններին՝ «Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը» ավելի քան կեսդարյա բարեգործական գործունեության շնորհիվ կարողացավ փրկել բազմաթիվ հայ անապահով ընտանիքների, որոշ չափով բարելավել դպրոցների նյութական ծանր վիճակը և մեծ դեր է ունեցել հայության ուսումնառության համար:

Այսպիսով, գալիս ենք այն համոզման, որ չնայած ֆինանսական սուղ միջոցներին, ցարական իշխանությունների ճնշումներին ու հետապնդումներին, շնորհիվ բարեգործների ֆինանսական աջակցության և քաղաքի հայ հասարակության ներկայացուցիչների նվիրատվության, Շուշիի հայկական դպրոցները մեծ դեր ունեցան արցախահայության ուսումնառության համար: Բարերարների և բարեգործական կազմակերպությունների սրտացավության, հոգատարության, նվիրվածության շնորհիվ կրթությունը հասավ բարձր մակարդակի, Շուշիում կառուցվեցին դպրոցական նորանոր շենքեր, ապահովվեցին այդ հաստատությունների եկամուտները: Այդ սուրբ գործին լծվել էին մեծ թե փոքր, աղքատ թե հարուստ, յուրաքանչյուրը ինչքանով կարող էր: Հատկապես պետք է առանձնացնել Ղուկասյանների, Արզումանյանների,

[355] Նույն տեղում, գ. 181, թ. 1:
[356] Նույն տեղում, գ. 236, թ.30:

Ալեքսանյանների, Խանդամիրյանցների, Թյունիպեկյանների, Առափելյանցների, Թամիրյանցների և այլ ընտանիքների կատարած ազգանվեր գործունեությունը մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում:

2.2. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարը կարևոր շրջան է Արցախի մշակույթի բազմադարյան պատմության ընթացքում: Մշակութային զարթոնքը՝ դպրոցական ցանցի ընդլայնումը, լուսավորության, գրատպության, պարբերական մամուլի, արվեստի զարգացումը և մշակույթի ականավոր գործիչների մատուցած ծառայությունները պայմանավորված էին երկրամասի սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ առանձնահատկություններով:

Արցախ աշխարհը և արցախցին հնուց հայտնի են եղել և աչքի ընկել ոչ միայն հերոսական ոգով, հանուն ազատության պայքարի կորովով, այլև հոգևոր կյանքի, գրի ու գրականության հանդեպ տածած սիրով, կրթալուսավորչական և հրատարակչական ակտիվ գործունեությամբ: Այդ ամենի կենտրոնը մինչև խորհրդայնացումը եղել է Շուշին:

Անշուշտ, պետք է ընդգծել, որ Արցախում գրահրատարակչության և պարբերական մամուլի զարգացումը պայմանավորված էր Շուշիի՝ արդյունաբերական, արհեստագործական և առևտրական կենտրոն դառնալով: Բնականաբար, տնտեսական ենթակառուցվածքների զարգացումը պետք է հանգեցներ մշակութային զարթոնքին, ինչն առավել մեծ թափ ստացավ ռուսական կայսրության կազմում ընդգրկվելուց հետո:

Այս ամենի արդյունքում ժամանակի ընթացքում գրահրատարակչությունը դարձավ նաև շուշեցի բարեգործների ուշադրության և հոգածության առարկան: Միաժամանակ, գրահրատարակչությունը շուշեցիների համար նաև պատվի, հեղինակության և հայրենասիրության գործ էր, մանավանդ երբ հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ օրինակ՝ Բաքվում առաջին գիրքը հրատարակվեց միայն 1872 թվականին: Այս տեսանկյունից միանգամայն օրինաչափ է Գ. Լևոնյանի այն իրավացի գնահատականը, ըստ որի՝ Թիֆլիսից հետո հայկական տպագրության գործում Անդրկովկասի քաղաքների մեջ ամենանշանակալից դերը խաղացել է հենց Շուշին[357]:

Շուշիում գրատպության հիմքը դրեց 1823 թվականից Արցախում գործունեություն ծավալած Բազելի Ավետարանական քարոզչական ընկերությունը[358] Ավգուստ Դիտրիխի ու Ֆելիցիա Զարեմբայի գլխավորությամբ՝ հիմնելով դպրոց և տպարան:

Ինչ խոսք, այս ընկերությունն առաջին հերթին կրոնաքարոզչական նպատակներ էր հետապնդում: Այսուհանդերձ, այն նաև որոշակի լուսավորչական և բարեգործական գործունեությամբ նպաստեց Արցախում կրթական գործի զարգացմանը և գրատպության սկզբնավորմանը:

Վերոնշյալ առումով ուշագրավ է Լեոյի գնահատականը. «Շուշու մէջ Բազէլի միսիոնէրների գործը ոչ միայն տեղական նշանակութիւն ուներ, այլ եւ ընդհանրապէս հայկական, մասնավորապէս եւ կովկասեան: Լոկ կրօնական նպատակ ունեցող եւրոպացի բողոքականները տալիս էին հայ մատաղ սերնդին մի

[357] Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1958, էջ 227:
[358] Ղանալանյան Տ., Հայ ավետարանականների գործունեությունը Արցախում, «Գլոբուս», 2012, հմ.2:

կրթութիւն, որ կրօնական լինելով հանդերձ՝ ներկայացնում էր դաստիարակչական շատ գեղեցիկ նորոյթ: Իսկապէս ժողովրդական դաստիարակութեան գործն էր սկսւում Ղարաբաղում եւ այս կողմից Շուշու «լէմսին շկօլը» (գերմանական դպրոցը) նման էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցին, որի հիմնադիրը դրանից առաջ էր զգացել ժողովրդական կրթութեան ահագին խորհուրդը եւ բաց էր արել դպրոցը հասարակութեան բոլոր խաւերի առջև»[359]:

Անշուշտ, հեռանկարային առումով նշանակալից երևույթ էր նաև Շուշիում 1827 թ. առաջին տպարանի ստեղծումը, որը Արևելյան Հայաստանում երկրորդն էր Էջմիածնից (1771թ.), իսկ ամբողջ Անդրկովկասում երրորդը՝ Թիֆլիսից (1823թ.) հետո[360]:

Բազելյան միսիոներների տպարանում հրատարակվել է կրոնական, բարոյա-խրատական և ուսումնական բովանդակություն ունեցող գրականություն: Նրանք զուգահեռաբար հայերեն գրականություն էին հրատարակում նաև Մոսկվայում: Շուշիում և Մոսկվայում միսիոներները հրատարակեցին 11.679 օրինակ հայերեն, 728 օրինակ պարսկերեն, 147 օրինակ թուրքերեն և 100 օրինակ եբրայերեն գրքեր: Հայերեն գրքերի վրա միշտ հիշատակվում էին ժամանակի կաթողիկոսը և տպագրությունը թույլատրող անձինք[361]:

1837թ. բազելցի միսիոներները, իշխանությունների և հայ հոգևորականների պահանջով վաճառելով իրենց հաստատությունները, հեռացան Շուշիից: Ղարաբաղի թեմի նորանշանակ առաջնորդ և թեմի կոնսիստորիայի նախագահ Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանն իր միջոցներով գնեց նրանց տպարանը, և մինչ նրա մահը Շուշիում տպագրական իրողությունները գերազանցապես կապված էին այս նշանավոր եկեղեցական-լուսավորչական գործչի անվան հետ:

Այս տպարանում 1837-1840թթ. հրատարակվեցին կրոնական,

---

[359] Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 89-90:

[360] Ի դեպ, ուշագրավ է Ռուսական կայսրության տարածքում հայկական տպարանների ստեղծման հետևյալ ժամանակագրությունը՝ Պետերբուրգ (1781թ.), Նոր Նախիջևան (1789թ.), Աստրախան (1796թ.), Թիֆլիս (1823թ.), Մոսկվա (1829թ.), Շամախի (1856թ.), Թեոդոսիա (1859թ.), Բաքու (1872թ.), Գանձակ (1874թ.), Երևան (1876թ.), Ալեքսանդրապոլ (1876թ.), Ախալցխա (1888թ.), Նոր Բայազետ (1890թ.):

[361] Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), էջ 92-93, Ավագյան Ս., Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից, Եր., 1969, էջ 7-16:

պատմագիտական, փիլիսոփայական, քերականական բովանդակության 11 միավոր գրքեր:

Բաղդասար Հասան-Ջալալյանի տպագրած առաջին գիրքը համարվում է Ջորջ Բայրոնի «Շիլիոնյան կալանավոր»-ը, որն անվանի բանաստեղծի պոեմի հայերեն առաջին հրատարակությունն է: Այս գրքույկի հրատարակման մասին հիշատակում է Լեոն. «Շուշու կոնսիստորիայի կազմած մի ցուցակից մենք հաճությամբ տեղեկանում ենք, որ Բաղդասար մետրոպոլտի տպարանի անդրանիկ պտուղը եկեղեցական գիրք էլ չէր, այլ «Շիլիոնեան կալանաւորը»՝ տպուած 1837 թուականին, դարձեալ մետրոպոլտի թոյլտուութեամբ: Տարաբախտաբար մենք չունեինք այս տպագրութիւնը»[362]:

Բաղդասար միտրոպոլիտի խնդրանքով մոսկվաբնակ Հովհաննես Հովնանյանը տպարանին նվիրեց մի ձեռք մամուլ և հայերեն տառեր[363]: Փաստորեն, գերազանցապես Ղարաբաղի թեմի առաջնորդի ջանքերի շնորհիվ (գրքերը նա հիմնականում տպագրում էր իր միջոցների հաշվին) Շուշիում գրատպության գործը դրվեց հիրավի առավել բարձր տեխնիկական հիմքերի վրա:

Շուշիում 1854թ. կրոնական բովանդակությամբ երկու գիրք հրատարակվեց «Մինաս Տարղլիճյանց» տպարանում, որոնցից «Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ» գիրքը տպվեց Շուշեցի բարեգործ Մ.Հ.Պապյանցի ծախսերով[364]:

Բաղդասար միտրոպոլիտի մահից հետո նրա տպարանը տնօրինող նոր առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանը հարուստներից առանձնակի գումար չկարողացավ ստանալ, և տպարանը վերանվանվեց «Տպարան Սրբոյ Էջմիածնի» ու դարձավ Ս. Էջմիածնի Սինոդի սեփականությունը, ինչը պայմանավորված էր նաև դեռևս Բաղդասար միտրոպոլիտի օրոք թեմի ձևավորված անկախությունը հսկելու ձգտումով: Այս շրջանում հրատարակչական ծրագրերի իրագործմանը ձեռնամուխեն լինում շուշվաբնակ հայտնի բարերարներ Խաչատուր Ղարաբեկյանը, Կարապետ Հախումյանցը, Գրիգոր Տեր-Կարապետյանը, Խաչատուր Տառղլիճյանը և ուրիշներ[365]: Այս տպարանում

[362] Լեո, նշվ. աշխ., էջ 124:
[363] Հարությունյան Մ. Գ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստ., 2010, էջ 57:
[364] Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ, Շուշի, 1854:
[365] Հարությունյան Մ.Գ., նշվ. աշխ., էջ 58:

հրատարակվեց կրոնական և քերականական ուղղվածության երեք գիրք: Իսկ երբ Ս. Էջմիածնի Սինոդը հրաժարվեց հոգալ և ֆինանսավորել տպարանի գործունեությունը, այն գնեց Շուշեցի բարեգործ Հովհաննես Հովնանյանը, ով, սակայն, իր անվամբ հրատարակեց ընդամենը մեկ գիրք[366]:

Շուշիում գրահրատարակության գործի բարգավաճումը 1864-1902թթ. սերտորեն պայմանավորված էր «Հայոց հոգևոր տեսչություն» տպարանով[367], որտեղ տպագրվեց 41 գիրք: Առաջին իսկ հրատարակությամբ նոր տպարանը լուրջ հայտով հանդես եկավ՝ ի դեմս անվանի պատմաբան Կարապետ Եզյանի աշխատության: Ուսուցողական կարևոր դեր ունեցավ Համազասպ Թերճիմանյանի դասագրքի հրատարակությունը, որը աշխարհաբարի էր վերածել Իսրայել Տեր-Գրիգորյան Մամիկոնյան Շուշեցին:

40 տարվա ընթացքում հրատարակվեցին կրթական[368], գրական, կրոնական, քերականական, ուսուցողական, թարգմանական ուղղվածության գրքեր, Կովկասի Հայոց բարեգործական ընկերության Շուշիի գրադարանի գրացուցակներ[369], բարեգործության մասին հրապարակախոս Կոստանտին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) գրքերը, հայագետ Մանուկ Աբեղյանի առաջին աշխատությունը:

Առանձնակի հարկ ենք համարում հիշատակել Շուշեցի անվանի հայագետ Լեոյի անունը, ով իր գրահրատարակչական գործունեությունը սկսել էր հենց այս տպարանում որպես սրբագրիչ, և իր բազմաթիվ գրքերը տպագրվեցին այդտեղ, որոնցից մեկի հրատարակությունը հովանավորել էր Շուշեցի բարեգործ Սմբատ Դադյանը: Մի շարք գրքեր տպագրվեցին Շուշեցի բարեգործներ Ավետիք Պապյանցի և Հովսեփ Տեր-Մինասյանի հովանավորությամբ:

---

[366] Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Շուշի, 1870:

[367] Ավագյան Ս., Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից, էջ 16-19:

[368] Կարգադրութիւն Ղարաբաղու Սուրբ տիրամայր Մարիամու օրիորդաց ուսումնարանի, Շուշի, 1864: Ղարաբաղու տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացուիլը, Շուշի, 1864: Հաշիւ Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրանոցի հոգաբարձութեան 1889-1890 ուսումնական տարուայ համար, Շուշի, 1890: Կանոնադրութիւն Շուշուայ հոգեւոր դպրոցի, Շուշի, 1894:

[369] Գրացուցակ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան Շուշու գրադարանի, Շուշի, 1891, 1894:

Շուշիում գրահրատարակչության գործը թեմատիկ-բովանդակային որակական ավելի բարձր մակարդակի բարձրացրեց հայտնի հրատարակիչ-բարեգործ Միրզաջան Մահտեսի Հակոբյանցը, ով իր տանը կից մասնաշենքում որդիների հետ հիմնեց տպարան[370]: Այնտեղ 1879-1900թթ. հրատարակվեց 50 միավոր գիրք, ինչը էական թիվ էր անգամ ամբողջ Անդրկովկասի հայկական տպագրության համապատկերում, մանավանդ եթե նկատի առնենք այն կարևոր հանգամանքը, որ այդ ընդհանուր քանակում աշխարհիկ ուղղվածության գրականությունը գերակշռում էր:

Շուշիի հոգևոր զարթոնքի տեսանկյունից հատկապես պետք է շեշտենք երեք հրատարակության կարևորությունը: Առաջինը Ռաֆֆու «Խենթը» վեպն էր, որի տպման առաջնեկությանը ձգտում էին մոսկովյան տպագրիչները, սակայն շուշեցիների նախաձեռնության և հաստատակամության շնորհիվ այն ի կատար ածվեց հենց Շուշիում: Երկրորդ՝ շուշեցի Նիկողայոս Տեր-Ավետիքյանի հեղինակած և Տիգրան Նազարյանի հրատարակած ինքնուրույն և թարգմանական երկերի՝ «Քնար խոսնակ» ժողովածուն: Երրորդ՝ Մանուկ Աբեղյանի կողմից հայ ժողովրդական էպոսի հրատարակությունը:

20 տարիների ընթացքում Շուշիում տպագրվեցին գրական, կրթական, թարգմանական, բնագիտական, ճանաչողական ուղղվածության գրքեր, դասագրքեր, Ավետիք Բահաթրյանի երկերը, համաշխարհային գրականության դասականներից Եվրիպիդեսի, Ֆիրդուսու, Նիկոլայ Գոգոլի, Չարզ Դիկենսի, Վլադիմիր Կորոլենկոյի ստեղծագործությունները:

Մի շարք գրքեր տպագրվեցին շուշեցի բարեգործներ Տիգրան Նազարյանի, Ս. Հախումյանցի, Զ. Սարգսյանի, Ավագ Մահտեսի Հակոբյանցի հովանավորությամբ:

Այս տպարանը 1901-1904թթ. «Եղիսաբեթ Մ. Մահտեսի Հակոբյանց» անվանափոխմամբ հրատարակեց չորս գիրք, որոնցից առանձնակի հիշատակության արժանի է Ն. Մելիք-Թանգյանի հիմնարար աշխատության Ա. գրքի տպագրումը:

«Միրզաջան Մահտեսի Հակոբյանց» տպարանը այրվեց 1905թ. հայ-

[370] Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 33-37:

թաթարական կռիվների ժամանակ թաթար խաժամուժի կողմից:

«Բ. Տեր-Սահակյանց» տպարանը 1901-1917թթ. զգալի դերակատարություն է ունեցել Շուշիի մշակութային զարթոնքում և հրատարակել կրոնական, կրթական, գրական, բնագիտական թեմայով 19 միավոր գիրք, որոնցից առանձնակի հիշատակության արժանի է Ն. Մելիք-Թանգյանի հիմնարար աշխատության Բ. գրքի տպագրումը:

«Մելքում Բաբաջանյան» տպարանը ևս 1910-1919թթ. որոշ դերակատարություն է ունեցել Շուշիի մշակութային զարթոնքում և հրատարակել է գրական, ազգագրական, կրոնական, տնտեսական[371], քաղաքական բովանդակության գրքեր: Այս տպարանում լույս է տեսնում «Ղարաբաղ» թերթի անդրանիկ համարը[372]:

1890 թվականից սկսած՝ գրահրատարակչության ոլորտում սկսում է ակտիվանալ Հայոց բարեգործական ընկերությունը՝ Շուշիի տեղական վարչության հետ համատեղ որոշելով հրատարակվելիք գրքերի թեման և նպատակ հետապնդելով տպագրել ժողովրդական զանգվածների համար նախատեսված օգտակար գրքեր: Բարձր գնահատելով շուշեցիների բարեգործական նախաձեռնությունը՝ «Մշակ»-ը գրել է. «Շուշիի տեղական վարչության ձեռնարկած գործը համակրելի գործ է և խրախուսանքի արժանի, մեր հասարակ ժողովուրդը զուրկ է բոլորովին որևէ մտաւոր սնունդից: Հենց այդ պատճառով ժողովրդական գիրք հրատարակելը մի վերին աստիճանի լուրջ գործ է, որին պէտք է ձեռնարկել որոշ ծրագրով և պատրաստմամբ: Ժողովրդական գիրքը նպատակ պիտի ունենայ հասարակ դասի, ամբոխի մտաւոր հորիզոնը լայնացնել, բարոյական ձգտումներ առաջ բերել նորա մէջ, ներշնչել նորա գիտակցութեան և ինքնուրոյնութեան զգացմունք, տգիտութիւնը և նորա հետևանք զանազան թիւր գաղափարները, սնոտիապաշտութիւնները, որոնք կարելի է ցրել, գիտութեան էական ճշմարտութիւնները պարզ լեզվով ավանդելով նորան, և ի վերջոյ գրգռել սէր, ձգտումդէպի ընթերցանութիւնը»[373]:

Հայոց բարեգործական ընկերության Շուշիի տեղական

---

[371] «Շուշի-Գանձակ ճանապարհի համառոտ հաշիւ: Յուլիսի 7-ից 1906 թ. մինչեւ մայիսի 20-ը 1910 թ. Շուշի, 25-ին մայիսի 1910», Շուշի, 1910:
[372] Հարությունյան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 63:
[373] «Մշակ», 1887, օգոստոսի 20:

վարչության ծրագրում առավել ուշադրություն էր դարձվում հենց իրական կյանքի հետ կապված ինքնուրույն և թարգմանական, գիտահանրամատչելի գրքերի հրատարակմանը, սակայն ցարական իշխանությունների ճնշման արդյունքում իրականացավ ծրագրի միայն մի մասը[374]:

Շուշիում գրահրատարակչական գործի զարգացման գործում մեծ ավանդ ունեն Տիգրան Նազարյանը, Համբարձում Առաքելյանը, Լեոն, Սեդրակ Մանդինյանը, Գրիգոր Տեր-Ղազարյանը, Հովհաննես Տեր-Գրիգորյանը, Առաքել Բահաթրյանը, Սոֆյա Առաքելյանը[375]: 1879թ. Շուշիում անվանի մտավորական Տիգրան Նազարյանը հիմնեց հրատարակչական գրասենյակ բարեգործական նպատակով, չունևոր խավերի համար հասանելի գներով գրքերի տպագրությամբ[376]: Նա հրատարակել է Ն. Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակը», թարգմանությամբ լույս ընծայել Հ. Սենկեուիչի «Պոզնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը, որը, ի դեպ, լեհ նշանավոր գրողի հայերեն առաջին գրքույկն էր, Ալ. Դոդեի նովելները: Ցավոք, հայրենի Շուշիում նրա արգասավոր գործունեությունը կարճ տևեց, և նա օբյեկտիվ պատճառներով ճարահատյալ տեղափոխվեց Թիֆլիս, որտեղ հիմնադրեց «Աղբյուր» և «Տարազ» հանդեսները: Համբարձում Առաքելյանը 1881թ. Շուշիում հիմնեց Կովկասի հայոց բարեգործական ընկերության առաջին գավառական մասնաճյուղը՝ մինչև Թիֆլիս տեղափոխվելը նախագահելով: Անդրադառնալով Շուշիում հրատարակչական գործի վիճակին՝ Տիգրան Նազարյանը իրավացիորեն նշել է, որ «Տպագրության արհեստը Շուշիում լավ է դրված: Այստեղ կան երկու հարուստ տպարաններ, որոնց մեջ գործում են արագատիպ մեքենաներ: Կովկասում Շուշին Թիֆլիսից հետո առաջին տեղն է բռնում հայերեն գրքերի հրատարակության գործում, և այդ կողմից նա առաջ է անցել այնպիսի մեծ ու հայաշատ քաղաքից, որպիսին Բաքուն է»[377]:

Որպես հրատարակիչներ հանդես են եկել Սիմոն Հախումյանցը, Տիգրան Նազարյանը, Աբել Դավթյանց Ապրեսյանցը, Ավետիք

[374] Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920թթ.), էջ 115-132:
[375] Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 103-114:
[376] «Մշակ», 1881, ապրիլի 22:
[377] «Տարազ», 1891, հմ. 22, էջ 319:

Պապյանցը, Հովսեփ Տեր-Մինասյանը, Զ. Սարգսյանը, Ավագ Մահտեսի Հակոբյանցը, Սմբատ Դադյանը:

Ամփոփելով վերոշարադրյալը կարող ենք նշել, որ Շուշիի սոցիալ-տնտեսական զարգացումը, մշակութային-լուսավորչական զարթոնքը և բարեգործության վերելքը պայմանավորեց գրահրատարակչության սկզբնավորումը: Բնականաբար, վերջին հանգամանքը պետք է հանգեցներ նաև պարբերական մամուլի ձևավորմանը: Լինելով Անդրկովկասի խոշոր կենտրոններից մեկը՝ Շուշիի հայությունը մշտապես տեղեկանում էր ինչպես երկրամասի, ռուսական կայսրության հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակին, այնպես էլ մանավանդ հայության ազգային կյանքի համար հետաքրքրություն ներկայացնող իրադարձություններին:

1874թ. թեմական դպրոցի ուսուցիչ Խորեն Ստեփանեի խմբագրությամբ Շուշիում հրատարակվեց առաջին՝ «Հայկական աշխարհ» պարբերականը[378]: Այն 1865-1879թթ. թեպետ տպագրվել է Թիֆլիսում, և ընդամենը մեկ տարի՝ Շուշիում, բայց և այնպես այդ մեկամյա հրատարակությունը որոշակի դերակատարություն ունեցավ թե՛ տեղական մամուլի սկզբնավորման և թե՛ բուն պարբերականի զարգացման գործում, մանավանդ, երբ նկատի ենք առնում կրոնական և բարոյախրատական հրապարակումներին զուգահեռ հայրենի քաղաքի կյանքին առնչվող նյութերի առկայությունը:

Թեպետ Ն. Տեր-Ավետիքյանի հեղինակած-կազմած՝ 1881թ. հրատարակված «Քնար խոսնակ» գրական ժողովածուն[379] ներկայացրել ենք որպես գիրք, այդուհանդերձ հարկ ենք համարում այն նաև որպես պարբերական կարևորել:

Հաջորդ պարբերականը գրական-քաղաքական և ազգային «Գործ»[380] ամսագիրն էր, որ հրատարակվել է 1882-1884թթ.: Տպվել է 3 համար: Խմբագիր-հրատարակիչ Սիմոն Գասպարի Հախումյանը (4.02.1859-1905) աշակերտել էր Պետրոս Ծանշյանին: Շուշիում նախնական

---

[378] Ավագյան Ս., Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից, էջ 20-31:
[379] Ավագյան Ս., նշվ. աշխ, էջ 38-42:
[380] Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920թթ.), էջ 78-103:

կրթություն ստանալուց հետո Հախումյանը ավարտել է Գևորգյան ճեմարանը, Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետը, իսկ 1880-1882թթ.՝ եղել Շուշիի թեմական և օրիորդաց դպրոցների հայոց և ռուսաց լեզուների ուսուցիչ, հոդվածներով հանդես եկել «Մշակ», «Տարազ», «Աղբյուր», «Արձագանք», «Նոր դար» թերթերում[381]:

Ս. Հախումյանը, ներկայացնելով պարբերականի ծրագրային ելակետը, նշել է. «Ժողովրդի իդեալական հայրենիքի հիմքը նրա իրական հայրենիքի շոշափելի հողը պետք է լինի, իսկ ժողովրդասերի իդեալական հայրենիքը այդ ժողովրդի իրական կեանքը պետք է լինի: Ով կամենում է օգնել ժողովրդին, պետք է նրա հետ զգայ այն ամենը, ինչ-որ նա զգում է: Չի կարելի մի ժողովրդի զգացածը զգալ առանց նրան ճանաչելու»[382]:

«Գործ» ամսագիրն անդրադարձել է երիտասարդության, մամուլի հարցերին, գրականության և արվեստի քարոզչությանը, գյուղացիության վիճակին, մշտապես շեշտել հայրենիքի ուսումնասիրության գործի, Արցախի կրթական ոլորտի, դպրոցների վիճակի բարելավման կարևորությունը: Ամսագրին աշխատակցել են Հ. Առաքելյանը, Ալ. Քալանթարը:

Հայերեն ազգագրական առաջին պարբերական՝ «Ազգագրական հանդես»-ն իր պատմությունը սկսել է 1896թ. Շուշիում՝ 1895-1897թթ. թեմական դպրոցի ուսուցիչ Երվանդ Լալայանի խմբագրությամբ: Թեպետ հանդեսի հաջորդ 25 համարները հրատարակվեցին Թիֆլիսում, սակայն ինքնին խոսուն փաստ է այն հանգամանքը, որ ազգագրության, բանահյուսության, պատմության, վիմագրության վերաբերյալ հիմնարար ուսումնասիրություններ հրապարակած հանդեսն իր փառավոր ուղին սկզբնավորել է հենց Շուշիում:

Կարևորելով վերոնշյալ պարբերականների ունեցած ներդրումը՝ Արցախի մամուլի պատմության վաստակավոր հետազոտող Ս. Ավագյանը իրավացիորեն նշել է. «Ս. Հախումյանի «Գործ» և Ե. Լալայանի «Ազգագրական հանդես» պարբերականները ունեին ոչ թե տեղական, այլ համազգային ընդգրկումներ և նշանակալից դեր խաղացին հայ հասարակական մտքի ու ազգային

[381] «Լուսա», 1905, հմ. 4:
[382] «Գործ», 1882, էջ 1:

մշակույթի զարգացման գործում»[383]:

1911-1912թթ. Ն. Եարամիշյանի խմբագրությամբ հրատարակվեց «Ղարաբաղ» եռօրյա գրական-հասարակական թերթը, որին աշխատակցել են Վրթ. Փափազյանը, Ս. Տեր-Մինասյանը, Տմբլաչի Խաչանը, Խ. Լորենցը, Լ. Աթաբեկյանը: Թերթը հիմնականում կրթամշակութային, գրական-գեղարվեստական հարցերին էր ուշադրություն դարձնում:

1915-1917թթ. Լևոն Վարդապետյանի խմբագրությամբ հրատարակվեց սոցիալ-դեմոկրատական ուղղության «Փայլակ» լրագիրը[384]: Հրապարակումներից հատկապես հիշատակելի է Լեոյի «Ղարաբաղը և ղարաբաղցիները» մեծածավալ հոդվածը[385]:

1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Շուշիում առավել ակտիվացավ հասարակական-քաղաքական և կուսակցական մամուլը: Հիշատակենք՝ Հ. Մուսայելյանի դաշնակցական «Ապառաժ» (1917-1919), Աշոտ Հովհաննիսյանի բոլշևիկյան «Նեցուկ» (1917), «Արցախ» (1919) և «Նոր կյանք» (1919) թերթերը[386]:

Հայերենից բացի տպվել են նաև ռուսերեն թերթեր, որոնք նույնպես տպագրվում էին հայ բարերարների նյութական միջոցներով և մտավորականների ջանքերով[387]: Շուշիի մամուլի ուշադրության կենտրոնում էին կրթական համակարգի և լուսավորության հարցերը:

Շուշիում հրատարակված մամուլը կես դարի ընթացքում իրական հնարավորություն ստեղծեց արցախցի մտավորականների համախմբման, ազգային հրատապ թեմաների շուրջ կառուցողական քննարկումների ծավալման ուղղությամբ: Շատ դեպքերում զուտ անձնական-բարեգործական նախաձեռնությամբ, ոչ բավարար նյութական միջոցներով, ցարական դաժան գրաքննության պայմաններում շուշեցի հրատարակիչ-խմբագիրները ձևավորեցին Արցախի հրապարակախոսական սեփական դպրոց՝ իր ավանդույթներով:

Որպես տարածաշրջանի արդյունաբերական-առևտրական խոշորագույն կենտրոններից մեկը՝ փաստորեն Շուշին զբաղեցրել է նաև արևելահայության հոգևոր-մշակութային ու հասարակական-

[383] Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920թթ.), էջ 132:
[384] Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 198-220:
[385] «Փայլակ», 1917, մարտի 9, 16, 23:
[386] Ավագյան Ս., նշվ. աշխ., էջ 228-248:
[387] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 237:

քաղաքական առաջատարի դիրք, ինչը մեծապես պայմանավորված էր նաև գրատպության ասպարեզում շուշեցի բարեգործների հայրենանվեր գործունեությամբ:

Շուշիի մշակույթի ծաղկմանը համընթաց զգալի վերելք է ապրում նաև թատերական կյանքը: Շուշիի թատերական կյանքի պատմությունը այդ ժամանաշրջանի քաղաքի մշակութային կյանքի աշխույժ ստեղծարարության վառ դրսևորումն էր: 19-րդ դարը նաև գավառական թատրոնի ծաղկման շրջանն էր, այսինքն՝ սիրողական, կիսապրոֆեսիոնալ ու ժամանակավոր խմբերի, ընտանեկան, դպրոցական և բարեգործական ներկայացումների սկիզբը: Շուշիում թատերական արհեստավարժության տարրեր պարունակող առաջին ներկայացումներն իրականություն են դարձել դեռևս 1840-ական թվականներին, երբ հայրենի քաղաքը վերադարձած ուսանողները սեփական նախաձեռնությամբ կատարում էին տարբեր բեմադրություններ՝ ստանձնելով թե՛ արական, թե՛ կանացի դերերը: 1868թ. սկսած՝ բեմադրությունները տեղի էին ունենում հայ մեծահարուստ Համբարձում Հախումյանի տան դահլիճում: Իսկ 1873 թ. հատուկ թատրոնի համար Մկրտիչ (Նիկիտա) Խանդամիրյանի ջանքերով փայտից կառուցվում է քաղաքային ակումբի շենք և ի պատիվ կառուցողի կոչվում «Խանդամիրյան թատրոն»: Ծնունդով շուշեցի, հայտնի ձեռներեց, թատերական և հասարարական գործիչ Մկրտիչ Խանդամիրյանն իր հոր՝ Աբրահամի թողած ժառանգությունը ներդնում է թատրոնի ստեղծման գործում: Ֆրանսիայում կրթված և ֆրանսիական բարձր թատերական արվեստը որդեգրած այս խոհեմ և խստապահանջ հայը պիտի դառնար Շուշիի թատրոնի մեկենասն ու ոգևորիչը: 1882թ. Շուշի է այցելում հայ թատերական արվեստի, հայ բեմի մեծ հանճար Պետրոս Ադամյանը, որի ներկայացումները անցնում են հանրային հետաքրքրության մթնոլորտում: Հասարակության ջերմ վերաբերմունքից ոգեշնչված՝ մեծ արտիստը Շուշիում մնում է մեկ ամիս[388]:

1891թ. հուլիսի 7-ին Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցու հարևանությամբ Մկրտիչ Խանդամիրյանի միջոցներով կառուցվել է քաղաքային թատրոնի շենքը՝ 350 տեղանոց դահլիճով, հարմարավետ

[388] Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմությունը 19-րդ դարում, Եր., 2010, էջ 429:

բեմով, ճեմասրահով և այլ հարմարություններով: Մուրացանի «Ռուզան» դրամայի բեմականացմամբ սկսվում է «Խանդամիրյան թատրոնի» որակապես նոր փուլ, որը կարելի է ոսկեդար համարել: Խանդամիրյանի թատրոնում բեմադրվում են հայ և օտարազգի հեղինակների՝ Սունդուկյանի, Շիրվանզադեի, Պարոնյանի, Պուշկինի, Լերմոնտովի, Օստրովսկու, Իբսենի, Հյուգոյի և այլոց գործերը: Շեքսպիրի՝ «Համլետ», «Օթելլո», «Լիր արքա», «Վենետիկի վաճառականը» և այլ ստեղծագործությունների բեմականացումը առանձնահատուկ ժողովրդականություն էր վայելում շուշեցիների շրջանում: Թատրոնն ունեցել է էլեկտրական լուսավորություն, որն այն տարիների համար դեռևս հազվագյուտ երևույթ էր ողջ ռուսական Անդրկովկասում:

Թատերական կյանքի զարգացման ուղղությամբ մեծ դերակատարում է ունեցել XIX-րդ դարի 90-ականներին մի խումբ երիտասարդների կողմից հիմնված «Թատերական» բարեգործական ընկերությունը[389]: «Թատերական ընկերության» անդամները ներկայացումներ էին բեմադրում «Խանդամիրյան թատրոնի» դահլիճում և հավաքված գումարները հատկացնում բարեգործական նպատակների համար: «Մշակ»-ը նշում է, որ մի ներկայացումից հավաքվել էր 300 ռուբլի գումար[390]:

Հիմնվելով Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Երևանի, Գանձակի թատրոնների հետ միաժամանակ՝ 90-ականների վերջերին Շուշիի թատրոնը դառնում է ավելի ճանաչված, քան վերը նշված թատրոնները: Իսկ 1905թ. նոր վերջակետ է դրվում Շուշիի ծաղկուն թատրոնի ոսկեդարին: Խանդամիրյանի թատրոնի շենքը զոհ է գնում 1905թ. հայ-թուրքական ընդհարումներին և ամբողջապես հրկիզվում: Շուշիի Խանդամիրյան թատրոնը եղավ և մնում է մեր իրականության մեջ «թատրոն»՝ բառի ընդգրկուն իմաստով, որն իր գոյության ողջ ընթացքում կատարելագործվել է ինչպես եկվոր դերասանների, այնպես էլ տեղի հեղինակների գործերով:

1905թ. հետո Շուշիում թատերական ներկայացումները տրվում էին տարբեր դպրոցների դահլիճներում, մեծահարուստների տներում: Շուշեցի մեծահարուստ Մելքումյան եղբայրների տան

[389] Հարությունյան Մ.Գ., նշվ. աշխ., էջ 24:
[390] «Մշակ», Թիֆլիս, 1897, հմ. 15, էջ 2-3:

դահլիճը տրամադրված էր այդ նպատակի համար, որտեղ ներկայացումներ է բեմադրել Ա. Քոչարյանը[391]:

Հասարակական-քաղաքական գործընթացների, կրթության զարգացումը Շուշիում, տպագրված գրքերն ու թերթերը պետք է հասցվեին բնակչության լայն զանգվածներին: Դրա համար կարիք էր զգացվում, որ Շուշիում բացվեին գրադարաններ, ընթերցարաններ: Այդ գործը նույնպես մտահոգում էր հայ մեծահարուստներին, հոգևորականներին, բարեգործական ընկերություններին, որոնց անմիջական նվիրատվությամբ ու մասնակցությամբ քաղաքում իրար հետևից սկսեցին բացվել նմանատիպ հաստատություններ:

Առաջինը նման փորձ կատարեց Բաղդասար միտրոպոլիտը, ով Շուշիում առաջին գրադարանը հիմնադրեց, որը հարստացնելու համար ձեռք բերեց Վենետիկի Մխիթարյանների բոլոր հրատարակությունները: Այնուհետև 1858 թ. թեմականի ուսուցիչների նախաձեռնությամբ դպրոցում հիմնվեց «Կրթասիրական ընթերցասիրաց ընկերություն»: 1859 թ. սեպտեմբերին՝ նրանց և Սարգիս արքեպիսկոպոսի կողմից բացվեց գրադարան-ընթերցասրահ, որը կոչվում էր «Հասարակաց մատենադարան Շուշուց հայոց»[392]: Արցախում բացված այս առաջին հանրային կառույցին շուշեցի բարերարներ Պ. Աստվածատրյանը, Պ. Բաբայանը և Ա. Բահաթրյանը գրքեր նվիրեցին[393], իսկ տիկին Նվարդ Ժամհարյանը իր ամուսնու՝ գրող Մարգար Ժամհարյանի ամբողջ գրադարանը (բաղկացած 238 գրքից)[394] նվիրաբերեց: «Ընթերցասիրաց ընկերության» կողմից բացված գրադարան-ընթերցարանին Աստվածատուր Ծխիեանցին և Պ. Բաբայ Բաղադուրյանցին հայերեն և ռուսերեն լեզուներով մեծաքանակ գրքեր են տրամադրել[395]:

1882 թ. օգոստոսին Շուշիի տեղական վարչությունը դիմեց Թիֆլիսի խորհրդին՝ Շուշիում ընկերության անունով գրատուն-ընթերցարան բացելու խնդրանքով[396]: Թույլտվությունը ստացվեց

[391] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 258:
[392] «Կռունկ Հայոց աշխարհի», 1860, հմ. 2, էջ 149-150:
[393] Նույն տեղում:
[394] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. 1-ին, Ստ., 2014, էջ 160: «Մշակ», 1909, հունվարի 22:
[395] «Կռունկ Հայոց աշխարհի», 1860, հմ. 2, էջ 148:
[396] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1004, թ. 18 շրջ.:

1888 թ. Ել իզավետպոլի նահանգապետի վկայագրով[397]՝ շուրջ վեց տարի խնդրագրեր և միջնորդագրեր ներկայացնելուց հետո[398]: Ընկերության նյութական միջոցները ընդարձակելու ակնկալիքով, շնորհիվ քաղաքի երիտասարդ ուժերի, կազմակերպվում են ներկայացումներ և մանկական երեկոներ, իսկ գոյացած ողջ արդյունքը ծախսվում է գրադարանի համար անհրաժեշտ կահույք և գրքեր ձեռք բերելու վրա[399]:

Շուշիում բացվելիք գրատուն-ընթերցարանի կանոնադրությունը տեղական վարչության կողմից ներկայացվում է Թիֆլիսի խորհրդին[400], որի հաստատումից հետո Ել 1889 թ. մարտի 12-ին Շուշիի հայկական հրապարակի՝ Խուբլարյան եղբայրների խանութի վերին հարկում տեղի է ունենում հիշյալ հաստատության բացումը[401]: Ըստ կանոնադրության՝

1. Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի տեղական վարչության գրատուն-ընթերցարանը բացվում է Շուշի քաղաքում՝ համաձայն ընկերության կանոնադրության 2-րդ հոդվածի Ե. կետի,

2. գրատուն-ընթերցարանի նպատակն էր հասարակության բոլոր դասակարգերի մեջ նպաստել ընթերցանության տարածմանը,

3. գրատուն-ընթերցարանն ունի պարբերական հրատարակություններ[402] և մատենագրության ու գիտության վերաբերյալ գրքեր[403]:

Գրադարանից օգտվելը վճարովի էր, այն ուներ մշտական, տարեկան, ամսական և օրական ընթերցողներ, ընդարձակ ընթերցասրահ, ստանում էր գրականություն և մամուլ՝ հայերեն ու ռուսերեն: Այս գրադարանը հետագայում անցավ քաղաքային ինքնավարության տնօրինությանը[404]:

---

[397] Նույն տեղում, գ. 269, թ. 10:
[398] Նույն տեղում, թ. 1 շրջ., 2, 3 շրջ., 4- 6, 7 շրջ., 8 շրջ., 9:
[399] Նույն տեղում, թ. 115 շրջ.
[400] Նույն տեղում, թ. 14:
[401] ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 169, թ. 1, 2:
[402] «Արձագանք», 1893, հմ. 4, էջ 675-676:
[403] ֆ. 319, ց. 1, գ.173, թ. 1-6:
[404] «Արձագանք», 1904, հմ. 9, էջ 109-112:

Հայոց բարեգործական ընկերության բարեգործական գրադարանը պարբերաբար ստանում էր գրքեր և մամուլ[405]: Արդեն 1894թ. այս բարեգործական գրադարանը 188 օրինակ հայերեն պարբերական (25 օրինակ «Արձագանք», 58 «Մշակ», 7 «Մուրճ», 82 «Նոր դար», 16 «Տարազ») էր ստանում[406]: Մեծ էր գրադարանների դերը բնակչության մշակութային–կրթական մակարդակի բարձրացման գործում: Գրադարաններին կից գործում էին ընթերցարաններ, որոնք բավարարում էին բնակչության ընթերցասիրության պահանջը:

Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի տեղական վարչության գրատուն-ընթերցարանին նվիրատվություններ են կատարել հետևյալ անձինք. Խանում և Հովհաննես Ադամյաններ՝ 300 ռուբլի արժողությամբ 47 հատոր գիրք[407], Աննա Ղուկասյան՝ 200 ռուբլի[408], Սարգիս Ադամյան՝ 100 ռուբլի[409], Հովհաննես Դավթյան Ադամյանց՝ 600 ռուբլի[410]: Շուշիի մի խումբ երիտասարդներ Զրօրինեքի տոնին ժողովել են և ընկերության գրադարանին նվիրել 1891 թ.՝ 247 ռուբլի[411], 1893 թ.՝ 154 ռուբլի[412]:

1897-1898 թթ. շուշեցի հայտնի գործիչներ Հ. Հախումյանի և Ղ. Դոլուխանյանի նախաձեռնությամբ հիմնադրվում է գրադարան-ընթերցարան, որն ուներ 4000 կտոր հայերեն և ռուսերեն գիրք[413]:

Արվեստի բնագավառում որոշակի գործունեություն է ծավալել Շուշիի մշակութային միություն ընկերությունը, որը հիմնադրվել է 1869 գեղանկարչուհի Մարգարիտ Ալեքսանյանի նախաձեռնությամբ[414]: Մ. Ալեքսանյանի նախասիրություններից էր ձեռագործությունը: Ազգանվեր գեղանկարչուհին միության անդամների նախաձեռնությամբ հավաքում է բազմաթիվ ձեռագիր մատյաններ, Ավետարան և թեմական դպրոցին կից ստեղծում է նկարչական արհեստանոց, որի սաները (Ստ. Աղաջանյան, Միքայել

[405] Գրացուցակ Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Շուշու գրադարանի, Շուշի, 1891, 1894, 1910:
[406] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, հմ. Բ, էջ 106-107:
[407] Ֆ. 319, ց. 1, գ. 269, թ. 19 շրջ., թ. 20, թ. 22:
[408] ՀԱԱ, Ֆ. 319, ց. 1, գ. 269, թ. 23 շրջ., 24 շրջ., 25 շրջ., 27 շրջ.:
[409] Նույն տեղում, թ. 32, 33, 36, 37 շրջ.:
[410] Նույն տեղում, թ. 34 շրջ., 38 շրջ.:
[411] Նույն տեղում, գ. 269, թ. 26 շրջ.:
[412] Նույն տեղում, գ.1005, թ. 32 շրջ.:
[413] Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 239:
[414] Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 342:

Արուտչյան և ուրիշներ) հետագայում դարձան արվեստի վաստակավոր գործիչներ[415]: Ուշագրավ է հատկապես նրա պատրաստած □Հայկական գեղանկարչութիւն□ ալբոմը, որը հրատարակվեց ընկերության անդամների ջանքերով: Մ. Ալեքսանյանի հիմնած ընկերությունը որոշակի նյութական միջոցներ է հատկացնում ոչ միայն դպրոցներին, այլև գեղարվեստական և այլ ժանրի գրականության հրատարակմանը:

Շուշիում զարգացած էր նաև ճարտարապետությունը, երաժշտությունը և մշակույթի այլ ճյուղեր: Քանի որ ճարտարապետության մասին առաջին գլխում մանրամասն խոսվել է, նպատակահարմար չենք համարում այստեղ ևս անդրադառնալ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք արձանագրել, որ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին, շնորհիվ բարերարների և բարեգործական ընկերությունների միջոցների, նվիրատվությունների, կազմակերպած աշխատանքների, Շուշին դարձավ ոչ միայն Արցախի, այլև Անդրկովկասի ու բովանդակ հայության կարևորագույն գիտամշակութային կենտրոններից մեկը:

Հայ ժողովրդի, տվյալ դեպքում արցախահայության, գիտական և մշակութային կյանքը յուրահատուկ է նրանով, որ մանավանդ XIX դարում գիտությունը, տպագրությունը, մշակույթը, արվեստի տարբեր ճյուղեր և այլ բնագավառներ առաջընթաց էին ապրում: Հայ գիտությունն ու մշակույթը, ունենալով հազարամյակի պատմություն, նոր վերելք էին ապրում իրենց ընդգրկումով, բովանդակությամբ և բազմազանությամբ: Այդ տեսակետից հիշատակության արժանի է Շուշին՝ տարածաշրջանում հայ գիտության ու մշակույթի զարգացման կարևորագույն կենտրոններից մեկը, որի մշակութային կյանքի վերելքը գալիս է դարերի խորքից և խտացումն է արցախահայության ստեղծած մշակութային արժեքների:

Պատմական զարգացման նոր ժամանակներում Արցախի մշակույթը հանդես է եկել ոչ թե որպես իր մեջ ներառված բաղադրիչների պարզ հանրագումար, այլ բարդ ու ճկուն մի համակարգ, որում ճշգրտորեն

[415] Հարությունյան Մ.Գ., նշվ. աշխ., էջ 24:

ըմբռնվել են դարաշրջանի խնդիրները և բավարարվել ժամանակի ու միջավայրի պահանջմունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ատենախոսության մեջ ուսումնասիրված հիմնահարցերը՝ կատարենք մի քանի եզրակացություններ:

Հնուց ի վեր բարեգործությունը եղել է հայոց հոգեկերտվածքի և մտածելակերպի անբաժան մասը և որոշակիորեն բնութագրում է նրա ազգային ինքնատիպությունը: Բարեգործությունը՝ որպես հայոց մտածելակերպի հոգևոր-բարոյական կարևորագույն բաղադրիչներից մեկը, անհրաժեշտ է դիտարկել ու կարևորել ոչ միայն որպես բնակչության սոցիալական առումով առավելապես քիչ ապահովված խավի պաշտպանության գործիք, այլև ընդհանրապես բարոյական դաստիարակության իրական հնարավորություն: Մեր հասարակության մեջ աղքատախնամության և բարեգործության վերաբերյալ շարունակական ակտիվ քննարկումների ու կյանքում դրանց իրականացման արդյունքում ձևավորվում է բարեգործություն կատարելու գաղափարախոսությունը:

Արխիվային նորահայտ փաստաթղթերի հիման վրա միանշանակ հիմնավորել և փաստարկել ենք ինչպես Անդրկովկասում, այնպես էլ

հատկապես Արցախում Շուշիի կրթական, սոցիալ-տնտեսական կարևորագույն կենտրոններից մեկը լինելու պարագան:

Դպրոցաշինության ասպարեզում ծնունդով շուշեցի բարերարների ազգանվեր գործունեությունն ակնառու վկայում է նրանց հայրենասիրական դիրքորոշումը, ծննդավայր Շուշիում և Արցախում կրթական գործի զարգացման նկատմամբ ունեցած սրտացավ վերաբերմունքը, արցախահայության շրջանում լուսավորության հանրայնացման ուղղությամբ մտահոգությունը:

Ներկայացնելով XIX դարի երկրորդ կեսին-XX դարի առաջին քսանամյակին բարերարների եկեղեցաշինական գործունեությունը Շուշիում՝ այդ ամենը դիտարկել ենք հայոց ընդհանուր եկեղեցաշինության և բարեգործության համապատկերում: Միաժամանակ, ըստ արժանվույն կարևորել և գնահատել ենք շուշեցի բարեգործների հայրենանվեր գործունեությունը, որն ակտիվորեն դրսևորվեց հենց իրենց հայրենի քաղաքում եկեղեցիների շինարարությամբ:

Անհատ բարերարներից բացի կարևորվում է նաև Շուշիի բարեգործական կազմակերպությունների հայրենաշեն գործունեությունը, որն իր պատմական փորձով և նպատակասլացությամբ օրինակելի կարող է լինել ներկայիս նման կառույցներին:

XIX դարի երկրորդ կեսից սկսած՝ Շուշիի համակողմանի սոցիալ-տնտեսական զարգացումը, մշակութային-լուսավորչական զարթոնքը և բարեգործության վերելքը պայմանավորեցին քաղաքում գրահրատարակչության սկզբնավորումը: Ձևավորվեց նաև պարբերական մամուլ: Լինելով Անդրկովկասի խոշոր կենտրոններից մեկը՝ Շուշիի հայությունը մշտապես տեղյակ էր լինում և հետաքրքրվում ինչպես երկրամասի, այնպես էլ ռուսական կայսրության հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի, բնականաբար, նաև հայության ազգային կյանքի հետաքրքրություն ներկայացնող բոլոր իրադարձությունների մասին: Շուշիում հրատարակված մամուլը ավելի քան կես դարի ընթացքում իրական հնարավորություն ստեղծեց արցախցի մտավորականների համախմբման, ազգային հրատապ թեմաների շուրջ

կառուցողական քննարկումների ծավալման ուղղությամբ: Շատ դեպքերում զուտ անձնական-բարեգործական նախաձեռնությամբ, ոչ բավարար նյութական միջոցներով, ցարական դաժան գրաքննության պայմաններում շուշեցի հրատարակիչ-խմբագիրները ձևավորեցին Արցախի հրապարակախոսական սեփական դպրոց՝ իր ավանդույթներով:

Ծուշիում գրքի և մամուլի հրատարակչական գործի պատմագիտական ուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեց հավուր պատշաճի արժևորելու և ներկայացնելու Անդրկովկասում մշակութային կարևորագույն կենտրոններից մեկը եղած քաղաքի ունեցած վճռորոշ դերակատարությունը: Լինելով տարածաշրջանի արդյունաբերական-առևտրական խոշորագույն կենտրոններից մեկը, անտարակույս, Ծուշին զբաղեցրել է նաև արևելահայության հոգևոր-մշակութային ու հասարակական-քաղաքական առաջատարի դիրք, ինչը մեծապես պայմանավորված էր նաև գրատպության ասպարեզում շուշեցի բարերարների հայրենանվեր գործունեությամբ:

Ատենախոսության ամենագլխավոր եզրակացությունն այն է, որ բարեգործությունը կարևորագույն նախապայմանն է՝ հասարակության բարոյա-հոգևոր զարթոնքի, բնակչության կարոտյալ խավերի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, երիտասարդությանը հայրենանվերության, գթասրտության և մերձավորի նկատմամբ կարեկցանքի ոգով դաստիարակելու տեսանկյունից: Այն միաժամանակ նաև որոշակի դերակատարություն կարող է ունենալ պետականության ամրապնդման ուղղությամբ: Իսկ այս ամենի համապատկերում՝ շուշեցի բարերարների կերպարը և նվիրվածությունն անշուշտ միանշանակ ուսանելի են:

Մեկնակետ ունենալով հետազոտված ժամանակաշրջանը և դիտարկելով արդի վիճակը՝ համոզված կարող ենք փաստել, որ բարեգործությունն ամենևին էլ սոսկ պատմության գիրկն անցած և մոռացության մատնված անցյալ չէ, այլ, ինչպես ներկան է ցույց տալիս, կրկին աշխուժացած և վերակենդանացած հասարակական-ազգային կարևոր երևույթ:

Հայ իրականության մեջ պատմականորեն բարեգործությունը երևույթը որպես ֆենոմեն դարձել է մեր ժողովրդի ավանդական մշակույթի կարևորագույն տարր՝ նաև առօրյա կենսակերպի առանձնահատկությունը բնորոշող:

Եզրափակելով, խորապես հույս ենք հայտնում, որ ժամանակի ընթացքում, Արցախյան ազատամարտի շնորհիվ ազատագրված Շուշին կրկին կդառնա Արցախի մշակութակրթական կարևորագույն կենտրոններից մեկը՝ վերականգնելով նախկինում ունեցած փառքը, ինչ ում էական դերակատարություն կունենան ժամանակակից բարերարները:

ՀԱՎԵԼՎԱԾ

Փաստաթուղթ N1

«Ի գործոց վիճակային կոնսիստորիայիդ Ղարաբաղու ի հետևումն խնդրագրութեանց մերոյ յայտնի է դմին, նախ՝ թէ՝ հանգուցեալ Շուշա քաղաքացի Անդրէաս Խանդամիրեանց ըստ կտակի նորա կազմելոյ 'ի 1 Ապրիլի 1852 ամի, և յաւելուածոյ նորին 'ի 15 Դեկտեմբերի նոյն ամի, կարգեալ է զմեզ և զհանգուցեալ զոնքաչս մեր լիակատար իրավամբ կտակատար 'ի վերայ բաժնի գումարոյ հանգուցեալ որդւոյ իւրոյ վաղաթառամ Մնացականայ, առ 'ի կատարելոյ մեր զպատուէր նոյն կտակին, յորում նշանագրեալ է զտասն հազար ռուբլիս արծաթի 'ի կայից իւրոյ վասն գործադրելոյ 'ի վերայ բարերար և Աստուածահաճոյ գործոց ի հիշատակ նոյն հանգուցեալ որդւոյ իւրոյ Մնացականայ ըստ նկատողութեանց

կտակատարացն միայն՝ չ'խառնելով ի գործս դոցին մինչ անգամ ո՛չ յորդւոց հանգուցելոյն, ո՛չ ազգականաց իւրոց և ո՛չ այլ կողմնակի անձանց:

Երկրորդ՝ մեք կտակատարքս առ 'ի շահի ցուցանելոյ զայս գումար մինչ ց'հասանել քառասուն հազար րուբլւոյ արծ[աթ] գրաւոր կարգաւ յանձնեալ եմք զայն տասն հազար րուբլին որդւոյ հանգուցելոյն Ռստակէսի Խանդամիրյանց առ 'ի շահի ցուցանելոյ ընդ վերանկատողութեամբ իւրով 'ի Պետական բանկին Մոսկուայու, այսու կարգաւ, գումարս այս հասեալ է առ այժմ մինչ զքառասուն ութ հազար րուբլիս արծաթեայ: Առ այս մեք կտակատարքս օրինաւոր կարգաւ պահանջեցաք զհիշեալ գումարն 'ի Հոգաբարձուաց հանգուցեալ Ռստակէսի Խանդամիրեանց յայրի կին Նինօյէ Խանդամիրեանց և ի Գաբրիէլէ Բեկլարեանց: 'ի հետևումն որոյ որոնք խնդրագործ եղեն հաշտարար դատաւորին Շուշւոյ միջնորդել 'ի կողմանէ իւրմէ ուր հարկ է առ 'ի վճարելոյ որպէս զկտակեալ գումարս յօգուտ բարերար նպատակի, նոյնպէս և զպատկանելի գումարն ժառանգաց Արիստակէսի Խանդամիրեանց:

Երրորդ՝ մեք կտակատարքս զդիտաւորութեանց մերոց գրաւոր կարգաւ յայտնեալ եմք որպէս վիճակային կոնսիստորիին Ղարաբաղու, նոյնպէս և հոգաբարձուաց Հոգևոր Դպրանոցին Շուշւոյ և օրիորդաց ուսումնարանին թէ՝ յիշեալ ի վերոյ գումարն զկնի ստացման յետագայ կարգաւս պարտին ի գործ դնել՝ 1. Քսան հազար րուբլին թողուլ ի Մոսկուայու Պետական բանկին շահեցողութիւն [աղաչաւ], յանուն Թեմական Հոգևոր Սեմինարիային Շուշւոյ, այնու պայմանաւ, զի դրամագլուխն մնասցէ անձեռնմխելի 'ի կողմանէ հոգևոր և մարմնաւոր իշխանութեանց և այլ կողմնակի անձանց, իսկ տոկոսիք նորին ստանալ ամ ըստ ամէ և 'ի գործ դնել յօգուտ նոյն սեմինարիին, Տէր մի՛ արասցէ եթէ յիշեալ ուսումնարանն վերասցի ի միջոց ի կողմանէ Տէրութեան, յայնժամ Տէր յիշեալ գուրարոց եղիցին չորեքին երեցփոխանք եկեղեցեաց Շուշի քաղաքի և ըստ յատուկ ընդհանուր տնօրէնութեան Հոգևոր իշխանութեան տեղւոյս և Հայազգի ժողովրդականաց քաղաքին Շուշւոյ, 'ի գործ դիցին զայն գումար վասն բարերար և ազգօգուտ նպատակի մերոյ ըստ նոցայն խոհեմ արժանադատութեանց: 2. Հինգ

հազար ռուբլի արծաթն տալ Հայոց հասարակութեան Շուշի քաղաքի յօգնութիւն բերելի ջրոյն 'ի նոյն քաղաքս, այնու պայմանաւ, զի մի' ճիւղն ջրոյն բերցի 'ի դուռն շրջապատ գետնոյն մերձ առաջնորդական տանն, ուրանօր կառուցանելոց են զմի եկեղեցի և զմի շինութիւն ուսումնարանի 'ի պէտս օրիորդաց ծխական Հոգևոր դպրոցին Շուշւոյ: 3. Մնացորդ քսան երեք հազար ռուբլին կիսել համահաւասար և ապա գործադրել կէսն 'ի պէտս շինութեան միոյ եկեղեցւոյ և կէսն օրիորդաց ուսումնարանին:

Չորրորդ՝ բաժանելով յիշեալ 'ի վերայ քառասուն ութ հազար ռուբլիս 'ի վերայ վերոյգրեալ հիմնարկութեանցն ըստ թելադրութեան խղճմտանաց մերոց և ըստ իրաւանց տուեալ մեզ կտակաւ 'ի հանգուցեալ Անդրեասայ Խանդամիրեանց ցանկամբ իրագործել ամենայն պատրաստականութեամբ զպատուէր հանգուցելոյն և տալ վախճան սոյն ձեռնարկեալ գործոյս:

Հինգերորդ՝ որպէս քաջ յայտնի է մեզ 'ի գրութենէ Շուշա քաղաքացի Իւանայ Իսահակեան Ժամիարեանց 'ի 24-ն Փետրվարի այսր ամի, ըստ գրաւոր յանձնարարութեանց մերոց, հոգաբարձուաց օրիորդաց և հոգևոր ուսումնարանին Շուշւոյ և Հոգաբարձուաց 'ի վերայ որբոց հանգուցեալ Ռստակէսի Խանդամիրեանց, նոյն քառասուն ութ հազար ռուբլին ստացեալ է 'ի Պետական Բանկէն Մոսկուայու, որոյ 20.200 ռուբ. ձգեալ է 'ի նորոյ 'ի նոյն Բանկն յանուն Սեմինարիին Ղարաբաղու և ստացեալ անդի զանդորրագիր ընդ N. 256382, առաքէ զայն 'ի Շուշի, զոր պատիւ ունեմք 'ի միասին ընդ սմին մատուցանել վիճակային կոնսիստորիիդ Ղարաբաղու, առ 'ի յանձնելոյ զայն օրինաւոր կարգաւ, Հոգաբարձութիւն Հոգևոր դպրոցին Շուշւոյ 'ի պահպանութիւն նորա, համաձայն վերոյգրեալ տնօրէնութեանց մերոց, իսկ վասն ստացման նոյն անդորրագրին տալ մեզ զայնպիսին ընդ ստորագրով Ատենապետի կոնսիստորիիդ և նախագահի Հոգաբարձութեանս և անդամոց նոցին:

Վեցերորդ՝ պատիւ ունեմք յայտնել և զայս թէ՝ վասն մնացեալ քսան և ութ հազար ռուբլի գումարոյն, ստացեալ եմք 'ի պարոն Ժամիարեանցէն 'ի Մուսկուայէ զերկու հատ անդորրագիրս ընդ NN. 768 և 769 և գտանին 'ի պահեստի մինչ զառանձին տնօրէնութիւն վասն նոցին ի մէնջ առ պարոն Բաբայն Բէկլարեանց, իսկ նշանակեալ

'ինոսին դրամագլուխն գտանին 'ի շահեցողութեան 'ի բանկային տանն Մոսկուայ առ պարոն Ժամիարեանցն:

Եօթներորդ՝ ստացումն գործադրելի գումարին եղիցին ընդ ձեռն կտակատարաց հանգուցելոյն, ձեռամբ որոց հանել 'ի ծախս 'ի վերայ նոյն շինութեանց, և ստանալի գումարն միշտմնասցէ 'ի մէնջ առ պարոն Բաբայն Բէկլարեանց գիտութեամբ նորոգ ընտրելի չորից պատուորագոյն անձանց իբրև հոգատարաց 'ի վերայ շինութեանց թէ՛ եկեղեցւոյն և թէ՛ օրիորդաց ուսումնարանին, և առ այս վախճան խնդրել 'ի վիճակային կոնսիստորիայէդ Ղարաբաղու շնորհել մեզ զմի ժապավինեալ մատեան առ 'ի գրելոյ 'ինմին մանրամասնօրէն զմուտս և զծախս նոյն շինութեանց, տալով յիշեալ ընտրելի չորից անձանց զիրավունս 'ի վերջ իւրաքանչիւր ամսոյ տարւոյն ստուգեսցին ընդ ստորագրութեամբ իւրեանց զմուտս և զծախս դրամոց նոյն շինութեանց: Եւ ութերորդ՝ խնդրեմք խոնարհաբար զարարեալ տնօրէնութիւն իւրմէ ըստ այսմ խնդրոյ մերոյ տալ մեզ գիտել վասն տեղեկութեան: Առ որ և ստորագրեմք»[416]:

Փաստաթուղթ N 2

Մոսկվաբնակ բարեգործ Բաղդասար Արզումանյանցի նամակը

«Ա. Ես՝ Շուշիի քաղաքացի Մոսկուաբնակ Բաղդասար Արզումանեանցս, ի վաղուց աչքի առնելով Ղարաբաղի Հայոց Հոգևոր Թեմական Դպրանոցի նիւթական վիճակը, որը վտանգ է սպառնում նրա ապագայ լուսատու յարատևութեան, և կամենալով, որ այդ պատկառելի հիմնարկութեան 75-ամեակը, որ լրանում է ներկայումս, գոնէ կարողանար նրան բարձրացնել նիւթապէս այնքան, որ նա կարենար մշտական և աւելի լոյս տարածել իմ հայրենակից Ղարաբաղի խաւար ժողովրդի մէջ, ես Աստուծոյ օրհնութեամբ և յօժար կամքովս իմ միջոցներից նուիրաբերում եմ իմ ծննդավայր Ղարաբաղի Շուշի քաղաքի Հայոց Թեմական Դպրանոցին երկու հարիւր հազար (200.000) ռուբլի նրա ապահովութեան համար, որպիսի գումարը պէտք է ընդմիշտ մնայ անձեռնմխելի, իսկ տոկոսիքը իւրաքանչիւր տարի մտնում է նոյն դպրանոցի նախահաշուի մուտքի մէջ:

[416] ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 46, թ. 2-3 շրջ.:

Բ. Վերոյիշեալ նուիրաբերածս երկու հարիւր հազար ռուբլին դպրանոցի 75-ամեայ յոբելեանը կատարելու օրից, այն է՝ ներկայ 1913-14 ուսումնական տարուայ սկզբից, ես տալիս եմ ի սեպհականութիւն Ղարաբաղի Հայոց Հոգևոր Դպրանոցին հետևեալ ձևով:

Մինչև իմ մահը՝ ես Բաղդասար Արզումանյանցս վճարելու եմ իւրաքանչիւր տարի դպրանոցի Հոգաբարձութեանը վերոյիշեալ մայր գումարի տոկոսիքը հինգ տոկոսով՝ այն է տասը հազար (10.000) ռուբլի, իսկ իբրև ապահովութիւն նուիրաբերածս մայր գումարի, տալիս եմ դպրանոցին Մոսկուա քաղաքում գտնուող, աւելի խոշոր արժողութեամբ, քան նուիրաբերածս գումարը, իմ մէկ տուն-կալուածքս, որ գտնուում է Покровка, Чистыепруды կոչուած կենտրոնական քաղաքամասում 1046 քառ. սաժ.[են](մոտավորապես 2232 քառ.մ) տարածութեամբ:

1) Իմ մահուանից յետոյ իմ օրինական ժառանգները պարտաւոր են, ոչ ուշ քան երկու տարի, մայր գումար երկու հարիւր հազար ռուբլին իւր տոկոսներով կանխիկ դրամով, կամ նոյն իսկ գումարը արժեցող պետական արժէթղթերով մտցնել որևէ բանկային հաստատութիւն, համաձայնութեամբ Ամենայն Հայոց Հայրապետի, ազատելով վերոյիշեալ իմ անշարժ կալուածքը, իսկ եթէ վերոյիշեալ գումարն իմ օրինական ժառանգները երկու տարուայ ընթացքում իմ մահիցս յետոյ չվճարեն, այդ դէպքում դպրանոցին իբրև ապահովութիւն թողած տուն-կալուածքս մնում է ընդմիշտ ի սեպհականութիւն Ղարաբաղի Հայոց Հոգևոր Դպրանոցի, որի արդիւնքով պահպանվում է դպրանոցը:

2) Նաև ինձ եմ վերապահում իրաւունք իմ կենդանութեան ժամանակ ևս նուիրաբերածս երկու հարիւր հազար ռուբլին, իմ օրինական ժառանգներին պարտաւորեցրածս ձևով, մտցնել բանկային որևէ հաստատութիւն և, իբրև ապահովութիւն թողած 1046 քառ. սաժ. տուն-կալուածքս ազատհամարել:

Գ. Մինչև իմ մահս՝ ես Բաղդասար Արզումանյանցս, իսկ այնուհետև ազգականներիցս մէկը պէտքէ լինի Թեմական Դպրանոցի հոգաբարձական կազմի մէջ իբրև պատուաւոր հոգաբարձու: Այդ հոգաբարձուն պէտքէ լինի Հայ-լուսաւորչական և նրա ընտրութեան

իրաւունքը թողնում եմ իմ ազգականներին: Այդ պատուաւոր հոգաբարձուին իւրաքանչիւր տարի պէտքէ ուղարկուին դպրանոցի նախահաշիւը և տարեկան իսկական հաշիւները:

Դ. Դպրանոցի հոգաբարձութիւնը պարտաւոր է իմ ծննդավայր Զարդանաշէն (Վարանդայի Վերին Թաղավարթ) գիւղի չքաւոր մանուկներից վիճակ ձգելով իւրաքանչիւր տարի ընդունել ձրիավարժ աշակերտներ, երկու հոգի, իբրև որդեգիր իմ անուան:

Ե. Եթէ երբ և իցէ և որևէ պատճառով յիշեալ դպրանոցը փակուելու լինի, նուիրածս անձեռնմխելի երկու հարիւր հազար ռուբլին կամ եթէ այդ գումարի փոխարէն մնացել է 1046 քառ. սաժ. կալուածքս Մոսկուայում, անցնում է ի սեպհականութիւն Ս. Էջմիածնի և նոյնպէս միայն տոկոսները կամ արդիւնքը գործադրվում են Ղարաբաղի որևէ ազգային եկեղեցական Աստուածահաճոյ հաստատութեան վրայ վերստին իմ՝ Բաղդասար Արզումանեանցիս յիշատակի յաւերժացման համար, Ազգիս Վեհափառ Հայրապետի բարձրագոյն հաճութեամբ և հաստատութեամբ, որը վերին հսկողն է նուիրաբերածս նպատակի անշեղ գործադրութեան»[417]:

Փաստաթուղթ N 3

«Յօդ. Ա. Շուշեցի եղբայրներ Ղուկասեաններն ինքնայօժար կամօք իրենց հանգուցեալ Մարիամ քրոջ յիշատակը յաւերժացնելու համար, նուիրում են ի սեփականութիւն Շուշի քաղաքի Ղազանչեցւոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու երկու հարիւր հազար ռուբլի և Շուշիում եղած իրենց սեփական երկյարկանի տունը իւր ընդարձակ բակով և պարտեզով՝ Գ-րդ և Դ-րդ յօդուածներում յիշած նպատակի համար:

Յօդ. Բ. Նուիրաբերուած հիմնական դրամագլուխը պէտքէ մնայ անձեռնմխելի և պահուի պետական գանձարկղում և գործադրուեն միայն տոկոսները:

Յօդ. Գ. Հոգևոր իշխանութիւնը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հովանաւորութեամբ և անմիջական տնօրէնութեամբ և

[417] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 309, թ. 80 շրջ.-82 շրջ., 83 շրջ.-85 շրջ:

Մեծ. պ. Ղուկասեանների ցանկութեան համաձայն, նրանց Մարիամ քրոջ յիշատակը յաւերժացնելու համար, բանում է Ղուկասեանների ծննդավայր Շուշի քաղաքում հայոց օրիորդաց եկեղեցական-ծխական դպրոց Մարիամ-Ղուկասեան անունով, սկզբում վեցամեայ դասընթացքով, հայոց եկեղեցական-ծխական դպրոցների ծրագրով և կանոններով, դասարաններն աստիճանաբար աւելացնելու պայմանով: Վերջին դէպքում դպրոցը նմանուելու է Գայանեան կամ Հովնանեան և նման հայոց եկեղեցական-ծխական միջնակարգ դպրոցների տիպին:

Յօդ. Դ. Եղբ. Ղուկասեանների նուիրաբերած դրամի տոկոսները և տանից գոյացած արդիւնքն ամբողջութեամբ պիտի գործադրուին Մարիամ-Ղուկասեան դպրոցի վրայ սորա գոյութեան ամբողջ ընթացքում, իսկ դպրոցի փակման դէպքում՝ Ղարաբաղի որևէ ազգային եկեղեցական հաստատութեան վրայ, վերստին Մարիամ-Ղուկասեանի անունով: Վեհափառ Հայրապետի բարձրագոյն հաճութեամբ և հաստատութեամբ, որը վերին հսկողն է հաստատութեան և ամբողջ նուիրաբերութեան նպատակի ճիշտ գործադրութեան:

Յօդ. Ե. Մարիամեան-Ղուկասեան դպրոցն կառավարում է Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցական-ծխական հոգաբարձութիւնը, նախագահութեամբ թեմի Առաջնորդի և մասնակցութեամբ Ղուկասեան տոհմի մի անդամի կամ տոհմի կողմից լիազորուած մի անձի, որ պէտքէ լինի հայ-լուսաւորչական և ունենայ մի ձայնի իրաւունք:

Յօդ. Զ. Մարիամեան-Ղուկասեան դպրոցը լուսաւորվելու է հայոց եկեղեցական-ծխական կամ միջնակարգ դպրոցների կանոնադրութեամբ:

Դասատուութիւնը լինելու է ըստ ամենայնի նոյն դպրոցների համար մշակուած և Վեհափառ Հայրապետի կողմից հաստատուած ծրագրով ու հրահանգով:

Յօդ. Է. Մարիամեան-Ղուկասեան դպրոցի եկամուտները կազմելու են՝

ա. Շուշի քաղաքի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու Մեծ. պ. եղբ. Ղուկասեանների կողմից նուիրած գումարի ամբողջ տոկոսը,

բ. Եղբ. Ղուկասեանների նուիրած տան կամ անշարժ կայքերի եկամուտը,

գ. Ղազանչեցւոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու եկամուտներից նպաստ,

դ. Ղուկասեան տոհմից կամ մասնաւոր անհատներից նուիրաբերութիւններ,

ե. Պատահական մուտքեր»[418]:

Փաստաթուղթ N 4

«Յօդ. Ա. Ծուշեցի եղբարք Պ. Պ. Պօղոս, Արշակ, Յակոբ և Աբրահամ Ղուկասեանները ինքնայօժար կամքով իրենց հանգուցեալ քրոջ՝ Մարիամի յիշատակը յաւերժացնելու համար նուիրաբերում են Ս. Էջմիածնին ի սեփականութիւն երկու հարիւր հազար ռուբլի և Ծուշիում եղած սեփական երկյարկանի տունը, իւր ընդարձակ բակով և պարտեզով, քառասուն հազար ռուբլի արժողութեամբ.- ստորև նշանակած Դ. և Ժ յօդուածներում յիշած նպատակների համար:

Յօդ. Բ. Ս. Էջմիածնին նուիրաբերած դրամագլուխը պէտք է մնայ անձեռնմխելի և պահպանուի պետական գանձարկղում, և գործադրուեն միայն տոկոսները: Իւրաքանչիւր տարի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը տնօրինում է «Մարիամ Ղուկասեան» օրիորդաց դպրոցի հոգաբարձութեան՝ դրամագլխի տոկոսներն ստանալու ու ծախսելու նոյն դպրոցի պէտքերի համար:

Յօդ. Գ. Հոգևոր իշխանութիւնը՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հովանավորութեամբ և հոգաբարձութեամբ, Պ. Պ. Ղուկասեանների ցանկութեան համաձայն, նոցա հանգուցեալ քրոջ՝ Մարիամի յիշատակը յաւերժացնելու համար, բանում է Ղուկասեանների ծննդավայր Ծուշի քաղաքում նուիրած իրենց սեփական տունը Հայոց օրիորդաց եկեղեցական ծխական դպրոց «Մարիամ-Ղուկասեան» անունով, սկզբում վեցամեայ դասընթացովը Հայոց եկեղեցական ծխական դպրոցների ծրագրովը-կանոններով, և ապա, ըստ կարելոյն՝ դասարանների թիւն աստիճանաբար

[418] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 974, թ. 9-10:

աւելացնելով, այդ դպրոցը վերածելով Թիֆլիսի Գայեանեան կամ Յովնանեան կամ նման հայ դպրոցների տիպի:

Յօդ. Դ. Թէ նուիրաբերած տունը և թէ նոր կառուցելիք որևէ շինութիւն «Մարիամ-Ղուկասեան» դպրոցին յատկացրած հողի վերայ՝ պէտքէ ծառայեն միմիայն իբրև դպրոցական շէնք և պատկանեն Ս. Էջմիածնին:

Յօդ. Ե. Օրիորդաց «Մարիամ-Ղուկասեան» դպրոցը կառավարելու է Հայոց եկեղեցական ծխական կամ միջնակարգ դպրոցների կանոնադրութեամբ, բոլոր առարկաների դասաւանդութիւնը լինելու է անպայման հայ լեզուովը, բացի ռուսաց լեզուից, ռուսաց պատմութեան և աշխարհագրութեան դասերից, և ըստ ամենայնի նոյնտիպի դպրոցների համար մշակուած և Վեհափառ Հայրապետի կողմից հաստատուած ծրագրով ու հրահանգով:

Յօդ. Զ. Օրիորդաց «Մարիամ-Ղուկասեան» դպրոցը կառավարում է հոգաբարձութեամբ, մասնակցութեամբ Ղուկասեան տոհմի մի անդամի կամ տոհմի կողմից լիազորուած մի անձի, որոնք պէտքէ հայ եկեղեցու անդամ լինեն, ունենալով մի ձայնի իրաւունք: Հոգաբարձութեան նախագահն է Ղարաբաղի թեմի առաջնորդը:

Յօդ. Է. «Մարիամ-Ղուկասեան» օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնն ընտրում է Շուշի քաղաքի, բոլոր եկեղեցիների ծխական ժողովից ընտրուած 10-ական պատգամաւորների խառն պատգամաւորական ժողովում, ընտրելով իւրաքանչիւր եկեղեցուկողմից երկու-երկու պատգամաւոր:

Յօդ. Ը. «Մարիամ-Ղուկասեան» օրիորդաց դպրոցի տեսուչը ընտրվում է նոյն դպրոցի հոգաբարձութեան կողմից:

Յօդ. Թ. «Մարիամ-Ղուկասեան» օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը, ինչպէս և դպրոցի տեսուչը, հաստատվում են Հայրապետական կոնդակով:

Յօդ. Ժ. Եղբարք Ղուկասեանների նուիրաբերած դրամի ամբողջ տոկոսները պիտի գործադրուին «Մարիամ Ղուկասեան» դպրոցի պահպանութեան՝ նորա գոյութեան ամբողջ ընթացքում, դպրոցի փակման դէպքում թե տոկոսները, թէ շինութիւնները պիտի յատկացուին Ղարաբաղի որևէ ազգային Աստուածահաճոյ հաստատութեան՝ վերապահելով «Մարիամ-Ղուկասեան» անունը,

առաջարկությամբ դպրոցի հոգաբարձության և վերին հաճությամբ ու հաստատությամբ Վեհափառ Հայրապետի, որը վերին հսկողն է ամբողջ նուիրաբերության նպատակի անշեղ գործադրության:

Յօդ. ԺԱ. Օրիորդաց «Մարիամ-Ղուկասեան» դպրոցի եկամուտները կազմելու են՝ ա) Պ. Պ. Ղուկասեանների Ս. Էջմիածնին նուիրած գումարի տոկոսները, բ) Ծուշի քաղաքի եկեղեցիների եկամուտներից նպաստը, գ) Ղուկասեան տոհմից կամ մասնաւոր անհատներից նուիրաբերութիւնները, դ) Պատահական մուտքեր:

Յօդ. ԺԲ. Եթէ Գ և Ե յօդուածների իմաստը ճշտութեամբ չհաստատուի՝ այս դէպքում նուիրաբերության էական պայմանները համարվում են խախտուած, և եղած նուիրաբերութիւնն անցնում է Պ. Պ. Պօղոս, Արշակ, Յակոբ և Աբրահամ Ղուկասեանների ժառանգորդներին»[419]:

1. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ

[419] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 974, թ. 14-15:

1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ա) Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1.1. ֆ. 7 (Երևանի թեմի հայոց եկեղեցական-ծխական դպրոցների տեսուչ), ց. 1, գ. 9:

1.2. ֆ. 27 (Բաքվի Հայոց մարդասիրական ընկերություն), ց. 1, գգ. 1, 29, 32, 35, 55, 84, 181, 236, 394:

1.3. ֆ. 28 (Կովկասի Հայոց բարեգործական ընկերություն), ց. 1, գգ. 2, 28, 92, 100, 101, 102, 106, 265, 269, 391, 850, 1004, 1005:

1.4. ֆ. 48 (Երևանի Հայոց թեմական վարչություն), ց. 1, գ. 305:

1.5. ֆ. 56 (Էջմիածնի Սուրբ Լուսավորչական Սինոդ), ց. 1, գգ. 78, 415, 2145, 2199, 2626, 3618, 3826, 7280, 7861, 8345, 8413, 10192, ց. 5, գ. 74, ց. 10, գգ. 883, 914, 921, ց. 15, գգ. 254, 280, 543, 620, ց. 17, գ. 46, 282, ց. 18, գգ. 286, 955, 1013:

1.6. ֆ. 57 (Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան), ց. 1, գ. 149, ց. 2, գգ. 297, 309, 346, 849, 905, 913, 932, 963, 974, 1003, 1021, 1039, 1553, 1590, 1613, 1830, 1851, 1902, 1908:

1.7. ֆ. 200 (Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարություն), ց. 1, գ. 2:

1.8. ֆ 227 («Մշակ» թերթի խմբագրություն), ց 1, գգ. 105, 159, 171, 174, 634, 716:

1.9. ֆ. 239 (Հայ փախստականների կազմակերպությունների գլխավոր խորհուրդ), ց. 1, գ. 26:

1.10. ֆ. 307 (Հայաստանի առաջին հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարություն), ց. 1, գ. 252:

1.11. ֆ. 319 (Դադյան Խաչիկ), ց. 1, գգ. 1, 169, 173, 175, 176:

1.12. ֆ. 332 (Աղանյան Գյուտ), ց. 1, գ. 879:

1.13. ֆ. 545, ց. 1, գ. 319:

1.14. ֆ. 1262 (Կովկասի փոխարքայի գրասենյակ), ց. 2, գգ. 287, 347:

բ) ՀՀ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ) արխիվ

1.15. Բ. Նավասարդյանի ֆոնդ, թ. 355, II բաժին:

1.16. Հ. Առաքելյանի ֆոնդ, թ. 796, 797, 1272:

2. ՏՊԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ա) հայերեն

2.1.Բարերարութիւնն այսպէս պետք է եւ Ջոն Տէնների, Շուշի, «Հայոց հոգևոր տեսչություն», 1886, 30 էջ:

2.2.Գանջեցեան Մ., Տոկոսաբեր աղիւսակ 10-ի (թումանի) վերայ, Շուշի, «Միրզաջան Մահտեսի Հակոբեանց», 1891, 47 էջ:

2.3.Գրացուցակ Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Շուշու գրադարանի, Շուշի, «Հայոց հոգևոր տեսչություն», 1891, 74 էջ:

2.4.Գրացուցակ Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Շուշու գրադարանի, Շուշի, «Հայոց հոգևոր տեսչություն», 1894, 70 էջ:

2.5.Գրացուցակ Շուշուայ հասարակաց ժողովարանի գրադարանի, Շուշի, «Բ. Տեր-Սահակյան», 1910, 77 էջ:

2.6.Թաղիադեան Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ.Ա, Կալկաթա, «Արարատյան ընկերություն», 1847, 382 էջ:

2.7.Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչ մեր օրերը (1794-1934), Եր., «Մելքոնյան ֆոնդ», 1934, 227 էջ:

2.8.Կանոնադրութիւն Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, Թիֆլիս, «Հովհաննես Մարտիրոսեանց», 1881, 17 էջ:

2.9.Կանոնադրութիւն Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, Թիֆլիս, «Մնացական Մարտիրոսեանց», 1895, 19 էջ:

2.10.Կանոնադրութիւն Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում, Թիֆլիս, «Հերմես», 1908, 23 էջ:

2.11.Կանոնադրութիւն Շուշուայ հոգեւոր դպրոցի, հաստատուած Մատթէոս կաթողիկոսի ամենայն հայոց հայրապետական Շուշուայ հայոց հասարակութեան անունով տուած կոնդակով դեկտեմբերի 4-ին 1859 թուին ի Ս. Էջմիածին համար 284, Շուշի, «Հայոց հոգևոր տեսչություն», 1894, 7 էջ:

2.12.Կանոններ Շուշուայ հայոց թեմական դպրանոցի հոգաբարձական ընտրութեան համար, Շուշի, «Հայոց հոգևոր տեսչություն», 1899, 2 էջ:

2.13.Կարգ Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրանոցի 75-ամեայ յոբելեանական տօնակատարութեան, Շուշի, «Բ. Տեր-Սահակեան», 1913, 5 էջ:

2.14.Կարգադրութիւն Ղարաբաղու Սուրբ տիրամայր Մարիամու օրիորդաց ուսումնարանի, Շուշի, «Հայոց հոգևոր տեսչություն», 1864, 8 էջ:

2.15.Համառօտ հաշիւ մտից և ծախուց թեմական դպրանոցի հայոց Շուշուայ վասն 1890-1891 և 1892 ամաց, Շուշի, «Հայոց հոգևոր տեսչություն», 1893, 1 թ.:

2.16.Համառօտ հաշիւ մտից եւ ծախուց Շուշու «Ս. Մարիամեան» հայոց օրիորդաց եկեղեցական-ծխական երկդասեան ուսումնարանի վասն 1894-95 դպրոցական ամի, Շուշի, «Միրզաջան Մահտեսի Հակոբեանց», 1895, 1 թ.:

2.17.Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.): Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Թ, Եր., «Մուղնի», 2001, 828 էջ:

2.18.Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967): Համահավաք ցանկ, Եր., «Ալ. Մյասնիկյանի անվան Հանրապետական գրադարան», 1970, 623 էջ:

2.19.Հաշիւ Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրանոցի հոգաբարձութեան 1889-1890 ուս. տարուայ համար, Շուշի, «Հայոց հոգևոր տեսչություն», 1890, 28 էջ:

2.20.Հաշուեցուցակ Ղարաբաղու Հայոց ազգային դպրոցաց վասն 1875, 1876, 1877, 1879 և 1880 ամաց, Շուշի, «Միրզաջան Մահտեսի Հակոբեանց», 1881, 17 էջ:

2.21.Ղարաբաղի Հայոց հոգեւոր թեմական դպրանոցի 75-ամեակը, Շուշի, «Բ. Տեր-Սահակեան», 1913, 98 էջ:

2.22.Ղարաբաղու տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացուիլը, Շուշի, «Հայոց հոգևոր տեսչություն», 1864, 53 էջ:

2.23.Մանդինեան Ս., Դպրոցական սահմանադրութիւն, Թիֆլիս, «Համբարձումեանց», 1875, 46 էջ:

2.24.Մանդինեան Ս., Համառօտ մանկավարժութիւն, Թիֆլիս, «Համբարձումեանց», 1878, 223 էջ:

2.25.Մանդինեան Ս., Հայելի դաստիարակութեան տղայոց, Թիֆլիս, «Ներսիսեան դպրոց», 1859, 156 էջ:

2.26.Մանդինեան Ս., Մանկավարժական տարակուսանքներ մեր մէջ, Թիֆլիս, «Համբարձումեանց», 1875, 73 էջ:

2.27.Մեր ծխական տարրական դպրոցներում պարապելու նպատակայարմար կարգը ու պարապմունքների արդիւնաւէտութեան անհրաժեշտպայմանները, Շուշի, «Բ. Տեր-Սահակեան», 1908, 48 էջ:

2.28.Յիշատակարան Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրանոցի, Շուշի, «Եղիսաբեթ Մ. Մահտեսի Հակոբեանց», 1901, 32 էջ:

2.29.Շուշի-Գանձակ ճանապարհի համառօտ հաշիւ: Յուլիսի 7-ից 1906թ. մինչեւ մայիսի 20-ը 1910թ. Շուշի, 25-ին մայիսի 1910, Շուշի, «Մելքում Բաբաջանեան», 1910, 61 էջ:

2.30.Պետրոսյան Հ., Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, հ. 1-3, Եր, «ՀՍՍՌ Պետգրապալատ», 1954, 1956, 1957, 687+746+623 էջ:

2.31.Տէր-Աւետիքեան Ն., Քնար խօսնակ, Շուշի, «Միրզաջան Մահտեսի Հակոբեանց», 1881, 36 էջ:

ա) ռուսերեն

2.32. Кавказский календарь на 1896.- Тифлис, 1895.

2.33. Кавказский календарь на 1915.- Тифлис, 1914.

2.34. Первая всеобщая перепись населения Российской империи.- СпБ, 1905.

3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) հայերեն

3.1.Աբրահամյան Հ., Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933), Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 2009, 224 էջ:

3.2. Աբրահամյան Հ., Արցախը 18-19-րդ դարերում, Եր., Հեղինակային հրատ., 2015, 424 էջ:

3.3.Անթանեսյան Վ., Միքայել Արամյանց, Եր., Հեղինակային հրատ., 2011, 112 էջ:

3.4. Ավագյան Ս., Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից, Եր., «Երևանի համալսարան», 1969, 231 էջ:

3.5. Ավագյան Ս., Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Եր., «Հայաստան», 1982, 106 էջ:

3.6. Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920թթ.), Եր., «Երևանի համալսարան», 1989, 288 էջ:

3.7. Ավագյան Ս., Արցախը հայ մշակույթի կարևորագույն օջախ, Եր., «Գիտելիք», 1991, 198 էջ:

3.8.Ավանեսյան Ա., Արցախի գիտակրթական համակարգ. կայացման ընթացք, զարգացման միտումներ, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2011, 304 էջ:

3.9.Ավանեսյան Ա., Հարությունյան Գ., Արցախի կրթական համակարգը, հ. Ա: Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2014, 480 էջ:

3.10. Բալայան. Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Եր., «Ամարաս», 2002, 408 էջ:

3.11.Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, «Սոնա» գրահրատարակչություն, 2012, 416էջ:

3.12. Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Եր., «Զանգակ», 2017, 560+32 էջ:

3.13.Բակուր, Շուշի բերդաքաղաքը (Պատմությունը մինչև 1920 թ.), Եր., «Երևանի համալսարան», 2000, 350 էջ:

3.14.Բաղդասարյան Ն., Վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը Ղարաբաղում 1813-1867թթ., Եր., «Անտարես», 2015, 256 էջ:

3.15.Բէկնազարեան Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1888, 143 էջ:

3.16.Գալստեան Ա., Պատմական համառօտ տեսութիւն Բագուայ Հայոց մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունէութեան, Բագու, «Սահակ Տեր-Հովհաննիսեան», 1891, 104 էջ:

3.17. Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Շուշիի ռեալականը, Եր., «Ամարաս», 2001, 208 էջ:

3.18. Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Արցախի դպրոցները հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Եր., «Զանգակ-95», 2005, 488 էջ:

3.19.Դավթյան Հ., Հայ գիրքը 1801-1850 թվականներին, Եր, «Հայ պետհրատ», 1967, 538 էջ:

3.20.Երկանյան Վ., Հայկական մշակույթը 1800-1917 թթ., Եր., «ՀՍՍՀ ԳԱ», 1982, 270 էջ:

3.21.Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905 թթ.), Եր., «ՀՍՍՀ ԳԱ», 1970, 309 էջ:

3.22.Զարբհանալեան Գ., Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, «Ս. Ղազար», 1883, 734 էջ:

3.23.Իսրայելյան Ռ., Հոդվածներ, ուսումնասիրություններ, ակնարկներ, Եր., «Սովետական գրող», 1982, 296 էջ:

3.24.Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. «անցյալը, ներկան և ապագան»: Միջազգային գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Եր., «Երևանի համալսարան», 2007, 588 էջ:

3.25.Լէօ, Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), Թիֆլիս, «Մնացական Մարտիրոսեան», 1911, 360 էջ:

3.26.Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիս, «Նվարդ Աղանեանց»,1914, 692 էջ:

3.27.Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., «Հայ պետհրատ», 1958, 255 էջ:

3.28.Խուդոյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920 թվականներին, Եր., «Լույս», 1987, 619 էջ:

3.29.Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1-2: Եր., 1956, 1960, 498+634 էջ:

3.30.Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ. Ա, Եր., «Առասպել Ինդեքս», 2011, 519 էջ:

3.31.Հարությունյան Գ., Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում, Ստեփանակերտ, «Ազատ Արցախ», 2000, 160 էջ:

3.32.Հարությունյան Գ., Արցախի թեմի լուսավորիչները, Ստեփանակերտ, «Ազատ Արցախ», 2002, 41 էջ:

3.33.Հարությունյան Գ., Արևելահայ դպրոցն ու մանկավարժական միտքը 19-րդ դարի 50-60-ական թվականներին, Եր., «Երևանի համալսարան», 1979, 106 էջ:

3.34.Հարությունյան Հր., Շուշի: Նորահայտ նյութեր քաղաքի պատմության մասին, Եր., «Նոյյան տապան», 2002, 76 էջ:

3.35.Հարությունյան Հր., Ղարիբյան Ի., Շուշի: XVIII-XIX դդ. Տապանագրեր, Եր., «Երևանի համալսարան», 2008, 300 էջ:

3.36.Հարությունյան Մ. Գ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2010, 160 էջ:

3.37.Հարությունյան Մ. Ա., Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009թթ.), Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2010, 232 էջ:

3.38.Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմությունը 19-րդ դարում, Եր., «Նաիրի» հրատ., երկրորդ բարեփոխված հրատարակչություն, 2010, 756էջ+40էջ:

3.39.Ղազիկեան Ա., Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, հ. Ա, պրակ Ա-Բ, Վենետիկ, «Ս. Ղազար», 1909, 1911, 2080 էջ, հ. Բ, պրակ Գ, Վենետիկ, «Ս. Ղազար», 1912, 306 էջ:

3.40.Մխիթարյան Մ., 19-րդ դարի 2-րդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Եր., «ՀՍՍՀ ԳԱ», 1976, 558 էջ:

3.41.Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Եր., «Հայաստան», 1985, 355 էջ:

3.42.Մկրտչյան Շ., Դավթյան Շ., Շուշի, Եր., «Գասպրինտ», 2008, 241 էջ:

3.43.Շուշիի ռեալական ուսումնարանի հիմնադրման 120-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Ստեփանակերտ, «Երևանի համալսարան», 2001, 133 էջ:

3.44.Շուշիի ֆենոմենը: Պատմաքաղաքագիտական հետազոտություն, «Աշխատանքային տետրեր», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, Եր., 2013, թթ. 1-2, 233 էջ:

3.45.Շուշին հայոց քաղաքակրթության օրրան: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., «Գիտություն», 2007, 370 էջ:

3.46.Պետրոսով Ս., Շուշի: Անվան և հողատարածքային հարցերի հիմնավորումներ, Եր., Հեղինակային հրատ., 2003, 124 էջ:

3.47.Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Եր., «Հայպետուսմանկհրատ», 1964, 445 էջ:

3.48.Սարգսյան Մ., Ակնարկներ Շուշիի քաղաքաշինության պատմությունից, Եր., 1996, 45 էջ:

3.49.Սարգսյան Սլ., Շուշի, Եր., «Անտարես», 2007, 40 էջ:

3.50.Սունդուկյան Գ., ԵԼԺ, հ. 3, Եր., «ՀՍՍՀ ԳԱ», 1952, 717 էջ:

3.51.Սևյան Վլ., Շուշի: Պատմական ակնարկ, Եր., «Հայաստան», 1991, 130 էջ:

3.52.Տեր-Գասպարյան Ռ., Շուշի, Եր., «ՀՀ ԳԱ», 1993, 125 էջ:

3.53.Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, Եր., «Մ. Վարանդեան», 1994, 378 էջ:

բ) ռուսերեն

3.54.Вантеева Н. В. Общественное призрение на Ставрополье и Кубани в XIX - начале XX в. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук.- Ставрополь, 2000, 250 с.

3.55.Власов П.В. Благотворительность и милосердие в России.- М.: Центрполиграф, 2001, 444 с.

3.56.Горбунова Е. Ю. Благотворительность в России и ее роль в общественно-культурной жизни на рубеже XIX- XX в. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук.- М., 1996, 235 с.

3.57.Дьячков С. Л. Благотворительные общественные организации российской провинции во второй половине XIX - начале XX веков: опыт изучения. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук.- Ставрополь, 2005, 278 с.

3.58.Мкртчян Ш., Давтян Щ., Шуши.- Е.: Амарас, 1997, 160 с.

3.59.Оспищева Л. Е. История благотворительных организаций Кубани: Конец XIX- начало XX века. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук.- Майкоп, 2000, 230 с.

3.60.Павлова И. А. Становление и развитие общественной благотворительности в Ставропольской губернии в XIX - начале XX вв. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук.- Пятигорск, 2004, 247 с.

3.61.Пашенцев Д. А. Благотворительная деятельность Русской Церкви во второй половине XIX - начале XX века. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук.- М., 1995, 188 с.

3.62.Покотилова Т. Е. Благотворительность в социальной истории дореволюционной России: мировоззрение и исторический опыт. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук.- М., 1998, 443 с.

3.63.Рылова Н. Е. Благотворительность на Дону во второй половине XIX начале XX вв. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук.- Ростов-на-Дону, 2004, 246 с.

3.64.Саркисян М. Из истории градостроительства.- Шуши, 1996, 50 с.

3.65.Соколов А. Р. Благотворительность в России как механизм взаимодействия общества и государства.- С. Петербург: Лики России, 2006, 648 с.

3.66.Тимченко В. А. Деятельность южнороссийских благотворительных обществ, заведений, братств и попечительств во второй половине XIX века. На материалах Дона, Кубани и Ставрополья. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук.- Новочеркасск, 2004, 256 с.

3.67.Ульянова Г. Н. Благотворительность в Российской империи, конец XVIII - начало XX века. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук.- М., 2006, 268 с.

3.68.Хлякин О. С. Благотворительность как общественное явление: социально-философские аспекты. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата философских наук.-Красноярск, 2004, 129 с.

4. ՀՈԴՎԱԾՆԵՐ

ա) հայ երեն

4.1.Աբրահամյան Հ., Շուշիի համայնապատկերը, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու», (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 2, Ստեփանակերտ, 2013, էջ 4-15:

4.2.Առաքելեան Հ., Ղարաբաղի թեմական դպրոցի յօբելեանը եւ «Դպրոցական ֆոնդը», «Մշակ», Թիֆլիս, 1913, հունիսի 18, էջ 1:

4.3.Բալայան Մ., Շուշիի վերածումը Ղարաբաղի հոգևոր կենտրոնի: - «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան»՝ Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2007, էջ 70-78:

4.4.Բեհբուդյան Ս., Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1, Եր., 1967, էջ 228-232:

4.5.Երկանյան Վ., Հայկական դպրոցը 1800-1870թթ., «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 10, Եր., 1970, էջ 31-45:

4.6.Հակոբյան Ռ., Կովկասի Հայոց բարեգործական ընկերության հիմնադրումը, «Ակունք», թիվ 3, Եր., 2013, էջ 31-41:

4.7.Հայրապետյան Թ., Թատերական կյանքը Շուշիում: - «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան»՝ Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2007, էջ 308-319:

4.8.Հասրաթյան Մ., Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու ճարտարապետությունը: - «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան»՝ Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2007, էջ 278-281:

4.9.Հարությունյան Մ. Ա., Էջեր Արցախի պարբերական մամուլի պատմագրությունից, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու», (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 1, Ստեփանակերտ, 2010, էջ 23-33:

4.10. Հարությունյան Մ. Գ., Արցախի մշակույթի ականավոր գործիչների լուսավորական գործունեությունը (1850-1920 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 3, Եր., 2005, էջ 159-166:

4.11. Հարությունյան Մ. Գ., XIX դարի 2-րդ կեսի և XX դարասկզբի Արցախի մշակույթի զարգացման առանձնահատկությունները: - «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան»: Միջազգային գիտաժողովի նյութեր,- Եր., Երևանի համալսարանի հրատ., 2007, էջ 88-95:

4.12.Ղանալանյան Տ., Հայ ավետարանականների գործունեությունը Արցախում, «Գլոբուս», թիվ 2, Եր., 2012, էջ 48-57:

4.13.Միրզոյան Է., Բաքվի Հայ Բարեգործական ընկերության պատմությունից, «Էջմիածին», թիվ Բ, 2013, էջ 77-84:

4.14.Քոչարյան Ա., Շուշիի Հայոց հոգևոր թեմական դպրոցի հիմնադրման 75-ամյակի տոնակատարությունները՝ ըստ արխիվային վավերագրերի, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1-2, Եր., 2012, էջ 208-213:

4.15.Օրդոյան Գր., Շուշիի Խանդամիրյան թատրոնը: - «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան»՝ Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2007, էջ 320-329:

բ) ռուսերեն

4.16.Арутюнян Г., Просвещения и школа в Шуши как фактор национально-культурного возрождения Восточной Армении: - Շուշիի ֆենոմենը: Պատմա-քաղաքագիտական հետազոտություն: «Աշխատանքային տետրեր»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, թիվ 1-2, Եր., 2013, էջ 103-119.

4.17.Арутюнян М. А., Издательское дело и периодика в Шуши как фактор развития армянской общественно-политической и научной мысли.– Շուշիի ֆենոմենը: Պատմաքաղաքագիտական հետազոտություն: «Աշխատանքային տետրեր», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, թիվ 1-2, Եր., 2013, էջ 65-80:

4.18.Арутюнян Ю., Иноязычные периодические издания Шуши как свидетельство доминирования армянской культуры до 20-х гг. XX века.– Շուշիի ֆենոմենը: Պատմա-քաղաքագիտական հետազոտություն:

«Աշխատանքային տետրեր», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, թիվ 1-2, Եր., 2013, էջ 92-102:

5. ԹԵՐԹԵՐ

5.1.«Ապառաժ», Շուշի, 1917-1919:

5.2.«Արձագանք», Թիֆլիս, 1893, հմ. 4, 1894, հմ. 1, 3, 10, 11, 12, 1897, հմ. 11-12, 1898, հմ. 2-3, 1899, հմ. 10, 1901, հմ. 7, 1902, հմ. 4, 1903, հմ. 4, 1904, հմ. 3, 5:

5.3.«Հորիզոն», Թիֆլիս, 1913, հմ. 237:

5.4.«Ղարաբաղ», Շուշի, 1911-1913 (հունվարի 22):

5.5.«Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1864 (մարտի 14, ապրիլի 4):

5.6.«Մշակ», Թիֆլիս, 1874, հմ. 52, 1879, հմ. 116, 1880, հմ. 165, 1881, հմ. 70, 1882, հմ. 156, 1887, հմ. 93, 1897, հմ. 15, 1909, հմ. 14, 1913, հմ. 131, 220, 222, 233, 237:

5.7.«Նեցուկ», Շուշի, 1917:

5.8.«Նոր կյանք», Շուշի, 1919:

5.9.«Փայլակ», Շուշի, 1917, հմ. 16, 18, 20:

6. ԱՄՍԱԳՐԵՐ

6.1.«Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, հմ. Բ:

6.2.«Արարատ», Ս. Էջմիածին, 1913, հմ 8-9:

6.3.«Արցախ», Շուշի, 1919:

6.4.«Գործ», Շուշի, 1882, հմ. 1:

6.5.«Լուսա», Թիֆլիս, 1905, հմ. 4:

6.6.«Կռունկ», Շուշի, 1898-1900:

6.7.«Կռունկ Հայոց աշխարհի», Թիֆլիս, 1860-1879:

6.8.«Հասկ», Բեյրութ, 1965:

6.9.«Տարազ», Թիֆլիս, 1891, հմ. 22, 1913, հմ. 7-8:

7. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

7.1.http: //www.shushi.org/education.php.